

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

2 (108). 2021



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿՈՒՆՔ ԶՈՒՆԻ ՊԱՐՏԿԵԼՈՒ  
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ  
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



ԵԱՏՍ միջկառավարական խորհրդի հերթական նիստը  
*Ձախից աջ.* Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյան,  
Բելառուսի Վարչապետ Ռոման Գոլովչենկո,  
Ղազախստանի Հանրապետության Վարչապետ Ասկար Մամին,  
Ղրղզստանի Հանրապետության Նախարարների գրասենյակի նախագահ  
Ռիլուգբեկ Մարիպով, Ռուսաստանի Դաշնության  
Կառավարության Նախագահ Միխայիլ Միշուստին,  
Ռիգբեկստանի Հանրապետության Վարչապետ Աբդուլա Արիպով  
Ղրղզստան, Չոլպոն-Աթա, 2021 թ. օգոստոսի 20



ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի  
և ԻԻՀ Նախագահ Էբրահիմ Ռայիսիի հանդիպումը  
Դուշանբե, 2021 թ. սեպտեմբերի 17



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

2 (108). 2021

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Տավարաժյան Գ. Վ.  
(նախագահ)
- Զիլինգարյան Գ. Ս.  
(գլխավոր խմբագիր)
- Ալթունյան Գ. Ռ.
- Այդինյան Ռ. Ա.
- Այվազյան Լ. Գ.
- Ասատրյան Զ. Գ.  
(գլխ. խմբագրի տեղակալ)
- Բրուտյան Կ. Ա.
- Դավթյան Ա. Մ.
- Մարգարյան Ռ. Պ.
- Մարտիրոսով Լ. Ա.
- Շահնագարյան Թ. Ն.
- Սարգսյան Ա. Գ.
- Սիմոնյան Ս. Վ.
- Ստեփանյան Հ. Լ.
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
- Քոչարյան Տ. Տ.
- Քոչունց Կ. Գ.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

*Յու. Մ. Մուվարյան*, Ջինված ուժերի դեկավարումը ՀՀ հանրային կառավարման համակարգում ..... 9

*Ա. Գ. Վաղարշյան, Ս. Հ. Բաղդասարյան*, Պատերազմական իրավիճակում պաշտպանության ռազմական ռազմավարական կառավարման սահմանադրական կարգավորման որոշ հիմնախնդիրներ ..... 22

*Ա. Հ. Մարգարյան*, Ջինվորական հաշվառումը որպես պաշտպանության ռազմավարական պլանավորման կարևոր գործիք ..... 35

*Ա. Գ. Դավթյան*, Պատերազմին պետության տնտեսության պատրաստման խնդիրները և դրանց հաղթահարման հնարավորությունները .. 46

### ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Ա. Գ. Այվազյան*, Հարավային Կովկասում հայկական պետության գոյության և նրա սահմանների վերաբերյալ հարևան պետությունների տեսականը (1918 թ.) ..... 57

### ՏԵՂԵԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Թ. Վ. Ջամդարյան*, Ներխուժումների հայտնաբերման համակարգի արդիականացումը գեներատիվ մոդելի կիրառմամբ ..... 69

### ՈՒՋՄԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Ա. Հ. Առաքելյան, Գ. Մ. Դուկասյան*, Պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարության մոդելավորում ..... 80

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

*Մ. Ն. Կարապետյան, Ա. Պ. Պետրոսյան*, ՀՀ ռազմաարդյունաբերության գարգացման ռազմավարական ուղղությունները ռազմական անվտանգության ապահովման համատեքստում . . . . . 95

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Ա. Ա. Սուջյան*, Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակը և ժողովրդագրական քաղաքականության որոշ հիմնախնդիրներ . . . . . 105

**ՈԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

*Ա. Գ. Գալստյան, Ս. Ս. Սահակյան, Տ. Ռ. Մարտիրոսյան*, Հայաստանի Հանրապետությունում ռազմաբժշկական փորձաքննության առաջնային օղակի գործունեության բարելավման անհրաժեշտության մասին . . . . . 118

**ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ*, Համարի բառարան . . . . . 126

**ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

- Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Լ. Ս. Արզումանյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան*, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, *Բ. Ն. Հարությունյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Գ. Սահակյան*, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, *Հ. Յ. Սալադյան*, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Սիսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Տ. Տ. Քոչարյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

*Գ. Վ. Տավարածյան*, զեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ,  
*Տ. Տ. Քոչարյան*, զնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
 ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ – ԱՌՀԻ-ի պետ,  
*Ա. Ա. Սուջյան*, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստագրի զնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Դ. Մ. Մանասյան*, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ,  
 Հ. Հ. Հովհաննիսյան, զնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

# «АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО  
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 2 (108). 2021

Издается 4 раза в год

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

*Таварацян Г. В.* (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),  
*Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Алтунян Г. Р.*, *Асатрян З. Д.* (зам. гл. редактора),  
*Брутян К. А.*, *Давтян А. М.*, *Кочарян Т. Т.*, *Кочунц К. Г.*, *Маргарян Р. П.*,  
*Мартиросов Л. А.*, *Саргсян А. Г.*, *Симонян С. В.*, *Степанян Г. Л.*,  
*Тер-Григорьянц Н. Г.*, *Шахназарян Т. Н.*

## СОДЕРЖАНИЕ

### ПОДГОТОВКА ГОСУДАРСТВА К ОБОРОНЕ

- Ю. М. Суварян.* Руководство Вооруженными силами в системе публичного управления РА ..... 9 (20)\*
- А. Г. Вагаршян, С. О. Багдасарян.* Некоторые проблемы конституционного регулирования военно-стратегического управления оборонной сферой в военное время ..... 22 (33)
- А. О. Саргсян.* Воинский учет как важный инструмент стратегического планирования обороны ..... 35 (44)
- А. Г. Давтян.* Проблемы подготовки экономики государства к войне и возможности их преодоления ..... 46 (55)

### ПОЛИТОЛОГИЯ

- А. Г. Авагян.* Взгляды соседних государств на существование армянского государства и его границы на Южном Кавказе (1918 г.) ..... 57 (67)

### ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

- Т. В. Джамгарян.* Модернизация системы обнаружения вторжений с применением генеративной модели ..... 69 (79)

### ВОЕННАЯ ЭКОНОМИКА

- А. А. Аракелян, Г. М. Гукасян.* Моделирование стратегии устойчивого развития сферы обороны ..... 80 (93)

### ОБОРОННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ

- М. Н. Карапетян, А. П. Петросян.* Стратегические направления развития военной промышленности РА в контексте обеспечения военной безопасности ..... 95 (104)

---

\*Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

## ДЕМОГРАФИЯ

*С. А. Сугжян.* Демографическая ситуация в Республике Армения и некоторые проблемы демографической политики . . . . 105 (117)

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

*С. Г. Галстян, С. С. Саакян, Т. Р. Мартиросян.* О необходимости улучшения деятельности первичного звена военно-медицинской экспертизы в Республике Армения . . . . . 118 (125)

## ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

*Д. С. Чилингарян и др.* Словарь номера . . . . . 126 (128)

## НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

*А. Г. Авагян, доктор исторических наук, профессор; Н. У. Аракелян, академик НАН РА; Л. С. Арзуманян, доктор филологических наук; Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор; В. М. Арутюнян, академик НАН РА; Г. Е. Багдасарян, академик НАН РА; С. А. Галстян, доктор филологических наук, профессор; С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор; Г. А. Геворкян, академик НАН РА; К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук; Г. С. Котанджян, доктор политических наук, профессор; Т. Т. Кочарян, доктор политических наук, профессор; А. А. Манташян, академик НАН РА; М. М. Маргарян, доктор политических наук, профессор; М. В. Маркосян, доктор технических наук, профессор; Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА; Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор; М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор; В. Г. Саакян, кандидат физико-математических наук; Р. А. Сафрастян, академик НАН РА; О. Я. Саядян, доктор географических наук, профессор; А. Г. Симонян, член-корреспондент НАН РА; А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор; Ю. М. Суварян, академик НАН РА*

## ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

*Г. В. Таварацян, генерал-майор, начальник НИУО МО РА; Т. Т. Кочарян, полковник, доктор политических наук, профессор, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке—начальник ИНСИ; С. А. Сугжян, кандидат географических наук, доцент, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА; Д. М. Манасян, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований НИУО МО РА; Г. О. Оганисян, полковник, кандидат военных наук, старший преподаватель Центра исследований стратегического лидерства и управления НИУО МО РА*

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**

DEFENSE-ACADEMIC JOURNAL,  
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 2 (108). 2021

Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Tavaratsyan G. V.* (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief),  
*Altunyan G. R., Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief),  
*Ayvazyan L. G., Brutyan K. A., Davtyan A. M., Idinyan R. A., Kocharyan T. T.,*  
*Kochunts K. G., Margaryan R. P., Martirossov L. A., Sargsyan A. G.,*  
*Shahnazaryan T. N., Simonyan S. V., Stepanyan H. L., Ter-Grigoryants N. G.*

**CONTENTS**

**PREPARATION OF THE STATE FOR DEFENSE**

- Yu. M. Suvaryan.* The Armed Forces leadership in the system of the RA public administration ..... 9 (21)\*
- A. G. Vagharshyan, S. H. Baghdasaryan.* Some issues of the constitutional regulation of the military-strategic management of the security sphere in the wartime ..... 22 (33)
- A. H. Sargsyan.* Military registration as a key instrument for defense strategic planning ..... 35 (44)
- A. G. Davtyan.* The problems of preparing the state's economy for war and the options to overcome them ..... 46 (56)

**POLITICAL SCIENCE**

- A. G. Avagyan.* The neighboring states' views on the existence of the Armenian State and its boundaries in the South Caucasus (1918) ..... 57 (68)

**INFORMATION SECURITY**

- T. V. Jamgharyan.* Modernization of intrusion detection system via the generative model ..... 69 (79)

**MILITARY ECONOMICS**

- A. H. Arakelyan, G. M. Ghukasyan.* Modeling of the strategy of the defense sphere sustainable development ..... 80 (94)

---

\* Numbers in brackets mean the page of the text in English.

## DEFENSE INDUSTRY

*M. N. Karapetyan, A. P. Petrosyan.* Strategic directions of the RA war industry development in the context of ensuring military security ..... 95 (104)

## DEMOGRAPHY

*S. A. Sujyan.* Demographic situation in the Republic of Armenia and some problems of demographic politics ..... 105 (117)

## MILITARY MEDICINE

*S. G. Galstyan, S. S. Sahakyan, T. R. Martirosyan.* On the necessity of improving the activities of the primary panel of military medical expertise in the Republic of Armenia ..... 118 (125)

## MILITARY TERMINOLOGY

*D. S. Chilingaryan and others.* Volume Dictionary ..... 126 (129)

## ACADEMIC-ADVISORY COUNCIL:

*A. G. Avagyan*, Doctor of History, Professor; *N. H. Arakelian*, Full Member, NAS, RA;  
*L. S. Arzumanyan*, Doctor of Philology; *G. Y. Baghdassarian*, Full Member, NAS, RA;  
*K. S. Danielyan*, PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan*, Doctor of Philology, Professor; *S. G. Galstyan*, Doctor of Medical Sciences, Professor;  
*H. A. Gevorkian*, Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan*, Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Harutyunyan*, Full Member, NAS, RA;  
*T. T. Kocharyan*, Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian*, Doctor of Political Sciences, Professor; *A. H. Mantashian*, Full Member, NAS, RA;  
*M. M. Margaryan*, Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan*, Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan*, Corresponding Member, NAS, RA;  
*E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Mirijanian*, Doctor of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan*, Full Member, NAS, RA;  
*V. G. Sahakyan*, PhD in Physical and Mathematical Sciences; *Hov. Y. Sayadyan*, Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan*, Corresponding Member, NAS, RA;  
*H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor;  
*Yu. M. Suvaryan*, Full Member, NAS, RA

## DEFENSE-ACADEMIC COUNCIL:

*G. V. Tavaratsyan*, MG, Head, NDRU, MOD, RA; *T. T. Kocharyan*, Col, Doctor of Political Sciences, Professor, Deputy Head in Education and Research – Head of INSS, NDRU, MOD, RA; *S. A. Sujyan*, PhD in Geography, Associate Professor, Col (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA;  
*D. M. Manasyan*, PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA; *H. H. Hovhannisyanyan*, Col, PhD in Military Sciences, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA



ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

ПОДГОТОВКА ГОСУДАРСТВА  
К ОБОРОНЕ

PREPARATION OF THE STATE  
FOR DEFENSE



## ԶԻՆՎԱԾ ՌԻԺԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

*ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության  
դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական  
գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար,  
«Հայկական բանակ» ՌԳՀ գիտախորհրդատվական խորհրդի անդամ*



### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի սկզբանե պետության ստեղծման կարևոր խնդիրներից էր կազմավորել լեգիտիմ ուժային կառույցներ, որոնց նպատակը երկրում անվտանգ միջավայրի պահպանումն է, ինչի շնորհիվ կարող են զարգանալ տնտեսությունը, մշակույթը, գիտությունը, բնակչության համար ապահովվել նորմալ կենսապայմաններ, իսկ պետության համար՝ կայացման և ամրապնդման իրական հնարավորություններ: Աշխարհի յուրաքանչյուր երկրի առումով անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների աղբյուր են հարևանների տարածքային նկրտումները, տարբեր պատճառներով սահմանների խախտումները, հետախուզական-դիվերսիոն ռիսկերը, բնակչության տարբեր խավերի և անհատների միջև բախումները սեփականության ու այլ շահերի համար: Նշված անվտանգային ռիսկերը կանխարգելելու և բնակչության համար խաղաղ միջավայր ապահովելու նպատակով ստեղծվում են պետության զինված ուժերը, անվտանգության ծառայությունները, ոստիկանությունը: Թվարկված կառույցները մշտապես կազմել են սկզբում պետական, իսկ այնուհետև հանրային կառավարման համակարգի կարևորագույն բաղադրիչները, իսկ դրանց գործունակության արդյունավետությունը պայմանավորել է պետության անվտանգության և հզորության մակարդակը:

Պետության զինված ուժերի առաքելությունը գերազանցապես նրա տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության ապահովումն է: ՀՀ Սահմանադրության (2015) 14.1 հոդվածում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերը ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»<sup>1</sup>: Նման բովանդակությամբ ձևակերպումներ հանդիպում են շատ այլ պետությունների հիմնական և զինված ուժերի մասին օրենքներում նույնպես: Սակայն զին-

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)»: «ՀՀ պաշտոնական տեղեկագիր»: Ե., 2019, էջ 16:

ված ուժերի գործունեության նպատակաւացությունը և արդյունավետությունը պայմանավորվում են բազմաթիվ գործոններով, որոնց թվում առանցքային են դրանց կառավարման կառուցակարգը և տեղը հանրային կառավարման համակարգում: Մինևույն ժամանակ չափազանց կարևոր է երկրում իրականացվող տնտեսական, գիտատեխնիկական, կրթական քաղաքականությունը, որը վիթխարի նշանակություն ունի զինված ուժերի նյութատեխնիկական և կադրային ապահովման գործում: Նրանց մարտունակության մակարդակի բարձրացման համար առանձնահատուկ նշանակություն ունի տնտեսություն–գիտություն կապը:

Ստորև պատմատրամաբանական և համեմատական վերլուծությամբ փորձ է արվել բնութագրելու բանակի կառավարման սահմանադրական, տնտեսական, գիտակրթական բարեփոխումների գերակայությունները:

### ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայկական պետականությունը, ինչպես հայտնի է, սկիզբ է առնում Ուրարտուից կամ Վանի թագավորությունից (մ. թ. ա. 9–6-րդ դարեր), որին հաջորդել է Երվանդունիների թագավորությունը (մ. թ. ա. 6–2-րդ դարեր): Զինված ուժերի կառավարման խնդիրը կոդիտարկվի նրանց հաջորդող Մեծ Հայքի, Բագրատունիների հայոց և Կիլիկյան Հայաստանի թագավորությունների օրինակով:

Նշված երեք հայկական պետականությունների ժամանակաշրջանում կարևորագույն դեր էր վերապահված զինված ուժերին: Բանակի առաքելությունը, ինչպես բոլոր պետություններում, երկրի տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության պաշտպանությունն էր: Մեծ Հայքի թագավորությունում (մ. թ. ա. 189 թ. – մ. թ. 428 թ.), ինչպես վկայում են պատմական աղբյուրները, հատկապես՝ «Ձորանամակը», բանակի ընդհանուր թվաքանակը շուրջ 120 հազար էր: Նա բաղկացած էր արքունական ու նախարարական զորագնդերից: Առաջինը, ներառյալ՝ Մաղխագին և Հայր Մարդպետին ենթարկվող հատուկ զինյալ զորախմբերը (10+15 հազար մարդ), եղել են 65 հազար, նախարարական զորագնդերի թվաքանակը՝ 84 հազար մարդ<sup>2</sup>: Երկրի ռազմական գործերը վարում էր սպարապետը, իսկ զորքերի գերագույն հրամանատարը թագավորն էր<sup>3</sup>:

Բագրատունյաց Հայաստանում, կամ Բագրատունիների թագավորությունում (862–1045 թթ.) սպարապետը պետության կարևորագույն պաշտոններից մեկն էր: Նա գլխավորում էր արքունական և իշխանների (մարզպետական) զորքերը: Պետության կազմի մեջ մտնող առանձին թագավորութ-

<sup>2</sup> Տես «Հայոց պատմություն», հ. 2 «Միջին դարեր» (IV դար–XVII դարի առաջին կես), գիրք 1 (IV դարի սկիզբ – IX դարի կես): Ե., 2018, էջ 401:

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 398:

յունները նույնպես ունեին իրենց սպարապետները<sup>4</sup>: Ջորջի ընդհանուր թիվը Քազիկ Ա-ի օրոք հասնում էր 100 հազարի, որից մարզպետական՝ 45 հազար մարդ, մնացածը՝ արքունական զորախմբի մարտիկներն էին<sup>5</sup>:


Կիլիկյան Հայաստանում մեծ իշխանապետության (1080–1198 թթ.) և թագավորության (1198–1375 թթ.) շրջաններում նույնպես բանակը բաղկացած էր արքունական և իշխանական (նախարարական) զորագնդերից: Այստեղ ստեղծվում էին զինված ուժեր նաև եկեղեցու հովանու ներքո, իսկ ծովափնյա սահմանների պաշտպանության համար՝ նավատորմ<sup>6</sup>: Ի դեպ, պատերազմական իրավիճակում կանոնավոր բանակի հետ միասին ճակատամարտերին բոլոր պետականությունների օրոք մասնակցել է նաև գյուղացիներից ու քաղաքաբնակներից կազմված աշխարհագորը:

Մեծ Հայքի և Բագրատունյաց Հայաստանի նման Կիլիկյան Հայաստանում ևս զինված ուժերի գերագույն հրամանատարը թագավորն էր, իսկ գլխավորը՝ գունդստաբլը (սպարապետը)<sup>7</sup>:

Այսպիսով՝ պատմական Հայաստանում զինված ուժերի կառավարման համակարգը կարող է ներկայացվել հետևյալ գծանկարով (*տես գծանկար 1*):

Գծանկար 1

ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Հայկական պետականության տարբեր փուլերում ընդհանուր դրական առանձնահատկությունն այն է, որ պահպանվել է զինված ուժերի կազմակերպման գլխավոր սկզբունքը՝ ըստ մակարդակների ուղիղ ենթակայությամբ:

<sup>4</sup> Տես «Հայոց պատմություն», հ. 2, գիրք 2 (IX դարի կես–XVII դարի առաջին կես): Ե., 2014, էջ 66–68:

<sup>5</sup> Տես նույն տեղում, էջ 70:

<sup>6</sup> Տես նույն տեղում, էջ 416–417:

<sup>7</sup> Տես նույն տեղում, էջ 415:

յունը, իսկ պետության մակարդակում՝ թագավոր–սպարապետ–նախարարներ (բղեշխներ, իշխաններ) հրամանատվության անմիջական շղթան թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական տարիներին: Բանակը մարտունակ կարող է դառնալ խաղաղ տարիներին, և այդ առումով այն մշտապես պետք է լինի պետության գլխավորի ուշադրության կենտրոնում, իսկ սպարապետը շարունակ զբաղվի զինված ուժերի կատարելագործման, զինամթերքի արդիականացման չափազանց կարևոր գործով: Այս առումով ուշագրավ է Մովսես Խորենացու գնահատականը՝ տրված բանակի վերագինման առումով Տիգրան Մեծի գործելակերպին, ինչը հաջողություններ էր բերել նրա ղեկավարությամբ գործող հայոց բանակին. «Հետևակ կռվողները ծիավոր դարձան, պարսերով կռվողներն հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը (զինվորներ, որոնք զրահներ կամ վահաններ չէին կրում – Յու. Սուվարյան) պատվեցին վահաններով և երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու»<sup>8</sup>:

Խիստ էական է նաև բանակի մարտունակության բարձրացման գործում տնտեսության և գիտակրթական համակարգի անընդհատ առաջընթացը, որին դեռ կանդրադառնանք:

#### ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ


Զինված ուժերի ամբողջությունը բարդ և խոշոր կառույց է՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով և կառավարման որոշակի աստիճանակարգով ու սկզբունքներով: Սույն հետազոտության մեջ մեր խնդիրը հանրային կառավարման համակարգում բանակի ղեկավարման սահմանադրական կառուցակարգի դիտարկումն է: Զինված ուժերին բնորոշ ենթակայական խիստ աստիճանակարգը և տարբեր մակարդակների հրամանատարների անձնական պատասխանատվության սկզբունքները ցանկալի, նույնիսկ անհրաժեշտ է, որ արտացոլվեն նաև պետության հիմնական օրենքում: Այս պահանջը հստակ կերպով իրագործվել է շատ երկրների, հատկապես՝ հետխորհրդային, բանակի ավանդույթ ունեցող, հիմնական օրենքներում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 87-րդ հոդվածն ամրագրում է, որ ՌԴ Նախագահը պետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, որն ըստ 83-րդ հոդվածի հաստատում է ՌԴ ռազմական դոկտրինը, նշանակում է և ազատում է ՌԴ Զինված ուժերի հրամանատարությանը<sup>9</sup>:

ՌԴ-ում, ըստ էության, գործում է զինված ուժերի կառավարման հետևյալ համակարգը (*տես գծանկար 2*):

<sup>8</sup> Մ. Խորենացի, Պատմություն Հայոց: Ե., 1968, էջ 111:

<sup>9</sup> Տես «Конституция Российской Федерации». М., 2006, сс. 22–23:

ՌԴ ԶՈՒ-ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ<sup>10</sup>



Նմանատիպ համակարգ կիրառվում է նաև Ուկրաինայի և Բելառուսի հանրապետություններում<sup>11</sup>:

2005 թ. ընդունված ՀՀ Սահմանադրությամբ նկարագրված նմանատիպ համակարգը ամրագրված էր իբրև Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կառավարման կառուցակարգ: Հայաստանի Հանրապետության Նախագահը ՀՀ Զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարն էր, նշանակում էր հրամանատարական կազմը, շնորհում զինվորական կոչումներ (հոդվածներ 55.12, 55.16)<sup>12</sup>:

Նորհրդարանական համակարգի արմատավորումից հետո փոխվեցին բանակի կառավարման սկզբունքները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (2015 թ.) պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը (հոդված 155.2), իսկ Զինված ուժերը կառավարության ենթակայության ներքո են (հոդված 155.1): Զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը Գլխավոր շտաբի պետն է, որը ոչ պատերազմական ժամանակ ենթակա է Պաշտպանության նախարարին (հոդված 155.3): Պատե-

<sup>10</sup> Տես «Структура Минобороны России». «Министерство обороны Российской Федерации (Минобороны России)» (<https://structure.mil.ru/structure/structuremorf.htm>):

<sup>11</sup> Տես Закон республики Беларусь «О вооруженных силах Республики Беларусь», 03.11.1992, № 1904-XII, ст. 9 (<https://pravo.by/document/?guid=3871&p0=V19201904>); Закон Украины «О вооруженных силах Украины», 06.12.1991, № 1934-XII ([https://kodeksy.com.ua/ka/o\\_vooruzhennyh\\_silah\\_ukrainy.htm](https://kodeksy.com.ua/ka/o_vooruzhennyh_silah_ukrainy.htm)):

<sup>12</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)»: «ՀՀ պաշտոնական տեղեկագիր»: Ե., 2005, էջ 44–46:

րազմի ժամանակ Ջինված ուժերի Գերագույն հրամանատարը Վարչապետն է (հոդված 155.4)<sup>13</sup>:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (հոդված 16.2) Ջինված ուժերի ղեկավարումն իրականացնում է ՀՀ Պաշտպանության նախարարը, բայց նույն հոդվածի 3-րդ կետով «զինված ուժերի անմիջական հրամանատարը զինված ուժերի գլխավոր շտաբի պետն է»: Այսպիսի ձևակերպումներով հստակ չէ, թե ով է պատասխանատվություն կրում բանակի մարտունակության վիճակի և մյուս խնդիրների պատշաճ իրագործման համար: Թեև ըստ հոդված 17-ի՝ Գլխավոր շտաբը պաշտպանության նախարարության ենթակա մարմին է, սակայն այդ պարագայում Գլխավոր շտաբի պետը պետք է գտնվեր նախարարի ենթակայության ներքո, մինչդեռ նույն այդ օրենքով այդպես չէ, և շտաբը գործում է որպես ինքնուրույն կառույց:

Ջինված ուժերին առնչվող լիազորություններ ունի նաև ՀՀ Նախագահը: Նա վարչապետի առաջարկությամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է Ջինված ուժերի և մյուս զորքերի բարձրագույն հրամանատարությանը, շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ (հոդված 133)<sup>14</sup>:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրվում է, որ «Յուրաքանչյուր նախարար ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը»<sup>15</sup>:

Ջինված ուժերի կառավարման ներկայացված սահմանադրական դրույթների բազմությունից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. ՀՀ Սահմանադրության 152.3-րդ հոդվածը Պաշտպանության նախարարի առումով չի կարող գործել, քանի որ զինված ուժերի կառավարման լիազորությունները ապակենտրոնացված են, ինչը հանգեցնում է նաև երկրի պաշտպանության պատասխանատվության սահմանակարգի անորոշության (գծանկար 3): Կառավարման տեսության մեջ և պրակտիկայում պահանջվում է հստակ կերպով սահմանազատել լիազորությունների, խնդիրների և պատասխանատվության շրջանակները: Լիազորությունները և խնդիրները փոխանցվում են պաշտոնին, այնուհետև՝ այն զբաղեցնող անհատին, որը պարտավորվում է կատարել սահմանված խնդիրները ու կրել պատասխանատվություն դրա համար: Իսկ լիազորությունները կազմակերպության ծրագրված խնդիրներն իրագործելու համար նրա ռեսուրսների օգտագործման և աշխատողների գործունեությունն ուղղորդելու (համակարգելու) սահմանափակ իրավունքն է<sup>16</sup>: Այն պահից, երբ անհատը նշանակվում է որևէ պաշտոնում, նա ստանձնում է պատասխանատվություն վերապահված լիա-

<sup>13</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)»: «ՀՀ պաշտոնական տեղեկագիր»: Ե., 2019, էջ 62–63:

<sup>14</sup> Տես նույն տեղում, էջ 56:

<sup>15</sup> Տես նույն տեղում, էջ 62:


<sup>16</sup> Տես, օրինակ, *М. Мескон, М. Альберт, Ф. Хедоури*. Основы менеджмента. М., 2000, сс. 308–310:



գորություններով իրագործելու սահմանված խնդիրները: Ուստի բովանդակային ու ժամանակային առումներով խիստ հստակ ու որոշակի պետք է լինեն թե՛ խնդիրները, թե՛ պաշտոնյայի, այսինքն՝ լիազորված անձի, պատասխանատվության շրջանակները, հակառակ պարագայում առաջանում է վերջինիս՝ կառավարչական գործընթացի կարևորագույն բաղադրիչի անորոշություն, ինչը անխուսափելիորեն հանգեցնում է կառավարման ցածր արդյունավետության:

*Գծանկար 3*

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՌԻԺԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՂ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ



2. Չի ապահովվում Զինված ուժերին բնորոշ ըստ աստիճանակարգության հրամանների և պատասխանատվության շղթան. Գլխավոր շտաբի պետը բոլոր իրավիճակներում՝ իբրև գործողությունների ռազմավարական և մարտավարական պլանավորման մարմնի պատասխանատու, ինչը հայտնի է դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու (մ.թ.ա. 356–323 թթ.) ժամանակներից, պետք է ենթարկվի պաշտպանության ոլորտի գլխավոր պատասխանատուին՝ նախարարին, վերջինս էլ՝ գերագույն հրամանատարին:


3. Պաշտպանության գործն սկսվում է խաղաղ ժամանակներից, բանակի մարտունակությունը պետք է ապահովվի այդ ընթացքում, ուստի կառավարման մարմինների, հատկապես՝ գլխավոր, լիազորությունները տարբերակել ըստ խաղաղ և պատերազմական իրավիճակների արդյունավետ չէ: «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որն ընդունվել է 2017 թ. նոյեմբերի 15-ին, պարզաբանվում է «պաշտպանություն» տերմինի իմաստը. «ՀՀ տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ

և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրություն»<sup>17</sup>: ՀՀ պաշտպանության կազմակերպման վերաբերյալ 5-րդ հոդվածում ներառված են 17 միջոցառումներ, որոնք պետք է իրագործվեն խաղաղ ժամանակներում: Դրանց թվում են ռազմական սպառնալիքի կանխատեսումը, գնահատումը, կանխարգելման միջոցառումների պլանավորումը, բարձր մարտունակություն և պատրաստվածություն ունեցող Ջինված ուժերի, մյուս զորքերի, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը, ռազմական գործի, ռազմական գիտության և ուսուցման կազմակերպումը, անհրաժեշտ քանակությամբ զենքի ու ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի, պարենի և այլ նյութական պաշարների կուտակումը<sup>18</sup>:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ նշենք, որ նպատակահարմար է վերանայել կամ բարեփոխել երկրի պաշտպանության կառավարման վերաբերյալ օրենսդրական բազան և գործադրել Ջինված ուժերի ղեկավարման հետևյալ համակարգը (գծանկար 4):

Գծանկար 4

ՀՀ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ  
(ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԿԱՐԴԱԿ)



<sup>17</sup> Տես ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Պաշտպանության մասին» հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդ. 3.1 (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150214>):

<sup>18</sup> Տես նույն տեղում, հոդ. 5:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Իրենց գլխավոր առաքելությունն իրագործելու համար զինված ուժերը յուրաքանչյուր երկրում վիթխարի կառույց են և հանդես են գալիս որպես արտադրանքի, տեխնոլոգիաների, գիտական գաղափարների, որակավորված կադրերի խոշոր սպառող: Սակայն բանակը սովորական սպառող չէ, այլ այնպիսի կառույց է, որը պայմանավորում է պետության անվտանգային միջավայրը, ուստի նա թելադրող կամ պատվիրատու սպառող է, որի պահանջած արտադրանքը, կադրերը, տեխնոլոգիական լուծումները պետության համար ունեն բախտորոշ նշանակություն:

Ավելին, 21-րդ դարում բանակի մարտունակությունն զգալիորեն կախված է պետության տնտեսության, կրթության, գիտության զարգացման աստիճանից և դրանց նվաճումների կիրառման հնարավորություններից:

Պատմական աղբյուրների վկայությամբ՝ հին և միջնադարյան Հայաստանում գիտակցում էին, որ «երկրի տնտեսական առաջընթացը բանակը զինելու, նյութապես ապահովելու ամուր հիմք է ստեղծում», «հայոց զորքի համար զինահանդերձանքի արտադրությունը խթանում է արհեստագործության զարգացումը»<sup>19</sup>:

Միաժամանակ ակնհայտ է, որ իբրև պահանջարկ ստեղծող՝ բանակը նաև խթանում է առաջարկը, աշխատատեղերի առաջացումը: Սակայն զինված ուժերի մարտունակության առումով չափազանց կարևորվում են թողարկվող արտադրանքի որակը, կիրառվող տեխնոլոգիաների արդիականությունը, կրթության ու գիտության միջազգային մրցունակության մակարդակը և նպատակասլացությունը: Այս առումով չափազանց կարևորվում է երկրում իրագործվող տնտեսական և գիտակրթական քաղաքականությունը: Սա է նաև մեկն այն պատճառներից, որ անհրաժեշտ է դարձնում պետության ղեկավարի Գերագույն գլխավոր հրամանատար լինելը նաև խաղաղ պայմաններում, երբ տնտեսական, հատկապես՝ գիտատեխնիկական, նպատակասլաց զարգացմամբ կարող է ապահովվել զինված ուժերի բարձր մարտունակությունը: Այս գործում կարևորվում է նաև պաշտպանության նախարար–գլխավոր շտաբի պետ երկյակի ամենօրյա զուգակցված հոգսը՝ ըստ անհրաժեշտության պատվիրելու տնտեսությանը՝ ռազմաարդյունաբերական համալիրին, գիտությանը և կրթական հաստատություններին այն ամենը, ինչ անհրաժեշտ է զինված ուժերի կարողությունների աճին: Աշխարհաքաղաքական և մեր տարածաշրջանի ահագնացող մարտահրավերների պայմաններում բանակի մարտունակության բարձրացման գերխնդիրը համազոր է հայ ժողովրդի վաղնջական հողատարածքներում հայոց պետականության պահպանությանը և զարգացմանը: Այդ առումով ստորև հակիրճ կդիտարկենք իրականացվող տնտեսական, գիտատեխնիկական և կրթական քաղաքականության որոշ ցուցանիշներ ու դրանց հրատապ փոփոխության գերակայությունները:

<sup>19</sup> Տես «Հայոց պատմություն», հ. 2, գիրք 2, էջ 71:

Տնտեսական իրական քաղաքականության արդյունքներն արտացոլվում են երկրի համախառն ներքին արդյունքի և արտահանման կառուցվածքում, որն արտահայտում է թողարկված արտադրանքի տեսականին, դրա տեխնոլոգիական մակարդակը և մրցունակությունը:

Ցավոք, ՀՀ-ում համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքը, որը, ի թիվս վերը նշվածի, նաև բովանդակում է իրական տնտեսության և ծառայությունների ոլորտի զարգացման ուղղությունները և հիմնական արդյունքները, ինչպես նաև արտահանման կառուցվածքը նպաստավոր չեն բանակի խնդիրների լուծման առումով: Տնտեսական զարգացման որակի առումով իմ որոշ հրապարակումներում<sup>20</sup> արծարծել եմ տնտեսական քաղաքականության խնդիրները, այստեղ անհրաժեշտ եմ համարում կրկնել որոշ դրույթներ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տեղեկություններով՝ 2017–2018 թվականներին\* ՀՆԱ-ի կառուցվածքում տիրապետող է այն ոչ դրական միտումը, ըստ որի հարաբերաբար ավելի արագ են աճում ոչ թե իրական տնտեսության ու գիտատար արտադրանք թողարկող ճյուղերը, այլ առևտրի, կացության և հանրային սննդի, զվարճությունների ոլորտները: ՀՆԱ-ում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը 11 % է, գյուղատնտեսությանը՝ 14-15, ծառայություններինը՝ ավելի քան 25 %: Արդյունաբերության ճյուղային կառուցվածքում հանքագործական և բաց հանքերի շահագործման ոլորտի բաժինը 15,5 % է, մշակող արդյունաբերությանը՝ 69,8 %, որում սննդի արտադրության տեսակարար կշիռը գերակշռող է՝ 63,3 %, իսկ թեթև արդյունաբերությանը՝ 4,6, մեքենաշինական արտադրանքինը՝ 2,3, քիմիական և դեղագործական արտադրությունների բաժինը՝ 1,9 %: Ուստի զուտ գիտատար արտադրանքի տեսակարար կշիռը խիստ և մտահոգիչ ցածր է՝ 4,2 %:

ՀՆԱ-ի նման կառուցվածքը հանգեցրել է նաև աշխատատեղերի, նույնն է որ՝ կադրային ներուժի նմանօրինակ կազմի, իսկ վերջինիս արծագանքով դեֆորմացվել է կրթության բոլոր մակարդակներում (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա կամ դոկտորանտուրա) կադրերի պատրաստման կառուցվածքը: Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի շրջանավարտների ընդհանուր թվում հումանիտար մասնագիտություններով կրթություն ստացածների տեսակարար կշիռը 2017–2018 թթ. հասել է ավելի քան 64 %-ի: Վիճակը մխիթարական չէ գիտական աստիճանաշնորհման բնագավառում: Գիտական աստիճան հայցողների, ասպիրանտուրայում սովորողների ընդհանուր թվում գերակշռում են իրավաբանական, տնտեսագիտական և մյուս հումանիտար մասնագիտությունները, փոքրաթիվ են ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական՝ տեխ-

<sup>20</sup> Տես Յու. Մ. Սուվարյան, Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները: «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, հմ. 2, *նույնի*՝ Կառավարման տեսության արդի հիմնախնդիրներ: Ե., 2020, էջ 152–161:

\* 2019–2020 թթ. ցուցանիշները չեն դիտարկվում համավարակի (COVID-19) և արցախյան 3-րդ պատերազմի բացասական ազդեցությունների պատճառով:

նուղղակական փոփոխությունների ներուժ ապահովող մասնագիտություններով գիտական աստիճանի ձգտողները: Ակնհայտ է, որ ռազմավարական առումով տնտեսության և կրթության նման դեֆորմացված կառուցվածքը նպաստավոր չէ աշխարհում ընթացող տեխնոլոգիական հեղափոխության ներկա փուլում մեր երկրի դիրքավորման, տնտեսության առաջատար ճյուղերի զարգացման ապահովման և, անշուշտ, Զինված ուժերի մարտունակության բարձրացման առումով:

Գիտատեխնիկական քաղաքականությունը վիթխարի նշանակություն ունի տնտեսության նորամուծական զարգացման և, որ հատկապես կարևոր է, երկրում անվտանգային միջավայրի ստեղծման համար: Գիտության զարգացումը, մասնավորապես՝ հիմնարար ուղղություններով, ընթանում է ներհատուկ օրինաչափություններով, սակայն առանց ֆինանսական, տնտեսական և խթանիչ նախադրյալների այն կարող է դանդաղել, ու գիտատեխնիկական առաջընթացը չի կարող կատարել իր առաքելությունը՝ երկրի տեխնոլոգիական վերելքի և նորաստեղծական զարգացման ապահովումը: Ահա թե ինչու անհրաժեշտ է գիտական ներուժի պահպանման երկար ժամանակ շարունակվող քաղաքականությունից աստիճանաբար անցնել ակտիվ գործողությունների՝ գիտական կազմակերպությունների տեխնոլոգիական վերելքին առնչվող հատվածի հետազոտությունները կազմակերպել պատվերային սկզբունքով՝ նպատակ ունենալով ռազմաարդյունաբերական ուղղությունների զարգացման գիտական ապահովումը\*։ Այդպիսով կակտիվանա տնտեսություն–գիտություն կապը, որը վերջին տարիներին շատ թույլ է կամ անգամ բացակայում է տնտեսության վերը նշված կառուցվածքի գիտության համար աննպաստ փոփոխությունների պատճառով: Եթե ՀՆԱ-ի կառուցվածքում գերակշռում են ծառայությունների ոլորտի և սննդի արդյունաբերության ճյուղերը, որոնք հարաբերաբար պակաս գիտատար են, ապա գիտական հետազոտությունների արդյունքները և տնտեսության ծավալման ընթացքը միմյանց քիչ են առնչվում, գիտական արտադրանքի նկատմամբ պահանջարկը նվազում է, մինչդեռ հակառակ պարագայում հետազոտական աշխատանքը կարող է խթանվել՝ դրա նկատմամբ առաջարկի աճման շնորհիվ: Տնտեսություն – գիտություն առնչությունների ակտիվացումը կնպաստի ժամանակակից և հեռանկարային տեխնոլոգիական ուղղությունների զարգացմանը, որոնք հնարավորություն կընձեռեն քաղաքացիական նախանշանակման միջազգային շուկայում մրցունակ արտադրանքի հետ մեկտեղ թողարկել նաև անվտանգային նշանակության, Զինված ուժերի մարտունակության բարձրացմանը նպաստող ապրանքատեսակներ\*\*։ Իսկ գիտական

\* Ի դեպ, սկսած դեռևս Անգլիայում 18-րդ դարում տեղի ունեցած արդյունաբերական հեղափոխության ժամանակներից՝ գիտության զարգացման պատահական-հավանական սկզբունքը համարվել է դրա կազմակերպման նպատակային-ծրագրային կառուցակարգերով, որոնք առավել ընդլայնվել են 20-րդ դարի երկրորդ կեսում և 21-րդ դարում: Ուստի մեր խնդիրը ժամանակին համընթաց քայլերն են:

\*\* Տնտեսության և գիտատեխնիկական քաղաքականության ծրագրված կապերի շնոր-

կազմակերպությունների գործունեության գնահատականը, միջազգային հրապարակումներից առաջ, կհանդիսանա երկրի տնտեսության, մշակույթի զարգացման և անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներում եղած ավանդը: Այս դրույթի հիմնավորումը նաև այն է, որ ի սկզբանե գիտությունը զարգացել է ոչ միայն իր ամբողջականության ապահովման, բնության և հասարակության զարգացման օրինաչափությունները բացահայտելու, այլ առաջին հերթին՝ հանրությանը օգտակար լինելու համար:

հիվ 20-րդ դարի 50–80-ական թվականներին հզոր վերելք ապրեցին Հայաստանի գիտությունը, էլեկտրատեխնիկական, գործիքաշինական, հաստոցաշինական, քիմիական արտադրությունները, էականորեն աճեց պահանջը բարձր որակավորման ճարտարագետների, ֆիզիկոսների, քիմիկոսների և ճշգրիտ գիտությունների այլ մասնագետների նկատմամբ: Իսկ հանրապետության արդյունաբերության արտադրանքի ծավալում մեքենաշինության տեսակարար կշիռը 1985 թ. կազմել էր 30,3, քիմիական արդյունաբերությանը՝ 6,5, թեթև և սննդի արդյունաբերությանը, համապատասխանաբար, 24,4 և 17,8 տոկոս (տես *Յ. Մ. Տսվարյան*. Управление ростом производительности труда в промышленности. Е., 1987, сс. 108–109), այսինքն՝ զուտ գիտատար արտադրանքի բաժինը ընդհանուր ծավալում էական էր (36,8 %):

## РУКОВОДСТВО ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ В СИСТЕМЕ ПУБЛИЧНОГО УПРАВЛЕНИЯ РА

*Յ. Մ. ՏՍՎԱՐՅԱՆ, ակադեմիկ ՀԱՆ ՐԱ, դոկտոր էկոնոմիկական գիտությունների, պրոֆեսոր, ակադեմիկ-սեկրետար Օտտեմենտի արմենաբանության և սոցիալական գիտությունների ՀԱՆ ՐԱ, շրջանակային խորհրդի անդամ, ՎՊՄՀ «Այկաքան Բանք»*

### РЕЗЮМЕ

В исторической Армении сохранился главный принцип организации Вооруженных сил: прямая подчиненность по уровням, а в масштабе государства – непосредственная цепочка передачи команд царь – спарпет (главнокомандующий) – нахарары (бдешхи, князья) как в мирное, так и в военное время. По Конституции РА 2015 г. и принятому в 2017 г. Закону РА «Об обороне» предусмотрено правовое регулирование, согласно которому полномочия по управлению ВС децентрализованы, что приводит к неопределенности института ответственности за оборону страны, к неоправданной дистанцированности задач безопасности в мирное и военное время.

В связи с этим предлагается вариант конституционного реформирования системы управления ВС РА, при котором обеспечивается цепочка прямого подчинения руководитель государства высшего уровня (Премьер-министр РА) – Министр Обороны – командиры соединений. Подчеркивается важная роль такой политики в сферах экономики, науки и техники и образования, которая была бы нацелена на

инновационное и технологическое развитие хозяйства, упрочение его связи с наукой, обеспечение наряду с производством конкурентоспособной на международном рынке продукцией гражданского назначения также производства продукции безопасностного назначения, необходимой для повышения боеспособности и боевого потенциала ВС.

## THE ARMED FORCES LEADERSHIP IN THE SYSTEM OF THE RA PUBLIC ADMINISTRATION

*Yu. M. SUVARYAN, Full Member, NAS, RA, Doctor of Economics, Professor,  
Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences, NAS, RA,  
Member, Academic-Advisory Council, "Haikakan Banak" DAJ*

### SUMMARY

In historical Armenia, the main principle of the organization of the Armed Forces has been preserved: direct subordination by levels, and on the state scale – a direct chain of command transmission “King – Sparapet (Commander-in-Chief) – Nakharars (Bdeshkhs (Viceroys), Ishkhans (princes))” both in peacetime and wartime. According to the RA Constitution of 2015 and the RA Law “On Defense” adopted in 2017, legal regulation is provided for, according to which the authorities to control the Armed Forces are decentralized, which leads to the uncertainty of the institution of responsibility for the country's defense, to unjustified distancing from security concerns in peacetime and wartime.

In these terms, an option for the constitutional reforms of the RA Armed Forces' control system is proposed, in which a chain of direct subordination “head of state at the highest level (the RA Prime Minister) – Minister of Defense – Commanders of formations” is ensured. The article highlights the key role of such policy in the spheres of economy, science and technology, as well as education, which would be targeted at the innovative and technological development of the economy, strengthening its ties with the science, and ensuring the production of security goods necessary to raise the combat effectiveness and combat potential of the Armed Forces along with the production of the civilian goods competitive on the international market.

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՈԱԶՄԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ\*

*Ա. Գ. ՎԱՂԱՐՇՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր,  
ԵՊՀ պրոֆեսոր, Ս. Հ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ, իրավաբանական  
գիտությունների թեկնածու, Հայ-ռուսական համալսարանի  
իրավաբանական վարչության պետ, Հայ-ռուսական  
համալսարանի դասախոս*



Ռազմավարական պետական ռազմական կառավարումն իրականացվում է երկու տարբեր պայմաններում՝ սովորական՝ խաղաղ, և արտակարգ՝ պատերազմական: Տվյալ առանձնահատկության հետ հաշվի են նստում ռազմական արվեստի գրեթե բոլոր ոլորտները (ռազմավարությունը, օպերատիվ արվեստը, պետության պաշտպանության

գործառնությունների տեսությունը<sup>1</sup>), պաշտպանության ոլորտին առնչվող այլ գիտական ուղղություններ:

Ռազմական իրավունքի տեսությունն անխուսափելիորեն հետևում է ռազմական ռազմավարության հիմնադրույթներին: Հետևաբար գիտության այս ոլորտը ևս պետության պաշտպանության խնդիրն իմաստավորում է երկու փուլերով՝ մինչպատերազմական-նախապատրաստական և պատերազմական:

Պաշտպանական հարաբերությունները կարգավորող օրենսդրության մեջ տարբերակված կարգավորումը ակնհայտ երևացող փաստ է:

Ցանկացած պետությունում դրա իրավական հիմքերը ամրագրված են Սահմանադրությամբ: Այդ կարգավորման ուժով պետական կառավարումը տրոհվում է երկու մասի. կա՛ն կարգով իրականացվող գործընթաց, այն է՝ առօրեական (սովորական, ընթացիկ) և դրանից շեղվող՝ պատերազմական, կա՛ն արտակարգ կառավարման ձևեր, հաստատություններ, ընթացակարգեր:

\* Սույն հոդվածը, որը ներկայացնում է տվյալ պրոբլեմին առնչվող իրավակարգավորումների մասնագիտական վերլուծություն, հրապարակվում է քննարկման կարգով:

<sup>1</sup> Երկրի պաշտպանության գործառնության բովանդակության, իրականացման միջոցների, խաղաղ և պատերազմի ժամանակի միջոցառումների մասին հանգամանորեն տես Վ. Ն. Խրոպանյուկ, Պետության և իրավունքի տեսություն: Ե., 1997, էջ 199–202, նաև՝ *И. В. Дойников*. Теория государства и права. «ЮНИТА 2. Государственный аппарат. Типы и формы государства. Государство в политической системе общества. Правовое государство». М., 1999, сс. 34–35:



Կարելի է եզրակացնել, որ խաղաղ շրջանում ռազմական կառավարման սկզբունքներն առանց էական փոխակերպման հարմարեցվում են պետական կառավարման արդի ժողովրդավարական սկզբունքներին: Սակայն պատերազմի ազդարարման պահից դրա ազդեցության վեկտորը շրջվում է հակառակ ուղղությամբ, այսինքն՝ պետական կառավարման ընդհանուր համակարգը փոխակերպվում է՝ վերակառուցվելով ըստ ռազմական կառավարման սկզբունքների: Պետական կառուցակարգի նման փոխակերպումը խիստ անհրաժեշտ է, հակառակ դեպքում պատերազմական գործողություններում հաջողությունները երաշխավորված չեն: Համաշխարհային սահմանադրական պրակտիկայում նման փոխակերպման կարգի և սկզբունքների հարցում չկա միասնություն: Ամեն պետություն որդեգրել է ընդհանուր պետական համակարգի փոխակերպման, պատերազմական ժամանակաշրջանում կառավարման իր կառուցակարգը, որի առանձնահատկությունները պայմանավորված են տվյալ պետության կառավարման ձևով, սահմանադրական կարգավորիչ սահմանակարգերով ու հաստատություններով, պատմական զարգացման օրինաչափություններով, ռազմական ռազմավարական կառավարման ու պատերազմելու պատմական փորձով, աշխարհաքաղաքական առանձնահատկություններով: Պատերազմական շրջանում կառավարման սահմանադրական առանձնահատկությունների հիմքում կարող է դրված լինել յուրահատուկ ռազմաքաղաքական գաղափարախոսությունը: Այսպես. Չինաստանը և Իրանը, ունենալով յուրահատուկ ձևերի պետական կառավարում, չունեն ռազմական փոխակերպումների հատուկ ընթացակարգեր, որովհետև նրանց հասարակությունների գաղափարական առանձնահատկությունների բերումով (մարքսիզմ, մահմեդականություն), այն ռազմավարական-քաղաքական գաղափարախոսության շնորհիվ, որը դրված է նրանց սահմանադրությունների հիմքում, պետությունն ի սկզբանե կառուցվել է կենտրոնացածության սկզբունքով, իսկ նման կազմակերպվածքն ավելի է հարմարեցված ռազմական ռազմավարական կառավարման խնդիրների լուծմանը, քան իշխանությունների բաժանմամբ գործող պետությունների կառուցակարգը: Որպես օրինաչափություն՝ նախագահական հանրապետություններում, ինչպես նաև սահմանադրական միապետություններում սահմանադրությունները պատերազմական ժամանակաշրջանում ռազմական ռազմավարական կառավարման լիազորությունները կենտրոնացնում են նախագահի (կամ միապետի) ձեռքում, բայց՝ խորհրդարանի վերահսկողությամբ: Սակայն խորհրդարանական հանրապետություններում այս հարցում առաջանում են որոշակի խնդիրներ՝ կապված պատասխանատու կառավարման, վարչապետի ժամանակավոր պաշտոնավարման, կառավարության կուսակցականացվածության հետ և մի շարք այլ պատճառներով:

Ուստի պարզ է, որ պատերազմի ժամանակաշրջանում փոխակերպման սահմանադրական ընթացակարգերը, կամ ռազմական կառավարման արտակարգ համակարգը, ամեն մի պետությունում ուրույն են, մյուսներից տարբերվող: Համաշխարհային պրակտիկայում այս հարցում միասնական է

միայն այն, որ գրեթե բոլոր պետությունների սահմանադրություններով ամրագրվում են փոխակերպման ձևերը:

«Հ-ի համար այս խնդիրը շատ կարևոր է, քանի որ անկախության առաջին շրջանում հանրապետությունը գտնվել է չհայտարարված իրական պատերազմի վիճակում, մինչ հիմա հրատապ է Արցախի Հանրապետության պաշտպանության խնդիրը, նոր պատերազմները կանխատեսելի են, իսկ մեր աշխարհաքաղաքական կացությունը բավական բարդ, խճճված ու ծանր է: Հետևաբար պետական համակարգը կերտելիս ամխուսափելիորեն պետք է սահմանադրական կարգավորման կառուցակարգում նախատեսվեն արտակարգ-ռազմական կառավարման արդյունավետ ընթացակարգեր, որպեսզի անհրաժեշտության դեպքում պետությունն արագորեն վերակառուցվի, հարմարվի պատերազմական կառավարման սկզբունքներին:

Այժմ փորձենք վերը նշված տեսանկյունից վերլուծել «Սահմանադրությունը, վեր հանել արտակարգ-ռազմական կառավարման հաստատություններն ու սահմանակարգերը, պարզել դրանց բավարարության և արդյունավետության հարցերը՝ հիմք ընդունելով մի շարք պետություններում այս հարաբերությունների կարգավորման նկատմամբ որդեգրված մոտեցումներն ու լուծումները:

Թվում է, թե 2015 թ. խմբագրությամբ «Սահմանադրությունը վերը նշված գործոնների ու «Սահմանադրությունների բերումով պետք է նախատեսվեր ռազմական փոխակերպման բավարար հաստատություններ: Սակայն Սահմանադրության տեքստի ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց են տալիս, որ դրանք այնքան էլ շատ չեն, իսկ եղածների մի մասի արդյունավետությունը, ինչպես կտեսնենք ստորև, կասկածելի է:

Պատերազմական շրջանի ռազմական-արտակարգ կառավարման մասին որևէ դրույթ չկա Սահմանադրության ո՛չ 1-ին, ո՛չ էլ 2-րդ գլխում: 2-րդ գլխի 76-րդ հոդվածը (արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները) առաջին հայացքից ստեղծում է նման տպավորություն, սակայն հոդվածում խոսքը ոչ թե ռազմավարական կառավարման սուբյեկտների կարգավիճակի փոփոխության մասին է, այլ ընդամենը վերաբերում է ռազմական դրության ժամանակ օրենքով սահմանված կարգով մարդու և քաղաքացու որոշ հիմնական իրավունքների և ազատությունների ժամանակավորապես կասեցմանը կամ լրացուցիչ սահմանափակումներին<sup>2</sup>:

<sup>2</sup> Այդ մասին հանգամանորեն խոսվում է 2005 թ. Սահմանադրության 43-րդ և 44-րդ հոդվածների մեկնաբանություններում, որոնք զետեղված են «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի: Ե., 2010), աշխատության 508–526 էջերում: 2015 թ. Սահմանադրության 76-րդ հոդվածի մեկնաբանությունը և մարդու իրավունքների սահմանափակման չափանիշների սահմանադրական նորամուծությունների մասին տես Ա. Վաղարշյան, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավական վերլուծություն): «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2017, հմ. 3 (24),

Ազգային ժողովի սահմանադրական իրավական հաստատությանը վերաբերող մասում կան որոշ դրույթներ, որոնք բխում են ռազմական կառավարման օրինաչափություններից: Դրանցից մեկը նախատեսված է Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասով և արգելում է ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ անցկացնել Ազգային ժողովի ընտրություն՝ այդ ընտրությունները հետաձգելով մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտ: Այս նորմի նպատակն է ապահովել խորհրդարանի՝ որպես օրենսդիր մարմնի բոլոր տեսակի լիազորությունների իրականացման անընդհատությունը, քանի որ կառավարման անընդհատությունը ռազմական կառավարման բոլոր ոլորտների հիմնարար սկզբունք է<sup>3</sup>:

Կառավարման անընդհատության ապահովմանն է նպատակաուղղված ՀՀ Սահմանադրության մեկ այլ դրույթ, որը վերաբերում է պատերազմի հայտարարմանը: Համաձայն 118-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին որոշում: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Կառավարությունը, որն իր կազմով, և գործունեության կարգով օպերատիվ ու արագ գործելու ունակ մարմին է:

Այսպիսով՝ Ազգային ժողովի սահմանադրորեն գործող հաստատության վերաբերյալ պատերազմով կամ ռազմական դրությամբ պայմանավորված իրավիճակում որևէ այլ լուծում նախատեսված չէ: Վերը բերված երկու լուծումներից մեկը նպատակ ունի ապահովելու օրինադրման անընդհատությունը, իսկ երկրորդը՝ պատերազմի հայտարարման և համապատասխան գործողությունների ձեռնարկման և՛ անընդհատությունը, և՛ օպերատիվությունը: Սակայն չեն իրացվել ռազմական արվեստի առաջադրած մնացած սկզբունքները: Օրինակ՝ ռազմական ռազմավարության (համաձայնեցվածություն, նախաձեռնության նվաճում), մարտավարության (հանկարծակիությ-

նան՝ Հ. Մ. Խաչիկյան, Գ. Ս. Ղազինյան, Ա. Գ. Վաղարշյան, Ս. Ա. Դիլբանդյան, Ա. Հ. Պետրոսյան, Մ. Ա. Սկրտչյան, Լ. Ս. Հակոբյան, Կ. Դ. Գևորգյան, Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկա վիճակը և հետագա բարելավման խնդիրը: Ե., 2017, էջ 283–300:

<sup>3</sup> Մարտի վարման անընդհատությունը, անընդհատ ու հաստատուն կառավարումը համարվում են ռազմական մարտավարության հիմնական սկզբունքներից մեկը (տես, օրինակ, *В. Г. Резниченко, И. Н. Воробьев, Н. Ф. Миришниченко*. Тактика. 2-е изд., перераб. и доп. М., 1988, с. 68): Անընդհատությունը նաև գործերի մարտական գործողությունների կառավարմանը ներկայացվող պահանջներից մեկն է (տես նույն տեղում, էջ 667–682): Ռազմավարությունը՝ որպես ռազմական արվեստի բարձրագույն բնագավառ, ևս հիմնավորում է, որ անընդհատությունը, զինված ուժերի անշեղ և անընդհատ ղեկավարումը պետական և բարձրագույն զինվորական ղեկավարության գործունեության ընդհանուր կանոններն են, ռազմավարական կառավարման հիմքում դրված սկզբունքներ, որոնց կիրառումը կարևոր է մարտական գործողությունների ընթացքում (տես «Категории, закономерности и принципы военной стратегии». В кн. «Военная стратегия», сс. 32–39 (<http://militera.lib.ru/science/svechin1/pre2.html>)):

յուն, արագություն, խնդիրների կատարման հետևողական ձգտում, գաղտնիություն, կենտրոնացում, բարձր կազմակերպվածություն): Ռազմական դրության կամ պատերազմի պայմաններում դրանցից հատկապես կարևոր են օրինադրման արագությունը, օպերատիվությունը և արդյունավետությունը: Չէ՞ որ պաշտպանության գործառույթի իրականացման կարևոր տարրերից է դրա ընդհանուր իրավական ու նաև օրենսդրական ապահովումը:

Կառավարության և Վարչապետի սահմանադրական հաստատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ևս հարուստ չեն ռազմական դրության պայմաններին համապատասխանող փոխակերպումներով: Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսվում են պաշտպանական համակարգի կառավարման մարմինների լիազորությունների վերադասավորման երկու, մեր կարծիքով՝ ոչ էական լուծումներ: **Առաջինը՝** խաղաղ (ոչ պատերազմական) ժամանակ Գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին (155-րդ հոդվածի 3-րդ մաս): Տվյալ սահմանադրական դրույթից բխում է, որ պատերազմի ժամանակ Գլխավոր շտաբի պետը չի ենթարկվում պաշտպանության նախարարին: Սահմանադրական լուծումը, կարծես թե, կիսատ է, որովհետև ուղղակի նշված չէ, թե պատերազմական ժամանակ ու՛ն է ենթակա Գլխավոր շտաբի պետը՝ որպես «Ձինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձ»:

Երկրորդը՝ վերադասավորումն ամրագրված է նույն հոդվածի 4-րդ մասում, ըստ որի՝ պատերազմի ժամանակ Ձինված ուժերի Գերագույն հրամանատարը Վարչապետն է: Այս ձևակերպումը ևս աչքի չի ընկնում իրավական հստակությամբ: Ձևակերպման տրամաբանական մեկնաբանությունից և վերլուծությունից բխում են մի շարք հարցեր, որոնց պատասխանը Սահմանադրության մեջ չկա: Դրանք են. ա) ի՞նչ է նշանակում «զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձ», բ) ո՞վ է Ձինված ուժերի հրամանատարը կամ Գերագույն հրամանատարը խաղաղ կամ սովորական ժամանակաշրջանում, գ) ու՞մ է ենթակա Գլխավոր շտաբի պետը պատերազմի ժամանակ:

Լայն առումով՝ պետական կառավարման փոխակերպումներ նախատեսված չեն ո՛չ Անվտանգության խորհրդի, ո՛չ ՀՀ Նախագահի, ո՛չ էլ դատական համակարգի հաստատություններում<sup>4</sup>: Միակ սահմանափակումը, որ սահմանված է, ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե անցկացնելու արգելումն է (208-րդ հոդված)<sup>5</sup>:

Այսպիսով՝ ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության դրույթների

<sup>4</sup> Տես 2015 թ. խմբագրությամբ «ՀՀ Սահմանադրություն», հոդ. 90, 91, 115, 118, 133, 157, 208 (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>):

<sup>5</sup> Տես ՀՀ 2018 թ. մարտի 23-ի «Հանրաքվեի մասին» հմ. ՀՕ-155-Ն սահմանադրական օրենքը (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=120709>): «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. Օրենքը տեղական հանրաքվեի բացառող հանգամանքներ էր համարում արտակարգ և ռազմական դրությունները, դրանց վերացումից հետո՝ երկամսյա ժամկետը (տես «ՀՀ գործող օրենքների ժողովածու», գիրք Ե: Ե., 2002, էջ 94–95, հոդ. 5):

հետազոտությունն արտակարգ-ռազմական կառավարմանը բնորոշ վերակառուցումների տեսանկյունից գալիս է հաստատելու, որ այն ունի միայն երեք նման սահմանակարգ.

1) օրենսդիր իշխանության համակարգում՝ պատերազմական դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրությունների արգելքը, Ազգային ժողովի նիստի գումարման անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու կառավարության լիազորությունը,

2) գործադիր իշխանության համակարգում՝ Վարչապետը Ջինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարն է, իսկ շտաբի պետը չի ենթարկվում պաշտպանության նախարարին, սակայն չի նշվում, թե ում է ենթարկվում (ենթադրվում է՝ Վարչապետին),

3) պատերազմի ժամանակ հանրաքվե անցկացնելու արգելքը:

Ընդ որում, նշվածների մի մասն էլ տարակուսանքի ու անորոշության համար հիմքեր ստեղծող լուծումներ են:

Փորձենք հետազոտել գործող օրենքները և, հատկապես, «Պաշտպանության մասին» 2017 թ. նոյեմբերի 15-ի օրենքը՝ հույս ունենալով դրանում գտնելու մեզ հետաքրքրող սահմանակարգերը կամ արդեն Սահմանադրությամբ սահմանված պատերազմական շրջանի սահմանակարգերի կոնկրետացումներ:

ՀՀ Ազգային ժողովի հարցում այդ օրենքը գրեթե բառացիորեն կրկնում է Սահմանադրության դրույթները (հոդված 6-րդ): ՀՀ Կառավարության լիազորություններն ամրագրված են «Պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածում, իսկ Վարչապետին՝ 9-րդ հոդվածում: Պատերազմ հայտարարելու պահից Վարչապետի՝ Ջինված ուժերի Գլխավոր հրամանատարի վերածվելու կապակցությամբ 9-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ պատերազմ հայտարարվելու դեպքում նա ընդունում է պատերազմական ժամանակի քաղաքական և ռազմական բնույթի որոշումներ:

Օրենքում որոշակի կոնկրետացումներ կան Ջինված ուժերի անմիջական ղեկավարման ու կառավարման ոլորտում: 16-րդ հոդվածը, կրկնելով Սահմանադրության դրույթները, մասամբ բացում է դրանց իրավաբանական բովանդակությունը: Ջինված ուժերի ղեկավարումն իրականացնում է պաշտպանության նախարարը: Գլխավոր շտաբի պետը Ջինված ուժերի անմիջական հրամանատարն է: Խաղաղ ժամանակ Գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին, իսկ պատերազմի ժամանակ՝ Գերագույն հրամանատարին (Վարչապետին)<sup>6</sup>:

Այսպիսով՝ ինչպես տեսանք, «Պաշտպանության մասին» ՀՀ Օրենքը ևս չի պարունակում ինչ-որ փոխակերպումներ, հավանաբար այն պատճառով,

<sup>6</sup> Ընդ որում, օրենքի պաշտոնապես հրապարակված տեքստում 9-րդ հոդվածն ունի 1-ին մաս, ինչը ենթադրում է, որ այն պետք է ունենար նաև 2-րդը: Սակայն տեքստում այն չկա (տես ՀՀ 2017 թ. դեկտեմբերի 15-ի «Պաշտպանության մասին» հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդ. 3, մաս 1, կետ 2 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627>)):

<sup>6</sup> Տես նույն տեղում, հոդ. 16:

որ չկան դրա սահմանադրական հիմքերը: Միակ օրենսդրական իրավադրույթը Գերագույն իրամանատարի հասկացության շատ ընդհանուր բնորոշումն է. «Գերագույն իրամանատարն ընդունում է պատերազմական ժամանակի քաղաքական և ռազմական բնույթի որոշումներ»<sup>7</sup>:

Ակնհայտ է, որ ռազմական կառավարման համակարգը պատերազմական շրջանում վերադասավորվում է մասնակի, շատ թույլ կենտրոնացման ուղղությամբ, և, ըստ էության, կառավարման կենտրոնը դառնում է Վարչապետը:

Պատերազմական գործողությունների ռազմական ռազմավարական պլանավորման հարցում անհասկանալի են մնում Անվտանգության խորհրդի լիազորությունները: Այն լիազորությունները, որոնք թվարկված են «Պաշտպանության մասին» օրենքի 8-րդ հոդվածում, ըստ էության, խաղաղ ժամանակի լիազորություններն են<sup>8</sup>:

Անհասկանալի են պատերազմի ժամանակ ռազմական ռազմավարական կառավարման ոլորտի նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունները: Օրինակ՝ դրանք գործում են ամբողջովին, թե մասամբ. եթե ամբողջովին, ապա, արդյոք, դա չի կարող խոչընդոտել ռազմավարական, օպերատիվ և մարտավարական կառավարմանը: Իսկ եթե չեն գործում, ապա, արդյոք, դա չի հանգեցնի գործադիր ռազմականացված իշխանության չարաշահումների, և ինչպես ապահովել արագացված օրինադրումը: Նման բնույթի հարցադրումները կարելի է շարունակել:

Բարձրացված հարցերի առնչությամբ ՀՀ Սահմանադրությունը բովանդակում է միայն Կառավարության վստահության հարցին վերաբերող կարգավորում, մասնավորապես՝ ռազմական դրության ժամանակ Կառավարությունը չի կարող դնել իրեն վստահություն ցուցաբերելու հարցը (157-րդ հոդվածի 5-րդ մաս) և, համապատասխանաբար, ռազմական դրության ժամանակ Ազգային ժողովում Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել (115-րդ հոդված 4-րդ մաս): Այս իրավակարգավորումը ևս իր լուծումների արդյունավետությամբ կասկածանքների տեղիք է տալիս:

<sup>7</sup> Տես նույն տեղում, հոդ. 9, կետ 5:

<sup>8</sup> Օրենքի այդ հոդվածի համաձայն՝ Անվտանգության խորհուրդը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ 1) իրականացնում է պաշտպանության ռազմավարական պլանավորում և վերանայում. 2) հաստատում է՝ Ձինված ուժերի և մյուս զորքերի զարգացման պլանը, Ձինված ուժերի ծավալման պլանը, Ձինված ուժերի զորահավաքային պլանը, Ձինված ուժերի կիրառման պլանը, ՀՀ-տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը, քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը, Ձինված ուժերի և մյուս զորքերի բարձրագույն իրամանատարական կազմի պաշտոնների, բարձրագույն սպայական կազմի պաշտոնների և դրանց համապատասխանող բարձրագույն սպայական զինվորական կոչումների ցանկերը, իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ (տես ՀՀ 2017 թ. դեկտեմբերի 15-ի «Պաշտպանության մասին» ՀՕ-196-Ն օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627>)):

Պատերազմական վիճակում պետական մարմինների համակարգում փոխակերպումներ սահմանված չեն նաև «Ռազմական դրության մասին» Օրենքով, որի վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ ևս ավելի շատ շեշտադրված են լիազորությունները, այսինքն՝ «ինչ պետք է անել», սակայն այդ լիազորությունների արագ, օպերատիվ, արդյունավետ իրականացման մեխանիզմները, այսինքն՝ «ինչպես անելը», նախատեսված չեն<sup>8</sup>:

Այսպիսով՝ ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության ու պաշտպանության ոլորտը կարգավորող երկու կարևոր օրենքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը՝ կատարված պատերազմական իրավիճակում կառավարման տեսության պահանջների ու սկզբունքների դիրքերից, հանգեցնում են այն եզրակացության, որ ռազմական դրության ժամանակ կառավարման պետական համակարգում նախատեսվող փոխակերպումներն ու լիազորությունների վերաբաշխումը ներկայացված են սակավաթիվ ձևերով և, հետևաբար, անընդունակ են պատերազմական իրավիճակում պետական կառավարման ընդհանուր համակարգը, հատկապես՝ դրա օրենսդիր ու գործադիր թևերը, վերածելու մի կուռ, պաշտպանունակ, ռազմական կառավարման սկզբունքներին ու պահանջներին համահունչ կառույցի: Այս եզրակացությունը հաստատելու համար լրացուցիչ հիմք կարող է ծառայել մեզ հետաքրքրող հիմնահարցի հատուկ հետազոտությունը աշխարհի մի շարք, ընդ որում՝ ժողովրդավարական ու իրավական պետության համբավ ունեցող, պետությունների սահմանադրություններում:

Նման շատ պետությունների սահմանադրությունները նախատեսում են այդպիսի փոխակերպումներ<sup>9</sup>: Օրինակ՝ **Իտալիան** ՄԻԵԿ-ի 6-րդ արձանագրությամբ սահմանված մահապատժի արգելումն ընդունում է միայն խաղաղ ժամանակ, իսկ պատերազմի ժամանակ իրավունք է վերապահում կիրառելու այն (Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մաս): Ճգնաժամային կամ ռազմական դրության պայմաններում կառավարման կենտրոնացման և օպերատիվության ապահովման արդյունավետ միջոց են Իտալիայի սահմանադրական կարգավորումներից բխող օրենսդրական ակտերը<sup>10</sup>:

**Գերմանիայի** 1949 թ. Սահմանադրությունն սկզբում պաշտպանական հարաբերությունների ընդհանուր և թույլ կարգավորիչ էր, բայց հետագայում կատարված լրացումների շնորհիվ այն վերածվեց պաշտպանական հարաբերությունները բավական ծավալուն, մանրամասն, բազմազան սահմանա-

<sup>8</sup> Տես ՀՀ 2006 թ. դեկտեմբերի 5-ի «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» հմ. ՀՕ-258-Ն Օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=105235>):

<sup>9</sup> ԱՄՆ-ի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ռազմական իրավունքի և ռազմական կառավարման ընդհանուր հիմունքների մասին տես *В. К. Белов, А. Ф. Воронов, Е. Н. Голенко*. Военное право. Под ред. В. Г. Стрекозова, А. В. Кудашкина. Серия «Право в Вооруженных силах – консультант». М., 2004, сс. 558–590:

<sup>10</sup> Տես «Конституция Итальянской Республики, принятая 22 декабря 1974 г.». «Конституции зарубежных стран». Сборник. Сост. В. Н. Дубровин. М., 2008, статьи 76, 77:

կարգերով կարգավորող փաստաթղթի, որում շատ են պատերազմի շրջանում կատարվող հաստատութենական փոխակերպումները: Այսպես. եթե հայտարարված ռազմական դրության ժամանակ Գերմանիայի խորհրդարանի երկու պալատների համատեղ կոմիտեն արձանագրի, որ խորհրդարանական գործունեության և նիստերի գումարման համար կան անհաղթահարելի արգելքներ, ապա նա կարող է որպես միասնական մարմին փոխարինել Բունդեստագին և Բունդեսռատին: Նույնպիսին է նաև Ավստրիայի Սահմանադրությունը: Այս պետություններում սահմանված նման ձկուն կարգավորումը և ռազմական կառավարման տեսանկյունից մեծ արդյունավետությունը պայմանավորված են պատերազմելու դրանց պատմական փորձով՝ սկսած պրուսական շրջանից մինչև երկրորդ աշխարհամարտը:

**Հունգարիայի** Սահմանադրությունը պատերազմական իրավիճակի համար նախատեսել է օրենսդիր և գործադիր իշխանությունների կենտրոնացումը, օպերատիվությունը, անընդհատությունն ապահովող մի շարք մեխանիզմներ: Ձինված ուժերի օգտագործման բոլոր լիազորությունները կենտրոնացված են Պետական ժողովում: Եթե կան հանգամանքներ, որոնք խանգարում են Պետական ժողովին իրականացնելու այդ լիազորությունները, ապա դրանք կարող է իրագործել հանրապետության Նախագահը: Տվյալ դեպքում հատուկ կարգավիճակ և արտակարգ լիազորություններ ունի նախագահի գլխավորած Պաշտպանության պետական խորհուրդը:

Սակայն ընդդիմախոսները կարող են պնդել, թե շատ երկրներում էլ փոխակերպվող հաստատություններ չկան: Այս հարաբերությունների սահմանադրական կարգավորման փորձի ամփոփումը հիմք է տալիս պնդելու, որ եթե խորհրդարանական հանրապետություններում այդպիսի սահմանակարգեր չկան, ապա, որպես կանոն, դրանցում բավական մանրամասնորեն ու կենտրոնացվածության սկզբունքով կարգավորված են պետության պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Դրա դասական օրինակը **Լիտվայի** Սահմանադրությունն է, որը առանձին գլխում, այլ իրավահարաբերությունների հետ մեկտեղ, սահմանում է Հայրենիքի պաշտպանության պարտականությունը և իրավունքը, Պաշտպանության պետական խորհրդի կազմը և կարգավիճակը, Ձինված ուժերի Գլխավոր հրամանատարի պաշտոնը (Հանրապետության Նախագահը), ռազմական և արտակարգ դրության ռեժիմների հիմունքները<sup>11</sup>: Ձինված ուժերի Գլխավոր հրամանատարի պաշտոնը հանրապետության Նախագահի ձեռքում կենտրոնացնելը և Պաշտպանության պետական խորհրդի ստեղծման սահմանադրական հնարավորությունը արդեն իսկ նախադրյալներ են ստեղծում պատերազմական շրջանի կառավարման սկզբունքների իրացման համար: Որպես կանոն՝ ռազմական կառավարման բարձրագույն մարմնի՝ Պաշտպանական խորհրդի ձևավորումը և դրա կազմակերպակառուցվածքային ու գործառնության

<sup>11</sup> Տես «Конституция Литовской Республики (принята 25 октября 1992 г., с изменениями от 20 июня 1996 г. и 12 декабря 1996 г.)». «Конституции стран СНГ и Балтии». Сост. Г. Н. Андреева. М., 1999, сс. 550–595, статьи 135–146:



առանձնահատկություններն ապահովում են ռազմական ոլորտի կառավարման կենտրոնացվածությունը և՛ խաղաղ, և՛ պատերազմական ժամանակաշրջաններում:

Նախագահական կամ կիսանախագահական հանրապետություններում պաշտպանական հարաբերությունների կառավարմանը կենտրոնացվածությունը բնորոշ է ըստ դրանց էության: Օրինակ են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, ՌԴ-ն: Մասնավորապես՝ ՌԴ Սահմանադրությամբ պաշտպանական հարաբերությունների կարգավորման մոդելն աչքի է ընկնում բարձր աստիճանի կենտրոնացվածությամբ, ինչը պայմանավորված է ՌԴ Նախագահին այդ ոլորտի բոլոր մարմինների ուղղակի ենթակայությամբ, իսկ դա ապահովում է պետության ղեկավարի բավական մեծ օպերատիվությունը, արագությունը և ռազմական կառավարման այլ սկզբունքների կենսագործումը<sup>12</sup>: Տվյալ ոլորտում լիազորություններ ունեն նաև Դաշնային ժողովը և Կառավարությունը, սակայն դրանք ունեն առավելապես երկրորդական կամ սպասարկող-ապահովող նշանակություն:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում պատերազմական շրջանում ռազմական ռազմավարական կառավարման համակարգի վերը ներկայացված պրոբլեմներից բացի, չկան նաև պատերազմական իրավիճակում արագացված օրինադրման մեխանիզմներ, որոնք գործում են այլ երկրներում<sup>12</sup>: Կան խնդիրներ նաև պաշտպանության նպատակով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման սահմանակարգերում<sup>13</sup>: Արված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ.

1. համաշխարհային սահմանադրական պրակտիկայում պատերազմի ժամանակ նախատեսվում են պետական մարմինների վերակազմավորումներ, սակայն դրա կարգը միանման չէ: Ամեն պետություն որդեգրել է ընդհանուր պետական համակարգի վերակառուցման, պատերազմի պայմաններում կառավարման իր յուրահատուկ մեխանիզմը,

<sup>12</sup> ՌԴ Սահմանադրության 87-րդ հոդվածով Նախագահը համարվում է Ձինված ուժերի Գերագույն Գլխավոր հրամանատար: Ազդեցիայի կամ դրա անմիջական վտանգի դեպքում նա ՌԴ ամբողջ տարածքում կամ դրա առանձին մասերում հայտարարում է ռազմական դրություն՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով Դաշնային խորհրդին և Պետական դումային: ՌԴ Նախագահը, դաշնային սահմանադրական օրենքին համապատասխան, կարող է նաև հայտարարել արտակարգ դրություն (տես «Конституция Российской Федерации. Проблемный комментарий». Отв. ред. В. А. Четвернин. М., 1997, сс. 186–195): Նախագահը ձևավորում և գլխավորում է Անվտանգության խորհուրդը (ՌԴ անվտանգության խորհրդի կազմի, իրավասությունների, կառուցվածքի մասին տես *Б. В. Россинский. Административное право. М., 2001, сс. 590–595*): Նա հաստատում է ՌԴ ռազմական դոկտրինը, նշանակում և ազատում է ՌԴ ՋՈՒ-ի բարձրագույն հրամանատարությանը:

<sup>12</sup> Այդ մասին տես *Սասուն Բաղդասարյան*, Արագացված օրենսդրման կառուցակարգը պատերազմական իրավիճակում: «Դատական իշխանություն», 2020, հմ. 1–2 (247–248):

<sup>13</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Սասուն Բաղդասարյան*, Պետության պաշտպանության առնչությամբ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակման պրոբլեմը: «ՀԲ», 2019, հմ. 3:

ինչը պայմանավորված է տվյալ պետության կառավարման ձևով ու սահմանադրական ավանդույթներով, պետության կառուցման հիմքում դրված քաղաքական-ռազմավարական գաղափարախոսությամբ, պատերազմելու պատմական փորձով, աշխարհաքաղաքական առանձնահատկություններով: Որպես օրինաչափություն՝ նախագահական, կիսանախագահական հանրապետություններում, սահմանադրական միապետություններում պատերազմական շրջանում ռազմական ռազմավարական կառավարման լիազորությունները կենտրոնացվում են նախագահի կամ միապետի ձեռքում՝ խորհրդարանի վերահսկողությամբ:

2. 2015 թ. ՀՀ Սահմանադրության և դրա հիմքով ընդունված օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ պատերազմական շրջանում ռազմական վերակառուցման սահմանակարգերը բավարար չեն, իսկ եղածների մի մասի արդյունավետությունը կասկածելի է: Պետական կառավարման վերակառուցումներ նախատեսված չեն ո՛չ Անվտանգության խորհրդի, ո՛չ պետության Նախագահի, ո՛չ դատական համակարգի հաստատություններում: Պատերազմական գործողությունների ռազմական ռազմավարական պլանավորման հարցում անհասկանալի է Անվտանգության խորհրդի լիազորությունների հարցը, քանի որ օրենքում թվարկվածները վերաբերում են միայն խաղաղ ժամանակին:
3. Հստակ կերպով չեն սահմանված պատերազմի ժամանակ ռազմական ռազմավարական կառավարման ոլորտի նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունները: Հարցեր են ծագում, թե դրանք գործում են ամբողջովին, թե՛ մասամբ. եթե ամբողջովին են գործում, ապա դա, արդյոք, չի կարող խոչընդոտել ռազմավարական, օպերատիվ և մարտավարական կառավարմանը: Իսկ եթե չեն գործում, ապա, արդյոք, դա չի հանգեցնի ռազմականացված գործադիր իշխանության չարաշահումների, իսկ ինչպես ապահովել արագացված օրինադրումը: Այս հարցադրումների հետ կապված՝ ՀՀ Սահմանադրությունն ունի միայն Կառավարությանը վստահության հարցին վերաբերող իրավակարգավորում, որը ևս լուծումների արդյունավետությամբ կասկածների տեղիք է տալիս: Պաշտպանական ոլորտի օրենքներում ավելի շատ շեշտադրված են լիազորությունները, այսինքն՝ «ինչ պետք է անել», սակայն նախատեսված չեն այդ լիազորությունների իրականացման արագագործ, օպերատիվ, արդյունավետ մեխանիզմները, այսինքն՝ «ինչպես անել»:
4. ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ ու պաշտպանության ոլորտը կարգավորող օենքներով ռազմական դրության ժամանակ կառավարման պետական համակարգում նախատեսված վերակառուցումներն ու լիազորությունների վերաբաշխումը ամրագրված են սակավաթիվ ձևերով, հետևաբար՝ ընդունակ չեն պատերազմական իրավիճակում պետական կառավարման ընդհանուր համակարգը, հատկապես՝ դրա օրենսդիր ու գործադիր թևերը, վերածելու ռազմական կառավարման սկզբունքներին ու պահանջներին համահունչ կառույցի:

Արված վերլուծության հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում պատերազմական շրջանում պաշտպանական ոլորտի կառավարման համակարգը կարիք ունի վերանայման և վերակազմավորման, ընդամենը դրա ընթացքում պետք է փորձել կառավարման կենտրոնացվածության պահպանմամբ գտնել այնպիսի լուծումներ, որոնք ռազմական ռազմավարական խնդիրների լուծմանը կհաղորդեն արագություն, օպերատիվություն, անընդհատություն, կապահովեն պետության ղեկավարի, օրենսդիր մարմնի հավասարակշռված մասնակցությունը՝ չվնասելով պետության պաշտպանության շահերին:

## НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ ВОЕННО-СТРАТЕГИЧЕСКОГО УПРАВЛЕНИЯ ОБОРОННОЙ СФЕРОЙ В ВОЕННОЕ ВРЕМЯ

*А. Г. ВАГАРШЯН, доктор юридических наук, профессор ЕГУ,  
С. О. БАГДАСАРЯН, кандидат юридических наук, руководитель  
Юридического департамента Российско-армянского университета,  
лектор Российско-армянского университета*

### РЕЗЮМЕ

Анализ конституционного и законодательного регулирования правоотношений в сфере обороны РА показывает, что существует насущная проблема пересмотра и реорганизации системы управления сферой обороны в военное время. В ходе реформирования правового регулирования данной сферы представляется необходимым при условии сохранения централизованности управления поиск таких решений, которые обеспечат скорость, оперативность, преемственность в решении военно-стратегических задач, на основе сбалансированного участия главы государства и законодательной власти, не нанося ущерба интересам обороны государства.

## SOME ISSUES OF THE CONSTITUTIONAL REGULATION OF THE MILITARY-STRATEGIC MANAGEMENT OF THE SECURITY SPHERE IN THE WARTIME

*A. G. VAGHARSHYAN, Doctor of Law, Professor, YSU,  
S. H. BAGHDASARYAN, PhD in Law, Head, Legal Department,  
Russian-Armenian University, Lecturer, Russian-Armenian University*

### SUMMARY

The analysis of the constitutional and legislative regulation of legal relations in the RA defense sphere shows that there is a major problem of control and reorganization of the defense sphere management in wartime.

In the process of reforming the legislative regulation of the given sphere it is considered necessary, on condition that management centrality is maintained, to look for solutions which would provide for the rapidity, efficiency and continuity in the solution of military-strategic issues, based on the balanced participation of the Head of the State and the legislative power, without compromising the interests of the state defense.

## ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻՔ

Ա. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ, գնդապետ, քաղաքական գիտությունների թեկնածու,  
դոցենտ, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային ծառայության  
գորակոչի վարչության պետ



Յուրաքանչյուր պետության, որքան էլ այն հարուստ լինի, կարևոր խնդիրներից մեկը ավելորդ ծախսերի կրճատումն է: Այս պրոբլեմը կենսական կարևորություն է ստանում փոքր պետությունների դեպքում, քանի որ դրանց բնորոշ է մարդկային ու նյութական ռեսուրսների սղությունը: Նրանց անհրաժեշտ է կտրականապես հրաժարվել փորձի ու սխալների մեթոդից, որովհետև այն հանգեցնում է անհարկի ծախսերի ծավալների զգալի մեծացման, և որպես գործիք ընտրել մանրակրկիտ պլանավորումը<sup>1</sup>: Իհարկե, դա էլ հնարավորություն չի տալիս իսպառ բացառելու չնախատեսված ծախսերը, սակայն ապահովում է դրանց համեմատական նվազարկումը:

Պետության զարգացման պլանավորումն իր ընդգրկմամբ և նշանակությամբ համարվում է ռազմավարական: Ռազմավարական պլանավորումը ներառում է պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները: Դա «ռազմաքաղաքական ու ռազմավարական իրադրության վերլուծության և զինված պայքարի նպատակների, ուժերի, միջոցների ու եղանակների որոշման, պաշտպանությանը պետության, զինված ուժերի և այլ զորքերի պատրաստման գործընթաց է՝ բաղկացած օպերատիվ-ռազմավարական հաշվարկումների ու կանխատեսումների, ռազմավարական պլանավորման համապատասխան փաստաթղթերի մշակումից»<sup>2</sup>:

Ռազմավարական պլանավորման կարևորագույն բաղադրիչներից է պաշտպանության ռազմավարական պլանավորումը: Այն պետության պաշտպանական համակարգի պլանավորմանն ու առկա հնարավորությունների կատարելագործմանը նպատակաուղղված համակողմանի, համակարգված, հեռանկարային գործընթաց է, որով նախատեսվում է գիտական հենքի վրա կատարված համակողմանի վերլուծության արդյունքներով կանխորոշել ու մշտական հսկողության տակ պահել պետության պաշտպանության բնագավառի առաջնահերթ խնդիրների լուծման ընթացքը<sup>3</sup>:

<sup>1</sup> Տես, օրինակ, *Օ. Շ. Сухарев*. Бюджетные расходы, эффективность и приоритеты развития экономики, «Финансовый журнал», 2015, N 1:

<sup>2</sup> Տես «Ռազմական ոլորտի հասկացությունների օժանդակ հանրագիտարանային բարան»: «ԱՏ», 2021, հմ. 1–2, էջ 184:

<sup>3</sup> Տես *Գ. Վ. Տավարածյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազ-

Պաշտպանությունը, կամ պաշտպանական համակարգը «Հայաստանի Հանրապետության պետական լիազորված մարմինների ու պաշտոնատար անձանց, Ջինված ուժերի և ռազմարդյունաբերական համալիրի, ռազմական անվտանգության խնդիրների լուծման համար նախատեսված հաստատությունների և կազմակերպությունների ամբողջությունն է: Այն իրականացնում է ռազմական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված համալիր գործունեություն»<sup>4</sup>: Ըստ էության, պաշտպանական համակարգը բարիք չստեղծող, այլ միայն ռեսուրսները ծախսող բնագավառ է, սակայն դա պետության գործառույթներից առավել կարևոր ոլորտային գործառույթ է, քանի որ արտաքին սպառնալիքներից պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, հասարակարգի, բնակչության ֆիզիկական գոյության, մարդկային ու նյութական ռեսուրսների արտադրության ու վերարտադրության, հոգևոր-մշակութային զարգացման անվտանգության պահպանումն է և ապահովվում է պետության ու հասարակության ամբողջ ֆիզիկական ու հոգևոր ներուժով: Ըստ այդմ՝ պաշտպանության ոլորտի զարգացումն ապահովվում է պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների փոխհամաձայնեցված համախումբ ջանքերով:

Ռեստի պաշտպանության ռազմավարական պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնվեն մյուս բոլոր ոլորտների տվյալ պահին եղած վիճակն ու զարգացման հնարավորությունները:

Ռազմավարական պլանավորումը, ընդհանուր առմամբ, կազմված է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

- կոնկրետ նպատակների սահմանում,
- առկա ռեսուրսների հաշվառում (միջոցների «գույքագրում»),
- այդ նպատակների իրագործման մեխանիզմների (ռազմավարության) որոշում՝ հատկացված ռեսուրսների բաշխմամբ,
- ընթացքի վերահսկում, վերլուծում, գնահատում և շտկում<sup>5</sup>:

Ընդամենի սահմանված «ռազմավարական նպատակներին հասնելու համար պահանջվում են սահմանափակ պետական ռեսուրսների ավելի ռացիոնալ բաշխում, այդ ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում, ինչպես նաև պետական, այդ թվում՝ պաշտպանական, ծրագրերի ավելի նկատելի ու վերահսկելի արգասիքներ»<sup>6</sup>: Միանգամայն հասկանալի է, որ պետք է լավ

մավարական պլանավորումը որպես պաշտպանական համակարգի հետևողական զարգացման անհրաժեշտ գործիք: «ՀԲ», 2018, հմ. 1–2:

<sup>4</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «ԱՏ», 2007, հմ. 4, էջ 42, կետ 24:

<sup>5</sup> Տես, օրինակ, *Ольга Ландау*. Стратегический план маркетинга (<http://masters.donntu.org/2001/fem/muray/diss/b3.htm>); «Стратегическое планирование. Понятие и этапы стратегического планирования» (<http://www.stplan.ru/articles/theory/strplan.htm>):

<sup>6</sup> Տես *Гари Букур-Марку*. Определение оборонного менеджмента. «Оборонный менеджмент: ознакомление». Под ред. Гари Букур-Марку, Филипп Флури, Тодор Тагарева. Женева–Киев, 2011, с. 4:

իմանալ, թե ինչ կա, որպեսզի կարողանալ այն լավ բաշխել կամ լավ օգտագործել: Ահա այդ իմանալն էլ պայմանավորված է այսպես կոչված *հաշվառմամբ*:

Սակայն նախքան մեր խնդրո առարկային անցնելը համառոտակի ծանոթանանք զինվորական հաշվառման դրվածքին այս տեսակետից առաջատար մի քանի պետություններում:

Ռուսաստանի Ղաշնությունում զինվորական հաշվառումը ՌԴ քաղաքացիների զինապարտության բաղադրյալ մասն է, որն ապահովվում է զորահավաքային ու զորակոչային մարդկային ռեսուրսների գրանցման պետական համակարգով և որի շրջանակներում իրականացվում է նրանց քանակական կազմի ու որակական վիճակի մասին տեղեկությունների հավաքման, ընդհանրացման ու վերլուծման գծով միջոցառումների համալիր<sup>7</sup>: Ըստ Կանոնադրության՝ զինկոմիսարիատներում, տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում զինվորական հաշվառման են ենթակա:

ա) 18-ից 27 տարեկան արական սեռի բոլոր քաղաքացիները, որոնք պարտավոր են լինել զինվորական հաշվառման մեջ և չեն գտնվում պահեստազորում (զորակոչիկներ),

բ) պահեստազորում գտնվող քաղաքացիները (զինապարտներ),

- արական սեռի, որոնք գտնվում են պահեստազորում,
- զիծառայողներից այն զորացրվածները, որոնք ներառված են ՌԴ ԶՈՒ-ի պահեստազորում,
- պետական պատկանելություն կամ պետական արտոնագրություն ունեցող բուհերի ռազմագիտական ամբիոնները պահեստազորի սպայի պատրաստման ծրագրերով հաջողությամբ ավարտած անձինք,
- զինծառայությանը զորակոչից ազատվելու կապակցությամբ զինծառայություն չանցած անձինք,
- այլընտրանքային քաղաքացիական ծառայություն անցածները,
- իգական սեռի այն անձինք, որոնք ունեն զինհաշվառումային մասնագիտություններ<sup>8</sup>:

Իսրայելի Պետությունում, համաձայն Ջինված ուժերի մասին օրենքի (միաբերված տարբերակ) 5747–1986, զորակոչը տարածվում է ինչպես Իսրայելում, այնպես էլ օտար երկրներում բնակվող բոլոր քաղաքացիների վրա, անգամ եթե նրանք ունեն այլ քաղաքացիություն և անգամ եթե նրանք մշտապես բնակվում են արտասահմանում: Ղա վերաբերում է նաև Իսրայելի այն մշտական բնակիչներին, որոնք չունեն այդ պետության քաղաքացիություն:

<sup>7</sup> Տես «Постановление Правительства Российской Федерации от 27.11.2006 № 719 (ред. от 14.02.2009) «Об утверждении Положения о воинском учете»» ([http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_64215/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_64215/)):

<sup>8</sup> Տես նույն տեղում:

Ջորակոչի ենթակա են 18–29 տարեկան բոլոր առողջ տղամարդիկ և 18–26 տարեկան առողջ կանայք<sup>9</sup>:

Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացի (նշտական բնակիչ), անգամ եթե նա ապրում է արտասահմանում, որի 16 տարի 4 ամիսը լրացել է, պարտավոր է կարգավորել իր զորակոչային կարգավիճակը պաշտպանության բանակի համապատասխան ծառայությունում: Ջորակոչման թեկնածուն, ստանալով առաջին կանչը, պարտավոր է նշված ժամկետում ներկայանալ նշված վայրում գտնվող հավաքակայան<sup>10</sup>:

Շվեյցարիայի Համադաշնությունում 19-ից մինչև 31 տարեկան բոլոր առողջ տղամարդիկ, որոնք ունեն Շվեյցարիայի քաղաքացիություն, պետք է ծառայություն անցնեն պետության Ջինված ուժերում որպես լիովին պիտանի կամ քաղաքացիական պաշտպանությունում՝ որպես մասնակիորեն պիտանի կամ անցնեն պետական ծառայություն (ևս լիովին առողջ լինելու դեպքում)<sup>11</sup>:

Այժմ անցնենք ՀՀ-ում զինվորական հաշվառման վիճակի ու պրոբլեմների ուսումնասիրությանը: Նախ. նշենք, որ զինապարտության համակարգը՝ որպես պետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտքի ապահովման գործիք, ներառում է դրա կատարման ամբողջ շղթան՝ զինվորական հաշվառում–նախագորակոչային պատրաստում–գորակոչի կազմակերպման միջոցով իրականացվող պարտադիր զինվորական ծառայություն–կամահայտության վրա հիմնված պայմանագրային զինվորական ծառայություն–պահեստագորային համակարգ՝ ապահովելով խաղաղ և պատերազմական ժամանակ ՀՀ պաշտպանության արդյունավետությունը: Նշված շղթայի միասնականությունը և զինապարտության համակարգի ամբողջականությունն ապահովելու հրամայականը հանգեցնում է այդ հարաբերությունները համապարփակ, հստակ և ամբողջական իրավական կանոնակարգման անհրաժեշտության, ինչին և միտված է տվյալ բնագավառում ներկայումս ՀՀ-ում իրականացվող քաղաքականությունը:

Ինչպես տեսանք, այս շղթայում ևս առաջինը զինվորական հաշվառումն է: Նախ. փորձենք սահմանել «զինվորական հաշվառում» հասկացությունը: Նշենք, որ դրա սահմանումը ՀՀ տարբեր տարիների ուղեցույց փաստաթղթում եղել է տարբեր: 1998 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված «Ձի–նապարտության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, մասնավորապես, սահմանվում էր, որ զինվորական հաշվառումը նախագորակոչիկ–

<sup>9</sup> Տես «Призыв на военную службу». «Israel (Посольство Израиля в России)» (<https://embassies.gov.il/moscow/ConsularServices/Page/Призыв-на-военную-служ-бу.aspx>):

<sup>10</sup> Տես նույն տեղում:

<sup>11</sup> Տես *Сергей Лакутин*. Армейская служба в Швейцарии. «Наша Газета», 31.05.2012 (<https://nashagazeta.ch/news/13583>); “Verschiebung Rekrutierung?” Federal Department of Defence, 8 August 2014. “Schweizer Armee” ([https://web.archive.org/web/20140808061825/http://www.vtg.admin.ch/internet/vtg/de/home/militaerdienst/dienstleistende/dvs/allg/versch\\_rekr.html](https://web.archive.org/web/20140808061825/http://www.vtg.admin.ch/internet/vtg/de/home/militaerdienst/dienstleistende/dvs/allg/versch_rekr.html)):



ների (16–18 տարեկան), զորակոչիկների (18–27 տարեկան) և պահեստազորում գտնվող քաղաքացիների հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժահավաքային և զորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգն է<sup>12</sup>:

Նշված ձևակերպման համեմատությամբ զինվորական հաշվառման ավելի մանրամասն սահմանում էր տրված ՀՀ Կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի հմ. 657-Ն որոշմամբ դրա հաստատված կարգի 2-րդ կետով, որը մասնավորապես սահմանում էր՝ «զինվորական հաշվառումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ բնակչության պետական ռեզիստրի վարման քաղաքականության շրջանակներում նախազորակոչային, զորակոչային տարիքի և պահեստազորում գտնվող արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիների հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժահավաքային և զորահավաքային հնարավորությունների գնահատման ու ռեսուրսների վերլուծության պետական համակարգ է»<sup>13</sup>:

ՀՀ Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի հմ. 1269-Ն որոշմամբ հաստատված «Զինվորական հաշվառման կարգ»-ի 2-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառումը ՀՀ քաղաքացիների՝ օրենքով սահմանված զինապարտության ապահովման նպատակով հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժահավաքային և զորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգ է<sup>14</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր փաստաթղթերում տրվում է զինվորական հաշվառման որակական սահմանումը: Ընդհանրացնելով նշված տարբեր սահմանումները՝ զինվորական հաշվառումը կարելի է սահմանել որպես զինապարտության իրականացումն ապահովելու նպատակով կատարվող հաշվառման և հանրապետության զորակոչային, վարժահավաքային ու զորահավաքային ռեսուրսների քանակական կազմի և որակական վիճակի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, ամփոփելու և վերլուծելու պետական համակարգ:

Զինվորական հաշվառմամբ զբաղվում են զինվորական կոմիսարիատները: Այստեղ ուզում ենք նշել, որ ամենևին էլ համաձայն չենք այն համատա-

<sup>12</sup> Տես ՀՀ 1998 թ. սեպտեմբերի 16-ի «Զինապարտության մասին» հմ. ՀՕ-250 օրենքը (ներկայումս չի գործում), հոդ. 5 (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=55534>):

<sup>13</sup> Տես ՀՀ Կառավարության 2010 թ. մայիսի 27-ի «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի հմ. 282 որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» հմ. 657-Ն որոշումը (ներկայումս չի գործում) (<https://www.arlis.am/documentView.aspx?docid=58560>):

<sup>14</sup> Տես ՀՀ Կառավարության 2018 թ. նոյեմբերի 8-ի «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի հմ. 657-Ն որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» հմ. 1269-Ն որոշումը (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126601>):

րած ճանաչում ստացած կարծիքի հետ, թե Հայաստանում անկախության հաստատումից հետո ազգային պաշտպանական ոլորտն սկսել է զարգանալ զրոյից: Չէ՞ որ Հայաստանում խորհրդային տարիներին ծավալված էր զինկոմիսարիատների ակտիվորեն գործող ցանց, իսկ զինկոմիսարիատը պետության ռազմական կազմակերպվածքի այն կարևոր օղակն է, որն ապահովում է քաղաքացիական բնակչության և բանակի անխզելի կապը՝ բանակին մատակարարելով որակյալ համալրում: Մեր զինկոմիսարիատները հսկայական փորձ կուտակեցին հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին<sup>15</sup> և այն էապես հարստացրին Արցախյան առաջին պատերազմի (1991–1994 թթ.) ընթացքում: Ջինկոմիսարիատները ոչ միայն հաշվառման էին վերցնում նախազորակոչային տարիքի պատանիներին, ըստ առողջական վիճակի որոշում զինծառայության համար նրանց պիտանիության աստիճանը, այլև կրթության, ռազմամարզական ու տեխնիկական պատրաստման, նախասիրությունների հաշվառմամբ նրանց նպատակային կերպով բաշխում էին համապատասխան զորամասերով: Սակայն 2018 թ. «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» որոշմամբ կարգը էապես փոխվեց<sup>16</sup>, քանի որ կոռուպցիայի դեմ պայքարի հիմնավորմամբ բաշխումն սկսեց կատարվել ըստ հավաքակայանում անցկացվող «կույր» վիճակահանության: Պրակտիկան ցույց տվեց, որ դա չբարելավեց համալրման աշխատանքի որակը, քանի որ, ըստ էության, վերացավ նպատակային բաշխման հնարավորությունը:

Հայտնի է, որ ՋՈՒ-ի համալրումը կարող է կատարվել երեք սկզբունքով՝ զորակոչով, պայմանագրային ու խառը եղանակներով: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները<sup>17</sup>: Հայաստանը նախընտրել է զորակոչային տարբերակը՝ շեշտը դնելով ռազմականորեն պատրաստված մեծաթիվ պահեստազորի կազմավորման վրա: Սակայն եկեք տեսնենք, թե որքանով դա կարող է արդյունավետ լինել ներկայիս պայմաններում: Հայտնի է, որ զորակոչին հաջորդող առաջին շրջանում զորամասերի մարտունակությունն զգալի չափով նվազում է, քանի որ որոշակի պատրաստականություն ունեցող փորձառու ժամկետային զինծառայողներին փոխարինում են ռազմամասնագիտական գիտելիքներից զուրկ, բանակային կյանքին դեռ չհարմարված նորակոչիկները: Այս բացը հնարավոր է

<sup>15</sup> Տես *Ա. Թ. Հարությունյան*, Հայաստանի զինվորական կոմիսարիատների դերը Հայրենական մեծ պատերազմում: «ՀԲ», 2005, հմ. 2–4:

<sup>16</sup> Տես ՀՀ Կառավարություն 2018 թ. հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» հմ. 1132-Ն որոշումը (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=125957>):

<sup>17</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես, օրինակ, «По призыву и контракту». «Военные комиссариаты России», 20.02.2021 (<https://voenkom.ric.mil.ru/Stati/item/297470/>); *А. Тихонов*. Плюсы и минусы армейского масштаба. «Красная Звезда», 1 марта 2007 г.; «Проблемы и практика перехода военной организации России на новую систему комплектования» (Научные труды № 75Р). М., 2004 ([https://www.iep.ru/files/text/working\\_papers/75.pdf](https://www.iep.ru/files/text/working_papers/75.pdf)):

որոշ չափով համակշռել որոշակի նախնական պատրաստում ստացած նորակոչիկների շնորհիվ: Սակայն վիճակահանությունը (այն ձևով, որով այժմ կիրառվում է) ի դերն է անում այդ հնարավորությունը: Ընդամին կարող է մի այնպիսի «խաղ խաղալ», որ խիստ մասնագիտացում պահանջող զորամասում (<ՕՊ-ի կամ ՌԷՊ-ի զորքեր, հրետանի) հայտնվի մարդ, որը ծանոթ չէ դպրոցական ծրագրին անգամ 4-րդ դասարանի մակարդակով: Բացի այդ, ռազմականորեն պատրաստված պահեստազորայինը կարող է զգալի ուժ ներկայացնել, եթե հայտնվում է իրեն «հարազատ» զորատեսակում ու տեղանքում, մինչդեռ վիճակահանությամբ դա հնարավոր չէ ապահովել\*:

«Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտադիր զինվորական ծառայությունը կազմակերպվում է զորակոչի միջոցով: Ջորակոչի ենթակա են 18 տարին լրացրած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 27 տարին լրանալը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստում անցած ու պահեստազորի սպայական կազմում ընդգրկվող արական սեռի քաղաքացիները՝ մինչև 35 տարին լրանալը (այսուհետև՝ պահեստազորի սպայական կազմ): Հայտարարված զորակոչով պարտադիր զինվորական ծառայության ենթակա են նաև այն քաղաքացիները և պահեստազորի սպայական կազմը, որոնց համապատասխանաբար 27 և/կամ 35 տարին լրանում է տվյալ զորակոչի ընթացքում<sup>18</sup>:

Գործող օրենսդրությամբ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպումն ապահովող մարմիններն են՝

1) զինվորական կոմիսարիատը, որն այժմ վերանվանվել է ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում,

2) մարզային զորակոչային հանձնաժողովը (ՄԶՀ),

3) հանրապետական զորակոչային հանձնաժողովը (ՀԶՀ):

Հարկ է նշել, որ աշխատանքների պատշաճ կազմակերպման և զորակոչիկների իրավունքների պաշտպանության տեսանկյունից նպատակահարմար է մի շարք որոշումների կայացման իրավունքը վերապահել զինվորական կոմիսարիատի տարածքային ստորաբաժանման ղեկավարներին: Օրինակ՝ նման իրավունք նախատեսված է նաև մինչև 2017 թվականի դեկտեմբերի 16-ը գործող «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքով:

Ձինվորական կոմիսարիատի տարածքային ստորաբաժանումներն իրականացնում են զորակոչային տարիքի (18-ից 27 տարեկան) քաղաքացիների զինվորական հաշվառման և զորակոչային ռեսուրսների կառավարման աշ-

\* Կարծում ենք, որ հոդվածի վերջում բերվող առաջարկություններից մեկը հնարավորություն է տալիս հաղթահարելու այդ թերությունը:

<sup>18</sup> Տես ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» հմ. ՀՕ-195-Ն օրենքը, հոդ. 19 (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633>):

խատանքներ: Ձորակոչային ռեսուրսների կառավարում ասելով հասկանում ենք տվյալ տարիքային խմբի քաղաքացիների քանակական կազմի և որակական կազմակերպվածքի որոշակիության սահմանումը, երբ յուրաքանչյուրի վերաբերյալ նախապատրաստվում և կայացվում է օրենքով նախատեսված, նրա առողջական վիճակին և զինվորական հաշվառման կարգավիճակին համապատասխան որոշում:

Ձինվորական հաշվառման վերցված քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության զորակոչը կազմակերպվում և իրականացվում է «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի հմ. 1132-Ն որոշման պահանջների համաձայն<sup>19</sup>:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման շրջանակներում քաղաքացիների առողջական վիճակի հետազոտումը և բժշկական փորձաքննությունը ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով կատարում է իրավասու բժշկական հանձնաժողովը, իսկ քաղաքացիների բժշկական հետազոտության ուղեգրման, ինչպես նաև կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացման աշխատանքները իրավասու բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա կատարում են զինվորական կոմիսարիատի տարածքային ստորաբաժանումները:

Օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու հիմքը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով և դրանց պատճեններով, իսկ օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթերը՝ նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ: Օրենքով սահմանված այն դեպքերում, երբ քաղաքացին իրավունք ունի հրաժարվելու իր ունեցած տարկետման իրավունքից կամ ստացած տարկետումից և ցանկություն է հայտնում զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության, նա դիմում է ներկայացնում զինվորական կոմիսարիատի այն տարածքային ստորաբաժանում, որը գործում է իր զինվորական հաշվառման վայրում: Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված և զորակոչի ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացրած) քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կամ զորակոչից տարկետում տրամադրելու, կամ զինվորական ծառայությունից ազատելու գործը ծառայության պետի կարգադրությամբ կատարում է համապատասխան զինվորական կոմիսարիատի տարածքային ստորաբաժանումը:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո աշխարհում միջազգային

<sup>19</sup> Տես ՀՀ Կառավարություն 2018 թ. հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» հմ. 1132-Ն որոշումը (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=125957>):

իրավունքի դերի շեշտակի բարձրացման, վերաբեռնակման ինստիտուտների սահմանման, մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության նպատակով ընդունվել են մի շարք կոնվենցիաներ: Դրանցից իրենց կարևորությամբ առանձնանում են 1948 թվականի դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան», որոնք յուրաքանչյուրի համար սահմանում են մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Դա հիմք է դարձել, որպեսզի տարբեր պետություններում քաղաքացիները իրավունք ունենան հրաժարվելու պարտադիր զինվորական ծառայությունից՝ իրենց համար պահանջելով զինվորական ծառայության, զենք կրելու և ռազմական գործի հետ կապ չունեցող ծառայության տեսակներ: Նշված անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը պայմանավորել է այլընտրանքային ծառայության տեսակների սահմանում: Օրինակ՝ Ավստրիայի Հանրապետությունում այլընտրանքային ծառայության կարող է ուղարկվել ցանկացած անձ, որը դիմում է ներկայացրել և խնդրել իր պարտադիր զինվորական ծառայությունը փոխարինել այլընտրանքայինով: Համապատասխանաբար՝ ՀՀ-ում ևս գործում է նման օրենք: Ըստ այդմ ՀՀ զինվորական կոմիսարիատի տարածքային ստորաբաժանումներում կատարվում են պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու վերաբերյալ քաղաքացիների ներկայացրած դիմումների հետ կապված աշխատանքներ:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ❖ ոլորտը կարգավորող իրավական ակտերում կատարել փոփոխություն, ըստ որի զորակոչի ժամանակ վիճակահանությամբ ծառայության վայրի նշանակումը փոխարինվի նպատակային բաշխմամբ՝ ըստ զորակոչիկի վերաբերյալ նրա հաշվառման տարածքային ստորաբաժանումում առկա տվյալների,
- ❖ քանի որ ըստ հանրապետությունում առկա ժողովրդագրական միտումների իրավիճակը մոտ ապագայում չի բարելավվի, և մոտակա տարիներին կծագեն Ջինված ուժերը անհրաժեշտ թվակազմով ու որակի զորակոչային համալրմամբ ապահովելու հետ կապված խնդիրներ, ապա այդ պրոբլեմը հնարավորինս օպտիմալ կերպով լուծելու համար հանձնարարել զորամասերին մշակել իրենց զարգացման միջնաժամկետ (4-5 տարի կտրվածքով) տեսլականը և դրանում նշված համալրման քանակական ու որակական տվյալները հաղորդել զորակոչի համար պատասխանատու մարմիններին՝ իրենց գործունեության միջնաժամկետ պլանները ճշգրտելու և ՋՈՒ-ի զորակոչային կարիքները քանակապես ու որակապես պատշաճ մակարդակով բավարարելու համար:

## ВОИНСКИЙ УЧЕТ КАК ВАЖНЫЙ ИНСТРУМЕНТ СТРАТЕГИЧЕСКОГО ПЛАНИРОВАНИЯ ОБОРОНЫ

*А. О. САРГСЯН, полковник, кандидат политических наук, доцент,  
Начальник Управления призыва Призывной и мобилизационной службы МО РА*

### РЕЗЮМЕ

Планирование развития государства и общества по своему охвату и значению является стратегическим. Одним из его важнейших составляющих является стратегическое планирование обороны. Это систематизированный, всесторонний, перспективный процесс, нацеленный на планирование и совершенствование наличествующих возможностей оборонной системы государства, предполагающий предопределение и постоянный надзор над ходом решения первоочередных задач в области обороны государства по результатам всестороннего анализа на научной основе.

Планирование предусматривает необходимость конкретизации целей; определения (учета) наличествующих ресурсов («инвентаризации»); выработку механизмов достижения целей (стратегии) с распределением выделенных ресурсов; контроля, анализа, оценки и корректировки хода реализации стратегии.

Таким образом, одним из важнейших инструментов стратегического планирования обороны является воинский учет.

На основе компаративного анализа осуществляемого в РА воинского учета с принятыми в России, Израиле и Швейцарии стандартами произведена оценка нормативно-правовой базы реализации воинского учета в республике, процесса его осуществления и выработаны предложения по совершенствованию системы учета.

## MILITARY REGISTRATION AS A KEY INSTRUMENT FOR DEFENSE STRATEGIC PLANNING

*A. H. SARGSYAN, Colonel, PhD in Politics, Associate Professor,  
Head, Conscription Board, Conscription and Mobilization Service, MOD, RA*

### SUMMARY

The planning for the state and public development is strategic in its scope and value. One of its key components is the defense strategic planning. This is a systemic, comprehensive, perspective process, targeting at the development and improvement of the existing capabilities of the state's defense system, suggesting predefinition and permanent surveillance over the solution of high-priority problems in the state defense sphere according to the comprehensive science-based analysis.

The planning envisions the necessity of specification of goals; designation (registration) of the existing resources («inventory»); development of goal achieving mechanisms (strategy) with marshalling of the resources pledged; control, analysis, assessment and adjustment of the strategy implementation process.

Thus, military registration is one of the key instruments for state strategic planning.

Based on the comparative analysis of the RA's existing military registration system with the standards accepted in Russia, Israel and Switzerland, the assessment of regulatory basis of the RA military registration process, as well as its implementation were carried out, and some registration system proposals were developed.

# ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի  
Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի  
Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի  
գիտնական-վերլուծաբան



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատերազմին պետության պատրաստման առնչվող հիմնախնդիրների շարքում հարկ է նշել պատերազմին նրա տնտեսության պատրաստման արդյունավետության մեծացումը, ինչով մեծապես կկանխորոշվի պատերազմի ելքը: Միևնույն ժամանակ, պատերազմի բնույթի և մասշտաբների անընդհատ փոփոխությունը բոլոր ժամանակաշրջաններում նոր պահանջներ է ներկայացնում հակամարտող պետությունների տնտեսություններին, որոնք պետք է դառնան առավելագույնս ինքնաբավ՝ նպատակաուղղված լինելով պատերազմի նյութական, տեխնիկատեխնոլոգիական և ֆինանսական կարիքների բավարարմանը<sup>1</sup>: Բացի այդ, 21-րդ դարում առաջ են գալիս հակառակորդների նկատմամբ հաղթանակ տանելու այնպիսի անհամաչափ մեթոդներ, որոնք առավել վառ կերպով դրսևորվում են հիբրիդային պատերազմներում: Դրանք, իրենց հերթին, հակամարտող պետություններից պահանջում են ինչպես տնտեսության գերլարված աշխատանք, այնպես էլ տնտեսական համակարգի նոր որակի կառավարում: Հետևաբար, այսպիսի խնդիրների հետազոտությունները հույժ կարևոր են պատերազմին տնտեսությունների պատրաստման արդյունավետության մեծացման տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ բոլոր տեսակների տնտեսական համակարգերի դեպքում պատերազմին տնտեսության պատրաստման ընթացքում պետք է ապահովված լինի բարձր մակարդակի տնտեսական անվտանգություն: Իսկ դա նշանակում է, որ նման պատրաստման արդյունավետությունը մեծապես պայմանավորված կլինի պետական մարմինների կառավարման գործառնությունների ու որակի անընդհատ կատարելագործմամբ<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես, օրինակ, *Emily O. Goldman and Leo J. Blanken*. The Economic Foundations of Military Power. University of California-Davis, 2006-12 (<https://www.files.ethz.ch/isn/21806/GoldmanBlanken.pdf>):

<sup>2</sup> Տես, օրինակ, *В. М. Безденежных*. Обзор практики управления рисками государственными органами власти Великобритании, США, Канады: содержание нормативной базы. «Экономическая безопасность: проблемы, перспективы, тенденции развития». Материалы VI Международной научно-практической конференции. ПГНИУ, 19 февраля 2020 г., сс. 61–74:



Սա վերաբերում է ոչ միայն պետական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, այլև ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում պետության պաշտպանության գործում մասնավոր հատվածի ներգրավման արդիական մեթոդների կիրառմանը:

**ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Հայտնի է, որ յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության ապահովումը պետական մարմինների պարտականությունն է: Այդ նպատակով պետական մարմինները վարում են երկրի պաշտպանունակության և պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված քաղաքականություն: Այդուհանդերձ, երկրի պաշտպանության հիմքը տնտեսությունն է: «Համատարած պատերազմի» հայեցակարգի հեղինակ Է. Լյուդենդորֆը համարում էր, որ այդպիսի պատերազմին մասնակից պետություններն օգտագործում են իրենց բոլոր ռեսուրսները և մեթոդները, որպեսզի հաղթեն հակառակորդին: Նա ընդունում էր, որ պատերազմի մարդկային և նյութական ռեսուրսների ծախսերը այնքան են շատացել, որ դրանք համալրելու համար անհրաժեշտ է ամբողջ ժողովրդի ներգրավում ու այդ ռեսուրսների սպառման կտրուկ սահմանափակում<sup>3</sup>:

Ա. Սվեչինը, իր հերթին, մանրակրկիտ վերլուծելով ժամանակակից պատերազմի տնտեսական գործոնները, արել է այն եզրահանգումը, որ պատերազմին նախապատրաստումը «կդադարեցնի կամ նույնիսկ կքայքայի պետության արտադրաուժերի զարգացումը»<sup>4</sup>: Իր «Ռազմավարություն» աշխատությունում Ա. Սվեչինը շեշտում է պատերազմի տնտեսական պլանի մշակման անհրաժեշտությունը: Նա համարում է, որ պետք է ուշադրություն դարձնել տնտեսական պլանի մշակմանը, քանի որ պատերազմի տնտեսական ճակատը ինքնաբավ չէ, և ռազմական գործողությունների այս կամ այն շրջադարձը կարող է ամբողջությամբ փոխել նաև տնտեսության առջև դրված պահանջները և այն իրադրությունը, որում դրանք պետք է կատարվեն: Ուստի, տնտեսական պլանը պետք է ենթադրի այնպիսի տնտեսական վարքագիծ, որը իրադարձությունների զարգացման ոչ մի տարբերակում պետությանը չի կանգնեցնի փակուղու առաջ: Այդ պլանը պետք է հիմնվի միայն իրականության վրա, և դրա կազմմանը պետք է նախորդի յուրային և հակառակորդի տնտեսական ուժերի բազմակողմանի ուսումնասիրությունը<sup>5</sup>: Պատերազմի ռազմական մասի պլանի մշակման համար չափազանց կարևոր է այն, որ տնտեսական պլանում դիտարկվեն հետևյալ հարցերը. որքան ժամանակ կպահանջի երկրի տնտեսական մոբիլիզացիան, ռազմաարդյունաբերության արտադրողականության ինչ սահման է նախանշվում, և որքան

<sup>3</sup> Տես «Военно-исторический журнал», 1963, № 1:

<sup>4</sup> Տես «Հատվածներ Ա. Սվեչինի «Ռազմավարություն» աշխատությունից»: «US», 2020, հմ 4, էջ 41:

<sup>5</sup> Տես նույն տեղում, էջ 50:

Ժամանակ է հնարավոր պահել ռազմաարդյունաբերության զերլարմամբ աշխատանքի ընթացքը մինչև արտադրողականության անխուսափելի անկումը, ինչը պայմանավորված կլինի պետության ընդհանուր տնտեսական հյուծմամբ:

Պատերազմին տնտեսության պատրաստումը պետք է կատարվի այն բանից հետո, երբ պետական մարմինները գնահատեն տնտեսական ներուժը: Տնտեսական ներուժը գնահատելիս անհրաժեշտ է վերլուծել հատկապես այն ռազմատնտեսական կարողությունները, որոնք հնարավոր է ստեղծել և իրացնել սպասվող կոնկրետ պատերազմում: Ընդ որում, տնտեսական ներուժի իրացման վրա ազդում են նաև սպասվող պատերազմի տևողությունը և ինտենսիվությունը<sup>6</sup>:

Ընդհանուր առմամբ, պաշտպանության տնտեսական ապահովման հիմնական խնդիրներն են.

- ✓ զինված ուժերի, մյուս զորքերի և ռազմական կազմավորումների կարիքների բավարարում ֆինանսական, նյութական, տեխնիկական և այլ ռեսուրսներով, ինչը կատարվում է առաջնահերթությամբ՝ պետական պատվերի և մատակարարման միջազգային պայմանագրերի միջոցով,
- ✓ զենքի և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման և արդիականացման համար գիտական, տեխնիկական և արտադրական բազայի կատարելագործում,
- ✓ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստության և տնտեսական ոլորտներում ներգրավված բնակչության մոբիլիզացման համար ուսուցման արդյունավետ համակարգերի ստեղծում,
- ✓ սոցիալական ապահովության մակարդակի բարձրացում, պետական օրենսդրությամբ սահմանված երաշխիքների իրագործում զինվորական անձնակազմի, զինծառայողների ընտանիքի անդամների և զինվորական ծառայությունից զորացրված անձանց համար,
- ✓ նպաստում փոխշահավետ միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը:

Ակներև է, որ թվարկված միջոցառումների իրականացումը պահանջում է պետական, տարածքային ու համայնքային կառավարման օղակների սերտ համագործակցություն, ձեռնարկվող քայլերի նպատակաուղղվածություն և հետևողականություն: Սակայն ինչպե՞ս գնահատել, թե արդյոք այս միջոցառումները բավարար կլինեն առաջիկա պատերազմի կարիքների բավարարման համար: Այս հարցը հույժ կարևոր է հատկապես պատերազմի բնույթի ու մասշտաբների փոփոխականության և դրանում երրորդ պետությունների անմիջական ընդգրկվածության հաշվառմամբ: Մյուս կարևոր հան-

<sup>6</sup> Տես *В. А. Чижевская, А. В. Киров. Экономический потенциал страны как фундамент военной мощи государства. «Economics», 2016 (<https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskij-potentsial-strany-kak-fundament-voennoy-moschi-gosudarstva/viewer>):*

զամանքն այն է, որ պետք է խուսափել տնտեսության ռազմականացումից: Հակառակ դեպքում կրճատվում են տնտեսության զարգացման հնարավորությունները, քանի որ տնտեսությունը հարկադրված է լինում գերակայություն տալու ռազմական նախանշանակման ապրանքների արտադրությանը և ծառայությունների մատուցմանը:

Այսպիսով՝ պաշտպանությանը պետության տնտեսական պատրաստությունը բնութագրվում է նրա ռազմատնտեսական ներուժով և տնտեսության մոբիլիզացիոն հնարավորություններն օգտագործելու կարողությամբ: Դա ենթադրում է ռազմական գործողությունների դեպքում բավարար ռազմական ու տնտեսական հզորության պահպանում, տնտեսության արագ մոբիլիզացման և արտակարգ իրավիճակներում նրա կայուն գործունեության ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Դրանք արտահայտվում են տնտեսության կառուցվածքային, գիտատեխնիկական, արտադրական, մոբիլիզացիոն ու կազմակերպական պատրաստությամբ և պատերազմի ժամանակ տնտեսության հնարավորությունների արդյունավետ օգտագործմամբ: Ընդ որում, մեծ նշանակություն ունի արտադրության բոլոր ձևերի և տեսակների արդյունքների բավարար չափով ապահովումը, ինչի շնորհիվ երաշխավորված կլինի մարտական խնդիրներ կատարելու գինված ուժերի կարողությունը:

ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժամանակակից պատերազմներին բնորոշ է այն, որ հակամարտող կողմերի կենսագործունեության բոլոր ոլորտները ենթակա են դրա ներգործությանը: Դրանից առաջացող սպառնալիքները ընդհանրական ձևով կարելի է բխեցնել 21-րդ դարում անհամեմատ ավելի հաճախակիորեն վարվող հիբրիդային պատերազմի էությունից և բովանդակությունից: Ռազմաքաղաքական համատեքստում հիբրիդային պատերազմ ասելով՝ հասկանում ենք հակառակորդի տարածքում ռազմական, քաղաքական ու սոցիալ-տնտեսական բազմաբնույթ ապակայունացնող մարտավարությունների կիրառում<sup>7</sup>: Հիբրիդային պատերազմի դեպքում հարձակվող կողմը չի անցնում դասական ռազմական ներխուժման, այլ ճնշում է գործադրում իր հակառակորդի կենսագործունեության բոլոր ոլորտների վրա (այդ թվում՝ նաև տնտեսական)՝ օգտագործելով գաղտնի օպերացիաների, դիվերսիաների, կիբեռպատերազմի համակցությունը, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերում հակառակորդի տարածքում գործող հակակառավարական ուժերին (ապստամբներին): Տնտեսական առումով այդպիսի գործողություններից են՝ նպաստումը հակառակորդ պետության տրանսպորտային շրջափակմանը, խոչընդոտումը ներդրումային նախագծերի իրականացմանը, միջազգային հարթակներ-

<sup>7</sup> Steu B. H. Акулинин, Н. Ц. Епифанова. Концепция гибридной войны в практике межгосударственного противостояния. «Национальные интересы: приоритеты и безопасность», 2015, № 36 (<https://cyberleninka.ru/article/n/kontseptsiya-gibridnoy-voyny-v-praktike-mezhgosudarstvennogo-protivostoyaniya/viewer>):

րում այդ պետության վարած տնտեսական քաղաքականության վարկաբեկումը, միջազգային շուկաներից նրա ապրանքների դուրսմղումը և այլն: Ընդամին, ԱՄՆ-ին ռազմական հզորությամբ զիջող, սակայն իրենց ռազմավարական նպատակների իրականացմանը ձգտող նրա հակառակորդ պետական և ոչ պետական սուբյեկտների ռազմավարություններն ու մարտավարական հնարները նկարագրելու նպատակով ամերիկյան ռազմական վերլուծաբանները կիրառում են «անհամաչափ պատերազմ» տերմինը<sup>8</sup>:

Պետք է նշել մեկ շատ կարևոր հանգամանք ևս. հիբրիդային պատերազմները չեն հայտարարվում, այլ սկսվում են այն պահին, երբ կողմերի ազգային շահերի համար առաջանում է սպառնալիք: Հետևաբար նման պատերազմներին տնտեսությունները նախապատրաստելու համար պահանջվում է համապատասխան միջոցառումների իրականացում՝ սկսած այդպիսի սպառնալիքների ծագման պահից:

Այս առումով պատերազմին տնտեսության պատրաստման փուլում ծագող բարդ և բազմաբնույթ ռազմատնտեսական խնդիրների լուծումը պահանջում է տնտեսության ռազմական հատվածի կազմակերպման և կառավարման ոլորտում ժամանակակից մեթոդների կիրառում<sup>9</sup>: Խոսքը պետական կառավարման նոր համակարգի մասին է, մի համակարգի, որը պետք է համատեղի վարչական, իրավական, կազմակերպական, ֆինանսատնտեսական մեթոդներն ու կառավարման գործիքները: Սա նշանակում է, որ պատերազմին նախապատրաստմանը տնտեսական աջակցության նոր մեխանիզմի ձևավորումը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ ռազմատնտեսական գործունեության պետական կարգավորման համակարգի բարեփոխման հիմքում դրվի պետության պաշտպանության կարիքների գնահատման, պլանավորման և ֆինանսավորման նկատմամբ որդեգրված հիմնովին նոր մոտեցում: Այդ մոտեցումը ենթադրում է պետության ռազմական դոկտրինում և ռազմական ծրագրերում սահմանված ռազմական շինարարության նպատակների արդյունավետ իրականացում՝ հիմնված ազգային շահին ուղղված առկա և տեսանելի հեռանկարում հնարավոր ռազմական սպառնալիքների վերլուծության վրա<sup>10</sup>: Ուստի սպառազինությունների և ռազմական տեխնիկայի արտադրության ծրագրեր մշակելիս դրանց օպտիմալ անվանացուցակը ձևավորվում է միջազգային իրավիճակի և սպառնալիքների, տեխնոլոգիական առաջընթացի կանխատեսումների և «ծախսեր-արդյունք» հարաբերակցության վերլուծության հիման վրա:

<sup>8</sup> Տես «Перспективы гибридной войны». «Concordiam», 2020, т. 10, № 1 ([https://www.marshallcenter.org/sites/default/files/files/2020-10/pC\\_V10N1\\_RUS.pdf](https://www.marshallcenter.org/sites/default/files/files/2020-10/pC_V10N1_RUS.pdf)):

<sup>9</sup> Տես *Б. Н. Головецкий*. Совершенствование организационно-экономического механизма государственного регулирования производства военной продукции и размещения государственного оборонного заказа. «Науковедение» интернет-журнал, 2016, т. 8, № 2 (<https://cyberleninka.ru/article/n/sovershenstvovanie-organizatsionno-ekonomicheskogo-mehanizma-gosudarstvennogo-regulirovaniya-proizvodstva-voennoy-produktsii-i-viewer>):

<sup>10</sup> Տես նույն տեղում:

Իհարկէ, ռազմատնտեսական գործունեության պետական կարգավորման համակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում իրավական դաշտի կարգավորումները: Այդ իսկ պատճառով ժամանակակից պատերազմում դիմակայությանը միտված իրավական կարգավորումների համակարգում նպատակահարմար է ներառել կազմակերպարավական միջոցառումներ, որոնք ուղղված լինեն հիբրիդային պատերազմների հետ կապված սպառնալիքների կանխարգելմանը, բացահայտմանը, վերացմանը կամ տեղափակմանը<sup>11</sup>:

Արդի պայմաններում պաշտպանությանը ցուցաբերվող տնտեսական աջակցությունը կախված է ոչ միայն արտադրության, գիտության և տեխնոլոգիաների զարգացման մակարդակից, պետության նյութական ու մարդկային ռեսուրսներից, այլև դրանք օպտիմալ կերպով օգտագործելու կարողությունից, տնտեսությունը անհապաղ և հնարավորինս մեծ չափով ռազմական ռելսերի վրա փոխադրելու հնարավորությունից<sup>12</sup>: Այս հարցում ռազմական բյուջեն պետք է լինի ոչ միայն հզոր բանակի պատրաստման, այլև ապագա պատերազմում ծախսերի կրճատման միջոց: Պատերազմի դեպքում այն պետք է կարողանա պետությանը ապահովել ինչպես կապիտալ սարքավորանքով, այնպես էլ մոբիլիզացիոն պահուստներով: Միևնույն ժամանակ, կարևոր է պահպանել պատերազմի ժամանակ ուսումնառողների թիվը, քանի որ ռազմական գործողությունների պատճառով բազմաթիվ քաղաքացիներ պետք է կտրվեն խաղաղ ժամանակվա իրենց զբաղմունքից: Սա հատկապես վերաբերում է ռազմարվեստի և ռազմաարդյունաբերության ոլորտներում որակյալ կադրերի պատրաստմանը<sup>13</sup>:

Հարկ է նաև նշել, որ ռազմատնտեսական կարիքները դիմամիկ են, բացի այդ դրանց աճը կախված է բազմաթիվ գործոններից՝ զինված ուժերի թվաքանակից, կառուցվածքից և այն խնդիրներից, որոնք նրանք կատարում են ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ: Գիտատեխնոլոգիական առաջընթացը նույնպես նպաստում է նոր տեսակների սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի արտադրության և հների բարելավմանը՝ ձևավորելով ռազմատնտեսական նոր կարիքներ<sup>14</sup>:

Արդի պայմաններում պատերազմին տնտեսության պատրաստման փուլում պետության տնտեսական անվտանգության համակարգի այլ գործա-

<sup>11</sup> Տես «Геополитика и безопасность» аналитический и научно-практический журнал, 2017, № 4 ([http://old.paodkb.ru/upload/iblock/9bf/gib\\_4\\_40\\_2017\\_itog-\\_1\\_.pdf](http://old.paodkb.ru/upload/iblock/9bf/gib_4_40_2017_itog-_1_.pdf)):

<sup>12</sup> Տես *Е. В. Разумова, М. Н. Денисюк*. Экономическое обеспечение обороны. «Международный научно-исследовательский журнал», 2015, № 2, ч. 3 (<https://research-journal.org/economical/ekonomicheskoe-obespechenie-oborony/>):

<sup>13</sup> Տես «Հատվածներ Ա. Սվեչինի «Ռազմավարություն» աշխատությունից», էջ 52:


<sup>14</sup> Տես *В. В. Бессонов*. Военно-экономические потребности и пути их удовлетворения в современных условиях. «Политическое управление» научный информационно-образовательный электронный журнал, 2014, № 2 (<http://www.xn--80aejaldqdtkdnd0ap.xn--p1ai/архив/2014/02/Bessonov.pdf>):

ռոյթների շարքում առանձնանում է պաշտպանականը, որի էությունը արտաքին ու ներքին վտանգներից տնտեսական համակարգի պաշտպանությունն է: Այս գործառույթի իրականացումն ուղղակիորեն կապված է տնտեսության ռեսուրսային ներուժի ձևավորման և արդյունավետ օգտագործման հետ: Այսպես. պետության տնտեսական անվտանգության պաշտպանական գործառույթի իրականացումը ենթադրում է.

- ✓ առկա վտանգների վերլուծություն, հնարավոր սպառնալիքների և մարտահրավերների առաջացման հավանականության և դրանց հնարավոր հետևանքների կանխատեսում,
- ✓ անվտանգության ապահովմանն ուղղված համալիր միջոցառումների մշակում,
- ✓ հնարավոր վտանգների կանխմանն ուղղված գործուն մեխանիզմների ձևավորում:

Այս միջոցառումների իրականացման գործում կարևոր է տնտեսական հետախուզության դերը: Այն պետք է ընդգրկի ոչ միայն հնարավոր հակառակորդներին, այլև տնտեսական առումով բոլոր առաջատար պետություններին, քանի որ պատերազմի տնտեսական պլանը կազմողը պետք է հստակ կերպով գիտենա տնտեսության պայմանները<sup>15</sup>:

Մյուս կողմից, ինչպես երևում է ստորև բերված գծապատկերից, պատերազմի մասշտաբների և բնույթի գնահատումից է կախված պատերազմին տնտեսության պատրաստման էությունը, բովանդակությունը և համապատասխան միջոցառումների իրականացման մասշտաբայնությունը: Ընդ որում, տնտեսության պատրաստման միջոցառումներում այս կամ այն չափով պետք է ներգրավվի նաև մասնավոր հատվածը:



Գծապատկեր. Պատերազմին տնտեսության պատրաստման միջոցառումներ

<sup>15</sup> Տես «Հատվածներ Ա. Սվեչինի «Ռազմավարություն» աշխատությունից», էջ 50–51:

Բացի այդ, հարկ է նշել նաև, որ պատերազմին տնտեսության պատրաստման արդի կարևոր ուղղությունների թվին է դասվում տնտեսության զինված պաշտպանության ապահովումը: Խոսքը տնտեսական օբյեկտների և ռեսուրսների, հանքահումքային պաշարների ֆիզիկական պաշտպանության մասին է: Բացի այդ, տնտեսության պատրաստումը ներառում է նաև պետության ռազմաքաղաքական դեկավարության քաղաքականությունը՝ միտված տեղական արտադրողների շահերի և շուկայի պաշտպանությանը: Սա ներառում է տվյալ երկրի ռազմավարական տնտեսական օբյեկտները և ռեսուրսները արտաքին սուբյեկտների (հատկապես՝ հակառակորդ պետությունների) կապիտալով գնման կանխումը, տնտեսական հետախուզության դեմ պայքարը, արտաքին շուկաներում տեղական արտադրողների շահերի պաշտպանությունը, տեղական արտադրողների տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության խթանումը:

Այս բաժնում նշված միջոցառումները զետեղված են տարբեր պետությունների տնտեսական անվտանգության հայեցակարգերում ու ռազմավարություններում: Ընդ որում, պատերազմի պատրաստվող պետություններում տնտեսական անվտանգության ապահովումը անպայմանորեն առնչվում է ազգային անվտանգության այլ ճյուղերի և պատերազմի կանխատեսվող բնույթի ու մասշտաբների հետ:

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ 2020 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Իհարկե, առկա էին մի շարք հանգամանքներ, որոնք ազդեցին պատերազմի ելքի վրա, սակայն պատերազմի վերսկսման հավանակությունը նշանակալիորեն կկրճատվեր, եթե Հայաստանի տնտեսական հնարավորությունները լինեին պատշաճ մակարդակում: Տնտեսական հզորության մեծացման կարևորությունը արտահայտվում է տնտեսական ինքնաբավության մակարդակով: Այն կանխորոշում է հնարավոր պատերազմին տնտեսության պատրաստության մակարդակը: Այս առումով Հայաստանի տնտեսությունը մեծ մասամբ ունի հանքահումքային (առանց վերամշակող բաղադրիչի) և ծառայությունների զարգացման ուղղվածություն (այդ է վկայում ՀՆԱ-ի կառուցվածքը): Տարիների ընթացքում նման կառուցվածքը սահմանափակել է տնտեսության իրական հատվածի զարգացումը: Ընդ որում, անկախությունից ի վեր Հայաստանի ազգային ռազմավարական ռեսուրսների օգտագործման նկատմամբ թույլ վերահսկողության հետևանքով ազգային բնական հարստությունն արտահանվել է շուկայականից ցածր գներով: Դրան պետք է ավելացնենք նաև 1990-ական թվականների ազգային եկամտի ավելացման տեսանկյունից մասնավորեցման գործընթացի անարդյունավետությունը: Փաստացի, Հայաստանի տնտեսության իրական հատվածի զարգացումը նշանակալիորեն հետ է մնացել Ադրբեջանի տնտեսության իրական հատվածի զարգացումից, և Ադրբեջանը պատերազմը սանձազերծել է տնտեսական զարգացման առումով Հայաստանի նկատմամբ երկար տարիներ գերակշիռ առավելություն ձեռք բերելու պայմաններում: Մյուս կողմից՝ տա-

րիներ շարունակ մեր պետության ղեկավարությունը չի դրել ռազմական կարիքների բավարարման նպատակով ռազմական տնտեսության կառուցվածքը սահմանելու խնդիր և առաջ չի քաշել այն պահանջները, որոնք միտված լինեին, մասնավորապես, ռազմական տնտեսության ոլորտների մասնակցության աստիճանի բարձրացմանը: Հայաստանում չի ստեղծվել պետության ռազմական կարիքներին համապատասխանող ռազմատնտեսական ներուժ: Մեկ այլ կարևորագույն հանգամանքը. Հայաստանում ղեկավար օղակներում մշտապես անտեսվել է բիզնես-կառավարիչների և ներդրումային նախագծերի կառավարիչների դասի հիմնումը: Նույնիսկ ժամանակակից կոշտ միջազգային շուկայական մրցակցության պայմաններում Հայաստանը ասիական «վագրերի» օրինակով կարող էր հիրավի դառնալ տնտեսապես զարգացող երկիր, եթե և՛ պետական, և՛ մասնավոր հատվածում ստեղծվեր գործարարության և ներդրումային տեղական ու միջազգային միտումները հասկացող որակյալ մասնագիտական կառավարիչների դաս: Բացի վերոնշյալ քայլերից Հայաստանում չեն իրականացվել հետևյալ տնտեսական միջոցառումները.

- ✓ արտաքին աշխարհի հետ մատակարարման շղթայի ու տրանսպորտային կապվածության անխափանության և անվտանգության ապահովում,
- ✓ պարենային և ոչ պարենային ապրանքների ռազմավարական պահուստների ստեղծում, այդ թվում՝ ցանքատարածությունների և վարելահողերի մակերեսների ընդլայնման միջոցով,
- ✓ արդյունաբերության վերամշակող ճյուղերում ներքին և օտարերկրյա ներդրումների ծավալների մեծացում,
- ✓ տնտեսության մոբիլիզացիոն և պետության տարածքային զարգացման քաղաքականությունների փոխկապվածության ապահովում: Սրա շրջանակներում կարևորվում է տարածքային միավորներում արտադրական կողմնորոշմամբ ձեռնարկությունների բաշխվածության մեծացումը: Դրանով կմեծանան պատերազմի ընթացքում առանձին տարածքային միավորներում առաջացող տնտեսական և պարենային խնդիրներն ինքնուրույնաբար լուծելու հնարավորությունները:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակի հրամայականն է, որ Հայաստանում մշակվի տնտեսական անվտանգության հայեցակարգ, որտեղ ներկայացված լինեն հետպատերազմյան և միջազգային ու տարածաշրջանային առկա զարգացումների համատեքստում ՀՀ տնտեսության պաշտպանվածության և զարգացման խնդիրներն ու դրանց լուծման հնարավորությունները:

Բացի այդ, պատերազմից հետո Հայաստանում ավելի հրատապ են դառնում նաև հետևյալ խնդիրները.

- ✓ տնտեսական սուբյեկտների նենգադուլի կանխումը և տնտեսության քաղաքականացվածության բացառումը: Օրինակ՝ պատերազմից հետո առաջացած սոցիալ-տնտեսական և ֆինանսական խնդիրների



լուծման անհրաժեշտության բերումով պետական մարմինները կարող են նվազեցնել հարկային վարչարարության գործառույթները, ինչից կօգտվեն տնտեսվարող սուբյեկտները: Այլապես նրանք կարող են տարբեր ապրանքների նկատմամբ շուկայում ստեղծել սպեկուլյատիվ տրամադրություններ՝ հանգեցնելով գների բարձրացման:

Ինչ վերաբերում է տնտեսության քաղաքականացվածությանը, ապա դա, օրինակ, այն է, երբ այս կամ այն քաղաքական ուժի ներկայացուցիչներն իրենց պատկանող տնտեսական սուբյեկտների, հատկապես՝ մենաշնորհային, գործունեությունն ուղղում են իրենց քաղաքական շահերի իրացմանը՝ ձեռնամուխ լինելով կաշառքի բաժանմանը, տնտեսական ոլորտում օրենսդրաիրավական դաշտի պահանջների անտեսմանը և այլ քայլերի,

- ✓ ակտիվ մասնակցություն Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությանը, ինչը կարևորվում է հատկապես տարածաշրջանային ապաշրջափակման պայմաններում: Տվյալ միջոցն օգտագործելու նպատակով անհրաժեշտ է Հայաստանի ենթակառուցվածքային վերազինում և նոր ենթակառուցվածքային նախագծերի իրականացում: Այս առումով Հայաստանի ազգային շահերից է բխում «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղու կառուցման արագացումը,
- ✓ ներքին շուկայի և արտադրողների պաշտպանություն,
- ✓ արտաքին պետական պարտքի կառավարման այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք կապահովեն կարճաժամկետ և միջնաժամկետ պարտավորությունների առավելագույն բաշխումը երկարաժամկետ հեռանկարում: Այդ մեխանիզմները պետք է նպատակաուղղվեն նաև պետական պարտքի որոշակի մասի մարմանը, Հայաստանում ներդրումային նախագծերի իրականացմանը:

## ПРОБЛЕМЫ ПОДГОТОВКИ ЭКОНОМИКИ ГОСУДАРСТВА К ВОЙНЕ И ВОЗМОЖНОСТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

*А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, ученый-аналитик Группы стратегических игр и моделирования Центра региональных стратегических исследований ИНСИ НИУО МО РА*

### РЕЗЮМЕ

Непрерывное изменение характера и масштабов войн постоянно выдвигает новые требования к экономикам воюющих государств. При подготовке экономики к войне следует учитывать военно-экономический потенциал государства: уровень развития науки и технологий, наличие материальных и людских ресурсов, способность использовать мобилизационные возможности экономики. Для этого необходимы обеспечение тесного взаимодействия государственных, территориальных и общинных звеньев управления, целенаправленности и

последовательности предпринимаемых в этом направлении шагов, а также реалистичная оценка характера, масштабов и продолжительности вероятной войны.

С учетом результатов 44-дневной войны в Арцахе анализируются ошибки, допущенные в ходе подготовки экономики РА к войне, а также представляются предложения по их устранению.

## THE PROBLEMS OF PREPARING THE STATE'S ECONOMY FOR WAR AND THE OPTIONS TO OVERCOME THEM

*A. G. DAVTYAN, PhD in Economy, Research Fellow, Strategic Games and Simulation Group, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA*

### SUMMARY

The continuous change in the nature and scale of wars constantly puts forward new requirements on the economies of the belligerent states. While preparing the economy for war, one should take into account the military-economic potential of the state: the development level of science and technology, the availability of material and human resources, the ability to use the mobilization potential of the economy. This requires ensuring close interaction between state, regional and local levels of management, persistency and consistency of steps taken in this direction, as well as a realistic assessment of the nature, scale and duration of a probable war.

Taking into account the results of the 44-day war in Artsakh, the mistakes made during the preparation of the RA economy for war are analyzed, as well as the proposals to rectify them are given.

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ  
ՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՀՀ Պաշտպանության նախարար Ա. Կարապետյանի այցը  
Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան  
*Ձախից աջ. ՊԱՀՀ-ի պետ գեներալ-մայոր Գենարի Տավարաձյան,*  
Պաշտպանության նախարար Արշակ Կարապետյան,  
Պաշտպանության նախարարի խորհրդական  
գեներալ-մայոր Արթուր Սիմոնյան

Երևան, 2021 թ. օգոստոսի 17



ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ Գ. Տավարաձյանը  
«Պետության ռազմական անվտանգություն» գերատեսչական  
ակադեմիական երրորդ հոսքի վերապատրաստման դասընթացի  
շրջանավարտների հետ

Երևան, 2021 թ. հուլիսի 23



Դրվագ ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ «Պետության ռազմական անվտանգություն»  
գերատեսչական ակադեմիական վերապատրաստման չորրորդ  
հոսքի դասընթացի մեկնարկից

Երևան, 2021 թ. սեպտեմբերի 1



ՀՀ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Լին Տրեյսի  
հանդիպումը ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի անձնակազմի հետ

Երևան, 2021 թ. հունիսի 15



ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր  
դեսպան Ն.Գ. պարոն Կիշան Դան Դեվալի հանդիպումը  
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի անձնակազմի հետ

Երևան, 2021 թ. մայիսի 17



ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում «Մարդու իրավունքների պաշտպանությունը սահմանային անվտանգության ապահովման և պատերազմի պայմաններում» խորագրով կլոր սեղան քննարկում

Երևան, 2021 թ. հունիսի 3



ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակին նվիրված «ՀՀ պետական կառավարման հիմնախնդիրները արդի պայմաններում» խորագրով գիտաժողով

Երևան, 2021 թ. սեպտեմբերի 23

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՈՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԸ (1918 թ.)

Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
«Հ ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության պետ, «Հայկական  
բանակ» ՌԳՀ գիտախորհրդատվական խորհրդի անդամ



Հայոց ցեղասպանության ճարտարապետներից մեկը՝ դր. Բեհաէդդին Շաքիրը 1920 թ. սեպտեմբերի 1–7-ը Բաքվում տեղի ունեցած «Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում» իր ելույթում առաջ է քաշել այն տեսակետը, թե Հարավային Կովկասում «թուրքական կառավարությունը և թուրք ժողովուրդը» ծավալապաշտական քաղաքականություն չեն վարել<sup>1</sup>: Որպես իր պնդման ապացույց Շաքիրը նշել է. «Ընկերներ, դա ես ձեզ կարող եմ հիմնավորել հետևյալ կերպ: Այն ժամանակ, երբ պատերազմը շարունակվում էր և

գերմանական դաշինքը պատերազմում հաղթանակի էր հավակնում, թուրք ժողովուրդն ու թուրքական կառավարությունը մտադիր էին ստեղծելու Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի նման բախարգելային պետություններ: Եթե հայտարարվում է, որ թուրքիան ընդհանուր առմամբ ծավալապաշտական քաղաքականություն էր վարում, կարիք կա պարզաբանելու, թե ինչու թուրք ժողովուրդն ու թուրքական պետությունը նման քաղաքականություն էին որդեգրել: Թուրքիան ցանկանում էր իր և Ռուսաստանի միջև բախարգելային պետությունների ստեղծմամբ պաշտպանել իրեն: Ո՛չ արևմուտքում, ո՛չ արևելքում թուրքիան ուրիշի տարածքին տիրանալ չի ցանկացել և ընդհանուր առմամբ զավթողական քաղաքականություն չի վարել»<sup>2</sup>:

Բեհաէդդին Շաքիրը, իր ելույթում խոստովանելով, որ Հարավային Կովկասում երեք անկախ պետությունների ստեղծման գործում Օսմանյան կայսրությունը խաղացել է վճռական դեր, չի նշել մեկ այլ կարևոր հանգամանք, որ երիտթուրքական տեսլականով նախատեսվում էր Կովկասում ստեղծել ոչ թե երեք, այլ միայն երկու պետություն. բացառվում էր Հայաստանի՝ որպես պետական միավորման ձևավորումը: Եվ միայն այն պատճառով, որ Թալեթի կառավարությունը բախվեց մշակված նախագծի իրականացումն անհնարին դարձնող հանգամանքների և գործոնների, նա համակերպվեց Հայաստանի Հանրապետության ստեղծման փաստի հետ: Սակայն դրա հետ

<sup>1</sup> Տես Yavuz Arslan. Birinci Doğu Halkları Kurultayı (1-7 Eylül 1920 – Bakü). İstanbul, 2007, s. 292:

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 292–293:

մեկտեղ նա ակտիվ ջանքեր գործադրեց, որպեսզի հայկական պետական միավորումն ունենա այնպիսի տարածք ու սահմաններ, որոնք նրան հնարավորություն չեն տա արդյունավետ կերպով զարգանալու և հզորանալու: Փաստորեն, դեռ Հայաստանի պետության առնչությամբ երիտթուրքական կառավարության այս տեսլականը հիմք ծառայեց նաև քեմալական կառավարության համար, որը Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության հետ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով ձգտեց Հայաստանին թողնելու սահմանափակ տարածք այնպիսի ուրվագծով, որը խոչընդոտ էր հայոց պետության արդյունավետ զարգացմանը, իսկ հարևան պետությունները, առաջին հերթին՝ իրենք և Ադրբեջանը, ի վիճակի լինեին վերահսկելու Հայաստանի ճանապարհային կապերը և ունենային ընդհանուր սահման: 1918 թ. խոսքը առաջին հերթին վերաբերում էր երկաթգծին, որի կարևոր հատվածն էր Կարս–Թավրիզ գիծը: Շեշտենք, որ այսօր ևս ճանապարհային հաղորդակցության այս տրամաբանությունն ընդհանուր առմամբ պահպանվում է:

Ադրբեջանցի պատմաբան Ջամիլ Հասանլուն նշում է, որ դեռ 1918 թ. ապրիլին Տրապզոնում տեղի ունեցող բանակցությունների ժամանակ էնվեր փաշան հանդիպել է Անդրկովկասյան սեյմի մահմեդական խմբակցության ներկայացուցիչների հետ և վերջիններս հետաքրքրվել են, թե նա ինչ է մտածում, «երկու բարեկամ ժողովուրդների»՝ օսմանցի թուրքերի և Կովկասի թաթարների փոխհարաբերությունների մասին, քանի որ «հենց էնվեր փաշան էր որոշում Թուրքիայի քաղաքականությունը»<sup>3</sup>: Էնվերը պատասխանել է, որ «ղարերով Թուրքիային ձգտող մահմեդաբնակ Ախալցխի և Ախալքալակի ուեզդները (զավառներ – Ա. Ա.) պետք է անցնեն Թուրքիային: Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը ընդհանուր սեյմով պետք է որոշում կայացնեն՝ դաշնություն կամ համադաշնություն կազմեն և սերտորեն համագործակցեն Թուրքիայի հետ»<sup>4</sup>: Այն դեպքում, երբ չհաջողվի միասնական անդրկովկասյան պետություն ձևավորել, անկախ Ադրբեջանը, որը պետք է ունենա Թուրքիայի հետ ընդհանուր սահման, կարող է Օսմանյան կայսրության հետ շատ սերտ հարաբերություններ ձևավորել, և այդ պետական միավորումը կարող է նույնիսկ այնպիսի տեսք ընդունել, ինչպիսին Ավստրո-Հունգարիան էր<sup>5</sup>:

1918 թ. Բաթումում տեղի ունեցող բանակցությունների ժամանակ երիտթուրքական կառավարության նախնական ծրագիրը երկու՝ Վրաստանի և մահմեդական պետության (Ադրբեջանի) ստեղծումն էր, և օսմանյան պատվիրակության ղեկավար Հալիլ Մենթեշեին հանձնարարվել էր բանակցել վրացական պատվիրակության հետ և համոզել նրանց կիսելու հայկական

<sup>3</sup> Տես *Джамиль Гасанлы. История дипломатии Азербайджанской Республики. В трех томах, т. I: «Внешняя политика Азербайджанской Демократической Республики (1918-1920)»*. М., 2010, сс. 73–74:

<sup>4</sup> Տես նույն տեղում:

<sup>5</sup> Տես նույն տեղում:



տարածքները, սակայն վրացական պատվիրակության ղեկավար Գեգեչկորին հրաժարվել էր՝ պատկերացնելով վրացական պետության համար նման քայլի հետևանքներն ու վտանգները\*:

1918 թ. մայիսի 25-ին Հալիլ Մենթեշեհին ուղարկված հանձնարարականում Թալեաթը մեկ անգամ ևս ներկայացնում է Անդրկովկասի հավանական պետականության վերաբերյալ իր տեսակետը. «Եթե վրացիներն առանձին և անկախ կառավարություն ձևավորեն, նրանց հետ առանձին կբանակցենք: Համոզված ենք, որ Հյուսիսային և Հարավային Կովկասի մահմեդականներն առանձին անկախ կառավարություն կազմելու աստիճանի անկախություն են ցանկանում: Վրացիները մահմեդականների հետ հայկական հարցը լուծելուց հետո միավորման հնարավորություն ունեն: Ձե՛րդ գերազանցություն, այսօրվանից այդ ուղղությամբ աշխատեք»<sup>6</sup>:

Այսպիսով՝ Թալեաթը Կովկասում վրացիների և կովկասյան մահմեդականների միավորման խոչընդոտ է համարում Հայկական հարցը և հնարավոր է կարծում «հայկական խոչընդոտի» վերացումից հետո Կովկասում՝ դաշնության կամ համադաշնության տեսքով վրաց-մահմեդական պետական միավորման կազմավորումը:

Մշակված նախագծի իրագործման համար երկրորդ խոչընդոտն այն էր, որ Կովկասի թաթարների մի զգալի մասը դեմ էր ինքնուրույն պետության ստեղծմանը և ցանկանում էր անմիջականորեն դառնալ Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մաս\*\*:

Օսմանյան կայսրության այն ժամանակվա արտաքին գործերի նախարար և Բաթումում բանակցություններ վարող Հալիլ Մենթեշեհն նույնպես հակ-

---

\* Իր հուշերում Հալիլ Մենթեշեհն հետևյալ կերպ է նկարագրում այս առաջարկության ներկայացումը վրացական պատվիրակության ղեկավարին. «Մի օր Ստամբուլից գաղտնագիր ստացա. «Գեգեչկորիի (Վրաստանի վարչապետ) հետ խոսիր, այս հայերին մեր մեջ կիսենք»: Ծիծաղելով հայտնեցի Ստամբուլի ցանկությունը: Հետևյալ պատասխանն ստացա. «Պարո՛ն, հսկայական Ռուսական և Օսմանյան կայսրությունները դրանցից գլուխ չհանեցին: Իմ փոքր Վրաստանը ինչպե՛ս կարող է այդ գլխացավանքն իր վրա վերցնել: Դրանք Թիֆլիսում (Վրաստանի մայրաքաղաք) 60 % մեծամասնություն են կազմում»» (տես «Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları». İstanbul, 1986, s. 229):

<sup>6</sup> Տես «Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), HR.SYS, no 2372/3, v. 77». «Azerbaycan Cumhuriyeti (1918-1920). Osmanlı Arşiv Belgeleri». İstanbul, 2018, s. 184 (փաստաթղթերի ժողովածու):

\*\* 1918 թ. Բաթումի բանակցություններում ադրբեջանական պատվիրակության անդամների մեծ մասը, բացի Մեհմեթ Էմին Ռասուլզադեից ու Նասիբ Յուսուֆբեյլիից, կողմնակից էր ոչ թե անկախ պետության, այլ Օսմանյան կայսրության մաս դառնալու: Ադրբեջանական պատվիրակության ղեկավար Նաքի Քեյրուրունին, որը նոր էր վերադարձել Ստամբուլից, որտեղ բանակցություններ էր վարել Թալեաթի կառավարության հետ, հաջողվել է պատվիրակության մյուս անդամներին համոզել հրաժարվել կայսրության մեջ մտնելու գաղափարից և պաշտպանել անկախ պետություն ստեղծելու դրույթը միայն օսմանյան պատվիրակության ղեկավար՝ Հալիլ Մենթեշեհի օգնությամբ, որը Ադրբեջանի պատվիրակության անդամներին համոզել է, թե չնայած բոլոր ցանկություններին՝ տվյալ պահին ուղղակիորեն միանալ Օսմանյան կայսրությանը հնարավոր չէ (տես *Naki Keykuran. Azerbaycan İstiklâl Mücadelesinden Hatıralar (1905-1920)*. Ankara, 1998, s. 110–112):

ված չէր Հարավային Կովկասում անկախ հայկական պետության ստեղծմանը, սակայն Հայաստանի պետության հռչակումը դիտում էր որպես «պատմական անհրաժեշտությամբ» թելադրվող անխուսափելի քայլ<sup>7</sup>: 1918 թ. մայիսի 23-ին կառավարության ղեկավար Թալեաթին ուղարկված հեռագրում նա առաջարկում է հնարավորություն տալ հայերին պետություն ստեղծելու Երևանի նահանգից մնացած տարածքում և նշում է, որ Կովկասում 1,5 մլն հայ է ապրում<sup>8</sup>: Բնութագրելով հայերին՝ նա նկարագրում է այն վտանգը, որը յուրաքանչյուր պարագայում պարունակում է հայկական անկախ պետության ստեղծումը. «Վեհ ազգային գաղափարախոսությամբ օժտված և ուժեղ ազգային արժանապատվությամբ կրակոտ ազգ է: Եթե հնարավոր չէ նրանց ի սպառ ոչնչացնել (*bunlari tek bir neferi kalmayincaya kadar imha etmek kabil olmayınca*), մեր պահանջած սահմաններում մեծ մասը մեզ մոտ, իսկ մյուս մասը Կովկասում թողնելով՝ մենք ստեղծում ենք մի հիմնախնդիր, որը մշտապես ալեկոծելու և կործանելու է Կովկասը, այն վերածելու է կայունությունից և անվտանգությունից զուրկ մի սադրանքի օջախի: Հյուսիսում կազակների, իսկ հարավում հայերի սպառնալիքի պարագայում Կովկասն ի վիճակի չի լինի գոյատևելու»<sup>9</sup>:

Նույն հեռագրում Հալիլ Մենթեշեն նշել է, որ «վրացիներն ու հայերն ունեն պետություն կազմելու անհրաժեշտ տարրեր, իսկ մահմեդականները՝ ոչ», և շեշտում է, որ ստեղծվելիք մահմեդական պետությունը կարող է գոյատևել միայն Թուրքիայի մշտական անմիջական աջակցության շնորհիվ<sup>10</sup>:

Օսմանյան կառավարության այն ժամանակվա մեծ վեզիր Մեհմեթ Թալեաթը հայկական պետության գոյության վերաբերյալ իր տեսակետը հայտնել է 1918 թ. մայիսի 24-ին Հալիլ Մենթեշեին գրած նամակում, որում, տեղեկացնելով, որ գերմանական կողմի հետ բանակցություններն ավարտվել են, և Անդրկովկասյան սեյմին ներկայացվելիք վերջնագրի խնդրում որևէ արգելք չի մնացել, հանձնարարում է 24 ժամվա ընթացքում վերջնագիրը ներկայացնել<sup>11</sup>: Խոսելով հայկական պետության գոյության մասին՝ նա նշում է. «Ես կտրականապես դեմ եմ, որ հայերը կառավարություն կազմեն: Փոքրիկ հայկական ինքնավարությունը հինգ տարի անց կվերածվի հինգ միլիոնանոց հայկական պետության և կտիրի ամբողջ Կովկասին և կվերածվի արևելքի Բուլղարիայի: Իրանում, Ամերիկայում ապրող բոլոր հայերը կտեղափոխվեն այնտեղ և, օգտվելով անգլո-ամերիկյան ու ֆրանսիացիների տրամադրած բազմակողմանի օգնությունից, առաջիկայում քրիստոնյա վրացիների և, շատ հավանական է, պարսիկների հետ կգործեն մեր դեմ: Այս պարագայում

<sup>7</sup> Տես «BOA, HR.SYS, no 2372/3, v. 55-57». «Azerbaycan Cumhuriyeti (1918–1920). Osmanlı Arşiv Belgeleri». İstanbul, 2018, s. 169 (փաստաթղթերի ժողովածու):

<sup>8</sup> Տես նույն տեղում:

<sup>9</sup> Տես նույն տեղում:

<sup>10</sup> Տես նույն տեղում:

<sup>11</sup> Տես «BOA, HR.SYS, no 2398/5, v. 113-115». «Azerbaycan Cumhuriyeti (1918–1920). Osmanlı Arşiv Belgeleri». İstanbul, 2018, s. 175 (փաստաթղթերի ժողովածու):

ամենաօգտակարը կլինի թարախակոյտն արմատահան անել: Եթե հնարավոր չէ, ապա այն պետք է ստեղծվի շատ թույլ և այնպես, որ չկարողանա գոյատևել»<sup>12</sup>:

Հայկական պետության գոյության և սահմանների հարցում Թալեաթի տեսակետը համընկնում էր Էնվերի մոտեցման հետ: Վերջինս 1918 թ. մայիսի 27-ին Վեհիբ փաշային ուղղված հեռագրում գրում է. «Եթե այսօր Կովկասում ստեղծել փոքրիկ Հայաստան հինգ-վեց հարյուր հազար բնակչությամբ, ապա ապագայում այդ կառավարությունը Ամերիկայից եկած հրահանգների համաձայն իր կազմում կհավաքի միլիոններ: Եվ մեզ մոտ՝ Արևելքում, կստեղծվի մի այնպիսի Բուլղարիա, որն ավելի թշնամաբար տրամադրված կլինի, քան Ռուսաստանը»<sup>13</sup>: Սակայն նույն Էնվերը հաշվի է առնում, որ «հայերին հարկավոր է իրենց գոյատևման համար ինչ-որ բան տալ: Այդ դեպքում, որպեսզի հայերն ապագայում այստեղ չամրապնդվեն, նրանց հարկավոր է թույլ տալ «գոյատևել» շատ թուլացած վիճակում: Միայն այդպես մեր կառավարությունը և կովկասյան մահմեդականները այսօր և ապագայում կարող են պաշտպանել իրենց շահերը, միայն այդպես կարելի է փրկվել հասունացող վտանգից»<sup>14</sup>:

Վեհիբ փաշան իր պատասխան հեռագրում նշում է, որ հնարավոր չէ բնաջնջել հայերին և հարկավոր է նրանց ինչ-որ բան տալ, ինչին ի պատասխան Էնվերը գրում է, որ հարկավոր է Գյանջայի կառավարության և Օսմանյան կառավարության միջև ունենալ ընդհանուր սահման<sup>15</sup>:

Այսպիսով՝ Հարավային Կովկասում պետութենաշինության առաջին իսկ օրերից երիտթուրքական կառավարությունը հստակ կերպով գիտակցում էր, որ առանց իրենց օգնության կովկասյան թաթարների պետությունը չի կարողանա գոյատևել, և կարևորում են նրանց հետ ընդհանուր սահման ունենալու հարցը, ինչն էլ հետագայում քենալական կառավարությունը իրականացրեց 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով:

1918 թ. Բաթումի պայմանագրով գծված Հայաստանի սահմանները լիովին համապատասխանում էին անկախ հայկական պետությանն առնչվող թուրքական մտահոգացումներին, մանավանդ որ նույն պայմանագրով Հայաստանի տարածքով անցնող հաղորդակցուղիների, առաջին հերթին՝ երկաթգծի նկատմամբ վերահսկողությունը հանձնվում էր Օսմանյան կայսրությանը:

Թույլ, հնարավորինս փոքր տարածքով հայկական պետության գոյության՝ որպես անցանկալի, բայց «պատմական անհրաժեշտության» ընկալումը բնորոշ էր նաև Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության քաղաքական հայեցակարգին, միայն թե այն վերապահումով, որ պատմական անցյալ չունեցող նորաստեղծ մահմեդական պետությունը առաջնորդվում էր ոչ թե ազգային, այլ կրոնական սկզբունքներով՝ ձգտելով իր կազմում նե-

<sup>12</sup> Տես նույն տեղում:

<sup>13</sup> Տես *Ջամիլ Հասանյու*, Նշ. աշխ., էջ 107:

<sup>14</sup> Տես նույն տեղում:

<sup>15</sup> Տես նույն տեղում:

րառելու Հարավային Կովկասի բոլոր մահմեդաբնակ շրջանները: Այդ մոտեցման թույլ կողմերից մեկն այն էր, որ շատ վայրերում բնակչությունը բազմազգ էր, իսկ կարևոր կենտրոններում, ինչպիսիք են Գանձակը\* (Գյանջա) և Բաքուն, կար մեծաթիվ հայկական բնակչություն: Ջգացնել էր տալիս նաև այն հանգամանքը, որ «Ադրբեջան» պետության ստեղծման հարցում գերակայում էին ոչ ազգային ձգտումներն ու շարժումը, այլ թուրքիայի դերը: Ինչպես նշել են այդ ժամանակվա մի շարք թուրք ռազմական ու քաղաքական գործիչներ<sup>16</sup>, Ստամբուլում էր մշակվել «մեկ պետության կազմում ադրբեջանների միավորման» և ըստ այդմ պետության անվանման ընտրության ռազմավարությունը, և անգամ այդ ռազմավարությունը կյանքի էր կոչվել թուրքական ռազմական ուժի շնորհիվ. նույնիսկ պետության մայրաքաղաքը նվաճել և ԱՂՀ-ին էր հանձնել Նուրի փաշայի «Իսլամական բանակը»<sup>17</sup>: Ինչպես նշել է Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը (Ռուբեն), Հայաստանին ԱՂՀ ներկայացրած տարածքային պահանջները ներառում էին ամբողջ Գանձակի գավառը, Ղարաբաղը, Սյունիքը (Ջանգեզուր), ինչպես նաև «Ադրբեջանը կուգեր իրեն միացնել Երևանի նահանգից՝ Նախիջևան և Շարուր գավառները, Երևանի և Էջմիածնի գավառներից՝ Սադարակի, Վեդիբասարի, Ջանգիբասարի շրջանները և Արաքսն աջ ափով, Մասիսի ստորոտներով՝ ամբողջ Սուրմալուն մինչև Կարսի նահանգը: Կարսի նահանգը եթե տաճիկներուն չէր լինելու, ապա նա պիտի տարածվեր մինչև Բաթումի շրջանը, որտեղից Ադրբեջանը դեպի ծովը ելք պիտի ունենար: Բացի դրանից, Սևանի լճի հյուսիսային ափերը Կարակայունլու ձորի հետ միացնելով, Բասարգեչարի շրջանը կպահանջեր Ադրբեջանը, որով Ղարաբաղի թիկունքը ամրացած կլիներ և իրեն միացրած իսլամ ազգաբնակչությունը: Այս հսկայական ծրագիրը ոչ դատարկ ցնորք էր և ոչ էլ զառացանք. դա մատչելի և բնական ծրագիր էր համարվում թուրք-թաթարների համար, որը իբրև տեսություն չէր թողնված դպրոցներին, այլ կեանքի մեջ կգործադրվեր 1919-ից, և այժմ էլ կը գործադրվի Անդրկովկասում»<sup>17</sup>:

\* ԱՂՀ անվտանգության պետ Նաքի Քեյքուրունը խոստովանում է, որ Գյանջայում, որը ԱՂՀ առաջին մայրաքաղաքն էր, հայ և թաթար բնակչության թվաքանակը հավասար էր, և 1917 թ. ընտրված առաջին քաղաքային խորհրդում հայերն ու թաթարներն ունեին հավասար ներկայացվածություն (յուրաքանչյուրը 25-ական հոգի) (տես *Նաքի Քեյքուրուն*, Նշ. աշխ., էջ 41):

<sup>16</sup> Տես, օրինակ, General *İsmail Berkok*. Tarihte Kafkasya. İstanbul, 1958, s. 516:

<sup>17</sup> Ադրբեջանական ազգային պայքարի և ազգային ձգտումների թուլության փաստը խոստովանել է նաև ադրբեջանցի մեծահարուստ Հաջի Ջեյնալաբեդին Տագիևը, որը 1918 թ. Բաքվում Նուրի փաշայի հետ հանդիպման ժամանակ ասել է. «Կովկասում մեր ազգային գաղափարը (*milli davamiz*) հարևաններից՝ հայերից և վրացիներից, հետ է մնացել: Մինչ այժմ նրանց արածի կեսն ենք արել, մեր ուժն այդքանի է բավարարում» (տես *Նաքի Քեյքուրուն*, Նշ. աշխ., էջ 41):

<sup>17</sup> Տես *Ռուբեն*, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է. «Արտասահման, Սասուն եւ Հայաստանի Հանրապետիին»: Գ. հրատարակութիին: Թեհրան, 1982, էջ 183:

Այդ հեռանետ ծրագիրը մասնակիորեն իրականացնելուց հետո ԱՂՀ գոյության վերջին ամիսներին մշակվել էր Հայաստանի հետ բնակչության փոխանակման նախագիծ-առաջարկ. Ադրբեջանում ապրող հայերը պետք է տեղափոխվեին Հայաստան, իսկ Հայաստանից «ազերի թուրքերը»՝ Ադրբեջան<sup>18</sup>:

1918 թ. օսմանյան պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ հայկական տարածքների բաժանման թուրքական առաջարկությունը իր պետության կենսունակության և անվտանգության գործոնների հաշվառմամբ մերժած Վրաստանի կառավարությունը 1918 թ. հունիսին ստեղծել էր «Հայաստանի և Ադրբեջանի հետ սահմանի ճշտման հանձնաժողով», որի կազմում էին Իրակլի Ծերեթելին, Ղափիդ Օնիաշվիլին, Ինգորոկովն ու գեներալ Օդիշելիժեն<sup>19</sup>: 1918 թ. հունիսի 11-ին Ինգորոկովը հանձնաժողովին զեկույց էր ներկայացրել, որում եզրակացրել էր, թե՛ «Որպեսզի Վրաստանը դառնա պետություն, նա պետք է ունենա սահմաններ, որոնք հարմար են ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմավարական տեսակետից: Արևելյան և հարավային կողմից Վրաստանի միակ բնական սահմաններն են՝ հարավից սահմանն անցնում է Փոքր Կովկասի բարձրունքով, անցնում է Բորչալուի գավառի հարավային սահմանի մոտով, Ղարաքիլիսայից հարավ, հասնում է Գոքչա լճի հյուսիսային ափ, շրջվում է դեպի հյուսիս, Աքսթաֆա գետով, հասնում է Չեգամ կայարան, ներառում է Ջաքատալայի շրջանը և ավարտվում է Սիլավատ սարով»<sup>20</sup>:

Զեկուցող Ինգորոկովը պնդում էր, որ «Պատմության ամբողջ ընթացքում նկատելի է, որ Վրաստանը ձգտել է տիրանալու նշված սահմաններին, և այդ սահմաններից դուրս չկա որևէ պաշտպանություն մինչև Սուրամի լեռնանցքը»: Ինչպես նշվում է հանձնաժողովի արձանագրությունում, «ազգաբազմական սահմանը զեկուցողը վճռականորեն մերժում է որպես պետականության պահանջներին չհամապատասխանող»<sup>21</sup>:

Հանձնաժողովը հրավիրել էր Ադրբեջանական և Հայկական ազգային խորհուրդների ներկայացուցիչներին քննարկելու սահմանների վերաբերյալ առաջարկությունը, սակայն Ադրբեջանի ազգային խորհրդի ներկայացուցիչները չէին ընդունել հրավերը, իսկ Հայկական ազգային խորհրդից հանդիպմանը եկել էին Ա. Խատիսյանը, գեներալ Ղորղանովը և Կարձիկյանը, որոնք, լսելով հանձնաժողովի կարծիքը, ասել էին, որ սահմանի հարցում իրենք պնդում են այն գծի վրա, որի մասին «երեք ազգերի ներկայացուցիչներն արդեն համաձայնության են եկել, երբ խոսք է եղել վարչական բաժանման մասին, այսինքն՝ Բորչալուի գավառի երկու երրորդը պետք է անցնի Հայաստանին, բայց Բորչալուի գավառի մեկ երրորդի փոխարեն, որը բնակեց-

<sup>18</sup> Տես *Նաթի Քելթուրուն*, Նշ. աշխ., էջ 162:

<sup>19</sup> Տես «Изъ истории армяно-грузинских отношений. 1918 годъ (пограничные конфликты; переговоры; война; соглашение)». Тифлисъ, 1919, с. 10:

<sup>20</sup> Տես նույն տեղում:

<sup>21</sup> Տես նույն տեղում, էջ 10–11:

ված է թաթարներով Ադրբեջանին հարկավոր է տրամադրել Սղնախի ուեզդի մեծ մասը»<sup>22</sup>:

Այսպիսով՝ հայկական պետականության գոյության վերաբերյալ վրացական տեսակետը տարբերվում էր Թուրքիայի և Ադրբեջանի մոտեցումից, քանի որ Վրաստանն իր ռազմավարական շահերի հաշվառմամբ հայկական անկախ պետության գոյությունը դիտում էր որպես անհրաժեշտություն, սակայն ևս հավակնում էր Հայաստանի տարածքի մի զգալի մասին՝ ցանկանալով իր պետության կազմում ներառել մինչև Սևանա լճի հյուսիսային ափն ընկած հատվածը:

Հայկական պետության ընկալման և նրա հետ փոխհարաբերությունների ձևավորման համատեքստում կարևոր դեր ունեցավ Հյուսիսային Կովկասի լեռնականների, Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական գործիչների շրջանում 1918 թ. վերջին ձևավորված և հետագայում համոզմունքի վերածված այն պատկերացումը, թե Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ընդհանրապես հայ քաղաքագիտական միտքը Հայաստանը չեն դիտում որպես զուտ կովկասյան պետություն, այլ վերագրում են ավելի լայն ընդգրկում: Ըստ նրանց՝ Հայաստանի Առաջին Հանրապետության վարած քաղաքականությունը հաստատում է, որ ՀՀ իշխանություններն իրենց ուշադրության կենտրոնում պահում էին ոչ թե Կովկասն ու համակովկասյան խնդիրները, այլ հետապնդում էին Հայաստանի շուրջ հայկական տարածքների միավորման նպատակը՝ միջազգային ասպարեզում պայքար մղելով Արևմտյան Հայաստանի համար: Ժամանակ առ ժամանակ Հայաստանի իշխանություններին մեղադրում էին «կովկասյան միասնության» խաթարման մեջ, ինչպես, օրինակ, 1919 թ. Կովկասի չորս հանրապետությունների համաժողովում ռազմական դաշինքի վերաբերյալ պայմանագիրը չստորագրելու մեջ<sup>23</sup>:

1920-ական թվականներին՝ արդեն վտարանդիության շրջանում, հարևան պետությունների քաղաքական գործիչները հրապարակեցին հոդվածներ, որոնցում վերլուծում և մեկնաբանում էին Հայաստանի Առաջին Հանրապետության վարած քաղաքականությունը, և այդ հոդվածներում հիմնական շեշտը դրվում էր «կովկասյան համադաշնության և միասնության ոգուն» հակառակ գործելու վրա: Այսպես. Լեռնականների հանրապետության արտաքին գործերի նախարար Հայդար Բամատն իր հրատարակած «Կովկաս» ամսագրի 1934 թ. ապրիլյան համարում հրապարակել էր «Կովկասյան համադաշնությունը և հայերը» հոդվածը, որում նշում էր, որ «հայկական կառավարող շրջանակները բոլոր իրենց հույսերը կապում էին Անտանտի պետությունների հաղթանակի և Մեծ ու Փոքր Հայքերի տարածքում թուրքական տիրապետության վերացման հետ և Համաձայնության պետությունների հաղթանակի պայմաններում հակված չէին մեծ նշանակություն տալու Կով-

<sup>22</sup> Տես նույն տեղում:

<sup>23</sup> Ավելի հանգամանորեն տես Դ. Կնյազյան, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918–1920 թթ.: Ե., 2008, էջ 103–112:

կասում պետական կազմավորումներին և կապելու դրանց հետ իրենց ճակատագիրը: Իրենց պատկերացնելով հաղթանակած պետությունների ուղեծիրում և սրբորեն հավատալով պատերազմի ժամանակ իրենց տրված խոստումներին՝ հայերը վերականգնված Հայաստանի ապագա տնտեսական և քաղաքական կենտրոնը տեսնում էին ավելի դեպի հարավ: Այդպիսով շուրջ գալով թիկունքով դեպի Կովկաս և ձգտելով հնարավորինս մեծացնելու իրենց կովկասյան տարածքները՝ նրանք ելնում էին այն ենթադրությունից, թե Հայաստանի և կովկասյան ժողովուրդների ճանապարհները վճռականորեն տարանջատվեցին»<sup>24</sup>:

Հեղինակն առաջ է քաշել այն դրույթը, որ սխալ քաղաքական հաշվարկների պատճառով հայկական պետականությունը հոդս ցնդեց: «Ազգային վերածննդի գործին հայ ժողովրդի բերած բազմաթիվ զոհերն անօգուտ եղան: Տրապիզոնից մինչև Ալեքսանդրեթ ձգվող Մեծ Հայաստանի կերտման գլխապտույտ երազանքները ծխի պես ցրվեցին: Սևրի տրակտատի արբեցնող օրերին հաջորդեց Լոզանի պայմանագրի դաժան առօրյան»<sup>25</sup>:

Հայդար Բամատը, որը Կովկասյան համադաշնության ստեղծման ջերմեռանդ ջատագովներից էր և վտարանդիությունում ակտիվ աշխատանք էր վարում դրա կազմավորման ուղղությամբ, բանակցելով Հարավային Կովկասի հանրապետությունների նախկին ղեկավարների հետ, զարմանք էր արտահայտում, որ հայ քաղաքական գործիչները նույնիսկ այս պայմաններում չարունակում էին պնդել Սևրի պայմանագրով Հայաստանի տարածքի վրա, և տարակուսանք էր հայտնում, թե «այժմ Սևրի պայմանագրով նախատեսված Հայաստանի սահմանների համառ և անզիջում դիրքորոշում ունեն հենց այն անձինք, որոնք ստորագրել են Ալեքսանդրապոլի պայմանագիրը»<sup>26</sup>:

1919 թ. Փարիզի խաղաղ վեհաժողովում Կրաստանի պատվիրակության անդամ Ջուրաբ Ավալիշվիլին, 1920-ական թթ. հրապարակված հոդվածներում նույնպես առաջ էր քաշում այն թեզը, որ ՀՀ իշխանությունների պատկերացումներում և վարած քաղաքականությունում Հայաստանը չէր դիտվում որպես կովկասյան պետություն: Ավալիշվիլին փորձում էր հայ քաղաքական կուսակցություններին հուշել այն գաղափարը, թե Թուրքահայաստանի կորստով ու Հայոց սփյուռքի ստեղծմամբ Հայաստանը վերջնականապես դարձավ կովկասյան երկիր, և որ «դա նրա, նախ, Բյուզանդիայի, ապա՝ այն նվաճած թուրքերի հետ դարավոր բախումների վերջաբանն է»<sup>27</sup>:

Եթե հյուսիսկովկասյան և վրաց քաղաքական գործիչներն առաջին հերթին կենտրոնանում էին կովկասյան վեկտորից Հայաստանի նախկին իշխանությունների տարանջատվելու, ռուսական գործոնը որպես վտանգ չընկա-

<sup>24</sup> Տես *Գայդար Բամատ*. Кавказская Конфедерация и Армяне. «Кавказ». Париж, 1934, № 4:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Տես "Der Kaukasus". Berlin, 1940, S. 85:

<sup>27</sup> Տես *Ա. Ավազյան*, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920–1971 թթ.): Ե., 2011, էջ 205:

լելու և, հակառակը, թուրքական գործոնը առաջնային վտանգ համարելու և ուժերն այդ ուղղությամբ կենտրոնացնելու հանգամանքի վրա, ապա ադրբեջանական քաղաքագիտական միտքն իր ուշադրության կենտրոնում էր պահում հայկական ինքնագիտակցությունում 1918 թվականին հաստատվող՝ կովկասյան թաթարներին և անատոլիական թուրքերին որպես միասնականության ընկալումը: Այսպես. ԱԴՀ խորհրդարանի անդամ, 1919 թ. Փարիզի վեհաժողովի ադրբեջանական պատվիրակության անդամ Աքպեր Ադա Շեյխուլիսլամովը, պատվիրակության ղեկավար Ալիմարդան Թոփչիբաշևին տեղեկացնելով Հ. Օհանջանյանի հետ ունեցած հանդիպման մասին, գրում է, որ Օհանջանյանը նշել է, թե սահմանային խնդիրները ոչ այնքան են անլուծելի, որքան թվում են<sup>28</sup>: «Հակամարտության հիմքում ընկած են Թուրքիայի նկատմամբ մեր ունեցած մոտեցումը, նրա հետ հաշվի նստելու ձգտումը, մի խոսքով այն, ինչ գրված էր թերթերում, ազնվորեն կրկնվեց մեզ»<sup>29</sup>:

Ներկայացնելով հանդիպումից իր ստացած տպավորությունը՝ Ա. Շեյխուլիսլամովը եզրակացնում է. «Երևում է՝ հայերին շատ է վախեցնում երեկվա «Անդրկովկասի մահմեդականների» ինքնագիտակցությունը, որոնք այսօր բացեիբաց խոսում են իրենց թուրքական ծագման մասին»<sup>30</sup>:

Այսպիսով՝ 1918 թ. Հարավային Կովկասում հայկական և վրացական պետականությունների վերականգնման և կովկասյան թաթարների (ադրբեջանական) նոր պետականության ստեղծման գործում ակնհայտ էր Օսմանյան կայսրության և ԱԴՀ շահերի համընկնումը այն առումով, որ հայկական պետությունը լինի հնարավորինս փոքր տարածքով, որը սահմանափակելու է զարգացման արդյունավետությունը, ինչպես նաև ճանապարհների վերահսկողությունը չպատկանի Հայաստանին:

Վրաստանը, շահագրգռված լինելով հայկական պետականության գոյության մեջ, միևնույն ժամանակ, ՀՀ-ի նկատմամբ ուներ տարածքային պահանջներ՝ ձգտելով իր պետության մեջ Հայաստանի հյուսիսային հատվածի ներառմամբ ստանալու հուսալի, անվտանգ սահման, ինչպես նաև պետության կենսունակության աճի տեսակետից ներուժ ունեցող գործոն:

Հարևան պետությունների քաղաքական շրջանների համար մտահոգիչ հանգամանք էր, որ պետականության վերականգնման առաջին իսկ պահից, չնայած ստեղծված ծանր պայմաններին, ՀՀ իշխանությունները չէն սահմանափակվում փոքր կովկասյան պետություն լինելու մտածելակերպով, այլ ավելի լայն աշխարհաքաղաքական պատկերացում ունեն Հայաստանի Հանրապետության թե՛ տարածքի, թե՛ զարգացման հնարավորությունների մասին՝ դրանք չկապելով գոյություն չունեցող «կովկասյան միասնության» հետ:

<sup>28</sup> Տես «Письмо А. А. Шейхульисламова А. М. Топчибаши относительно политики Англии в отношении Азербайджана, 4 января 1920 г. Лондон». А. М. Топчибаши. Парижский архив 1919–1940. В четырех книгах. Книга первая: 1919–1921. М., 2016, с. 314:

<sup>29</sup> Տես նույն տեղում:

<sup>30</sup> Տես նույն տեղում:



ВЗГЛЯДЫ СОСЕДНИХ ГОСУДАРСТВ НА СУЩЕСТВОВАНИЕ  
АРМЯНСКОГО ГОСУДАРСТВА И ЕГО ГРАНИЦЫ  
НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1918 г.)

*А. Г. АВАГЯН, доктор исторических наук, профессор, начальник управления  
сопредельных стран МИД РА, член Научно-консультационного совета  
ВНЖ «Айкакан банак»*

РЕЗЮМЕ

В ходе формирования в 1918 г. на Южном Кавказе новых государств по предварительному плану турецкого правительства младотурок предусматривалось создание двух государств – Грузии и мусульман Кавказа (по возможности, включающего в себя мусульман как Южного, так и Северного Кавказа). Территории же армян должны были быть поделены между этими государствами. Но вследствие невозможности осуществления этого плана была разработана новая стратегия, по которой армянское государство на Кавказе должно было быть сформировано на сильно урезанной территории с такой конфигурацией, которая бы лишала армянское государство возможности контролировать коммуникации и эффективно развиваться. Также намечалось создание общей границы государства кавказских татар (Азербайджана) с Турцией за счет армянских территорий, поскольку в противном случае это государство было бы нежизнеспособным, так как у его населения не было традиций государственности.

Данные подходы не потеряли своей актуальности и в настоящее время.

С точки зрения грузинского руководства существование независимого армянского государства соответствовало интересам Грузии, но оно стремилось включить в свой состав северные районы Армении.

**POLITICAL SCIENCE**

**THE NEIGHBORING STATES' VIEWS ON THE EXISTENCE  
OF THE ARMENIAN STATE AND ITS BOUNDARIES  
IN THE SOUTH CAUCASUS (1918)**

*A. G. AVAGYAN, Doctor of History, Professor, Head, Department of Bordering  
Countries, MFA, RA, Member, Academic-Advisory Council,  
Defense-Academic Journal "Haikakan Banak"*

**SUMMARY**

In the course of the formation of new states in the South Caucasus in 1918, the preliminary plan of the Young Turk government called for the establishment of two states – these being Georgia and the state of Caucasian Muslims (feasibly encompassing the Muslims of both the South and North Caucasus). As for the Armenian territories, they were to be divided between those two states. Since this plan was impossible to carry out, a new strategy was developed, according to which the Armenian state in the Caucasus was to be established on a considerably reduced territory with such a configuration that would deprive the Armenian state of the possibility to control over the communications, and to efficiently develop. In addition, it was designed to create a common frontier between the state of the Caucasian Tatars and Turkey at the expense of the Armenian territories, lest the former would be unviable since its population lacked statehood traditions.

Up-to-date, these approaches remain a live issue.

From the viewpoint of the Georgian government, the existence of the Armenian independent state was consistent with Georgia's interests, but it strove to integrate the northern regions of Armenia.

**ՆԵՐՆՈՒԺՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԳԵՆԵՐԱՏԻՎ ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ**

*Թ. Վ. ԶԱՄՂԱՐՅԱՆ, փոխգնդապետ, ՀԱՊՀ-ի Տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի ասպիրանտ, ՀՀ ԶՈՒ-ի կապի և ԱԿՀ վարչության ավագ սպա*



Տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը ներկայումս հնարավորություն է տալիս աղբյուրից սպառողին մեծ արագությամբ փոխանցելու մեծ ծավալի տվյալներ<sup>1</sup>: Սակայն լայնամասշտաբ թվայնացումն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր, քանի որ պետության արդյունաբերական օբյեկտների ՏՏ ենթակառուցվածքի վրա համակողմանի հարձակումը կարող է հսկայական վնաս հասցնել նրա պաշտպանական կարողություններին:

Պետությունները փորձում են պայքարել անբարյացակամ պետությունների ու խմբերի հարձակումների դեմ և այդ նպատակով օգտագործում են տարբեր մեթոդներ՝ տեխնիկականից մինչև կազմակերպական<sup>2</sup>:

Որպես կանոն, փորձ է արվում կենսականորեն կարևոր արդյունաբերական ու պաշտպանական ենթակառուցվածքների հաշվողական ցանցերը ֆիզիկական մակարդակում առանձնացնելու հանրային ցանցերից:

Ցանցային ենթակառուցվածքի շահագործման ժամանակ կարևոր խնդիրներից է ցանցային ենթակառուցվածքի այն վիճակի հայտնաբերումը, որը հանգեցնում է նրա ամբողջ համակարգի կամ դրա մի մասի ապակայունացման: Հարկ է նշել, որ ֆիզիկական մակարդակում ենթակառուցվածքի ապակայունացումը հնարավոր է հայտնաբերել կարճ ժամանակահատվածում: Միևնույն ժամանակ, բաց համակարգերի փոխկապվածության մոդելի

<sup>1</sup> Տես *С. И. Макаренко, М. С. Иванов. Сетецентрическая война, принципы технологии, примеры и перспективы. Монография. СПб., 2018:*

<sup>2</sup> Տես *Федеральный закон «О внесении изменений в Федеральный закон «О связи» и Федеральный закон «Об информации, информационных технологиях и о защите информации», 01.05.2019, № 90-ФЗ ([http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_323815/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_323815/)); Указ Президента Российской Федерации от 22 мая 2015 г. № 260 «О некоторых вопросах информационной безопасности Российской Федерации» (<https://rg.ru/2015/05/26/rosset-dok.html>); “Directive(eu) 2016/1148 of the European Parliament and of the Council of 6 July 2016 concerning measures for a high common level of security of network and information systems across the Union” (<https://eur-lex.europa.eu/eli/dir/2016/1148/oj>); “5G Supplement – to the Guideline on Security Measures under the EEECC. 2nd Edition, July 2021; “Forbidden Feeds. Government Controls on Social Media in China”. PEN America, 2018:*

(*ՐՀՓՄ, The Open Systems Interconnection model, OSI*)<sup>3</sup> բարձր մակարդակներում ապակայունացումը կարող է ունենալ երկարատև բնույթ: Նման դեպքերի վաղ հայտնաբերումը հնարավորություն կտա արագ կերպով տեղափակելու պրոբլեմը:

Ցանցային ենթակառուցվածքի անվտանգության խնդիրներից մեկը ներխուժումների ժամանակին հայտնաբերումն է, քանի որ միշտ չէ, որ ցանցի ամբողջ փոխանցողին (թրաֆիկը) անցնում է հուսալի հատվածներով, և կարող է նաև ներբեռնվել վնասաբեր բաղադրիչ:

Ցանցային ենթակառուցվածքը ենթակա է *CIA* մոդելի (*C-Confidentiality* (գաղտնիություն), *I-Integrity* (ամբողջականություն), *A-Availability* (հասանելիություն)) բոլոր երեք գրոհներին<sup>4</sup>:

Գործող ենթակառուցվածքի հասանելիության դեմ ուղղված գրոհների մոդելները կառուցվում են «մեկը՝ մեկին» և «մեկը՝ բոլորին» սկզբունքով. այսինքն՝ հարձակումը տեղի է ունենում մեկ աղբյուրից, իսկ բաշխված հարձակումների դեպքում՝ «բոլորը՝ մեկին» և «բոլորը՝ բոլորին» սկզբունքով<sup>5</sup>:

Տարբեր հետազոտություններում ցանցային ենթակառուցվածքի նկարագրության համար կիրառվում են տարբեր մոդելներ<sup>6</sup>, բայց առավել մեծ տարածում է ստացել աստիճանական (վերևից ներքև) մոդելը<sup>7</sup>: Տվյալ մոդելը բաղկացած է երեք մակարդակից, մասնավորապես՝

- հիմնական (*core layer*), որը պատասխանատու է մեծ ծավալի տվյալների հոսքի արագ կոմուտացման (հոսանադարձում) և տեղափոխման համար,
- բաշխման (*distribution layer*), որը պատասխանատու է տվյալների երթուղավորման, զտման և անհրաժեշտության դեպքում հիմնական մակարդակի հասանելիության ապահովման համար,
- հասանելիության (*access layer*), որը պատասխանատու է տեղեկատվական պաշարներին և ծառայություններին դիմելու դեպքում աշխատանքային խմբերի և օգտատերերի կառավարման համար:

<sup>3</sup> Stu "Information technology - Open Systems Interconnection - Basic Reference Model: The Basic Model". ISO/IEC 7498-1. Second edition 1994-1-1-1 5. Corrected and reprinted 1996-06-15:

<sup>4</sup> Stu *William Stallings*. Cryptography and Network Security: Principles and Practice. Fifth Edition. Prentice Hall, 2011:

<sup>5</sup> Stu *Օ. Ի. Шелухин, Д. Ж. Сакалеме, А. С. Филинова*. Обнаружение вторжений в компьютерные сети [сетевые аномалии]. М., 2013, сс. 5-6:

<sup>6</sup> Stu *Ս. Ի. Մակարենկո, Ս. Ս. Իվանով*, Նշ. աշխ., "Small Enterprise Design Profile (SEDP)–Network Foundation Design" ([https://www.cisco.com/c/dam/en/us/td/docs/solutions/Enterprise/Small\\_Enterprise\\_Design\\_Profile/chap2sba.pdf](https://www.cisco.com/c/dam/en/us/td/docs/solutions/Enterprise/Small_Enterprise_Design_Profile/chap2sba.pdf)); *Andrew S. Tanenbaum, David Wetherall*. Computer Networks. 5<sup>th</sup> Edition. PEARSON Prentice Hall, 2012; "Трехуровневая иерархическая модель компании Cisco" ([http://network.xsp.ru/5\\_7.php](http://network.xsp.ru/5_7.php)):

<sup>7</sup> Stu "Small Enterprise Design Profile (SEDP)–Network Foundation Design" ([https://www.cisco.com/c/dam/en/us/td/docs/solutions/Enterprise/Small\\_Enterprise\\_Design\\_Profile/chap2sba.pdf](https://www.cisco.com/c/dam/en/us/td/docs/solutions/Enterprise/Small_Enterprise_Design_Profile/chap2sba.pdf)); «Трехуровневая иерархическая модель компании Cisco» ([http://network.xsp.ru/5\\_7.php](http://network.xsp.ru/5_7.php)):

Հիմնական և բաշխման մակարդակներով անցնող փոխանցուղին<sup>8</sup> հաճախ մնում է առանց վերահսկողության, քանի որ տարբեր օպերատորների միջև փոխանցուղիների միակցման և փոխանակման կետերը (պիրինգային փոխանակման կետեր) ոչ միշտ են գտնվում վերահսկելի հատվածում, և հիմնական և բաշխման մակարդակներից կատարվող հարձակումը ոչ միշտ է հայտնաբերվում: Ի դեպ, ցանցային ենթակառուցվածքում առավել խոցելի է համարվում բաշխման մակարդակը, քանի որ այս մակարդակում աշխատող սարքերում մուտքագրված ծրագրային փոխդասավորությունը պետք է համապատասխանի երկու մակարդակի, ինչը մեծացնում է «գրոհի մակերեսը»<sup>9</sup>: Ներկայումս տեղի է ունենում փոխգործության (*Machine-to-Machine, M2M*) սկզբունքով կառուցված գրոհների թվի աճում<sup>10</sup>: Հակազդեցության միջոցները պետք է հիմնված լինեն ոչ միայն պաշտպանական սարքերում մուտքագրված փոխդասավորության վրա (քանի որ սարքավորման կարգավորումները, որոնք ներբեռնում է համապատասխան անձը, համեմատաբար «հաստատուն» են), այլև իրական ժամանակում օպերատիվ հակազդեցության վրա:

Ըստ վերը նշվածի՝ արդիական է դառնում ներխուժումներ հայտնաբերող այնպիսի համակարգի (*Intrusion Detection System, IDS*) կառուցումը, որը լինի իրական ժամանակում մեքենայական ուսուցման հիման վրա ինքնուսուցվող<sup>11</sup>: Մեր մշակած ալգորիթմը (հաշվեկարգ) արդյունավետ կերպով հնարավորություն է տալիս ստեղծելու նման համակարգ:

Դրա համար անհրաժեշտ է եղել լուծել հետևյալ խնդիրները.

- սահմանել ներխուժումներ հայտնաբերող համակարգի գործելու մակարդակը,
- համապատասխան տեսակների տվյալների հավաքածուների հիմքի վրա կառուցել գեներատիվ-մրցակցային ցանց (*generative adversarial networks, GAN*)<sup>12</sup>,
- կառուցել վիճակագրական վերլուծության մոդել,
- ներխուժումների հայտնաբերման համակարգի ալգորիթմի ծրագրային ապահովում:

<sup>8</sup> Տես *Michael Schwartz, Maciej Machulak. Securing the Perimeter. Deploying Identity and Access Management with Free Open Source Software. APRESS, 2018:*

\* Պիրինգ (անգլ. *peering*)՝ օպերատորների միջև կատարված ուղղակի համաձայնություն: – *Խմբ.*:

<sup>9</sup> Տես *Pratyusa K. Manadhata. An Attack Surface Metric. "IEEE Transactions on Software Engineering", May-June 2011, Vol. 37, Issue 3:*

<sup>10</sup> Տես *A. Imani, J. Haghighat. Security Challenges and Attacks in M2M Communications". 9th International Symposium on Telecommunications (IST), December 2018:*

<sup>11</sup> Տես *Sudhasan Ravichandiran. Deep Reinforcement Learning with Python. Master classic RL, deep RL, distributional RL, inverse RL, and more with open AI Gym and TensorFlow. Second Edition. Birmingham-Mumbai, September 2020; Avinash Navlani. Armando Fandango. Ivan Idris. Python Data Analysis: Perform data collection, data processing, wrangling, visualization, and model building using Python. Third Edition. Birmingham-Mumbai, 2021:*

<sup>12</sup> Տես *Ian J. Goodfellow, Jean Pouget-Abadie, Mehdi Mirza, Bing Xu, David Warde-Farley, Sherjil Ozair, Aaron Courville, Yoshua Bengio. Generative Adversarial Networks, 10 June 2014 (<https://arxiv.org/abs/1406.2661>):*

Աշխատանքի գիտական նորոյթը պայմանավորված է տարբեր փոխ-դասավորություններով ոչ համասեռ տվյալների հավաքածուների ընտրության օպտիմալացմամբ՝ գեներատիվ ցանցի կառուցման և ինքնուսուցման ժամանակ «առանց ուսուցչի»<sup>13</sup>:

Օպտիմալացում ասելով հասկանում ենք գեներատիվ-մրցակցային ցանցի մեջ ներբեռնված նախապես ընտրված չափանիշներով տվյալների հավաքածուների այնպիսի ձևափոխումը, որը մեծացնելու է դրա արդյունավետությունը: Դա անհրաժեշտ է, որպեսզի «գեներատիվ մոդելը» կարողանա մշակել «անհամադրելի» տվյալների հավաքածուները, քանի որ հավանական գրոհը տեղի է ունենում միաժամանակ ԲՀՓՄ մոդելի տարբեր մակարդակներում:

Սույն աշխատանքում «գեներատիվ մոդել» ասելով հասկանում ենք մի մոդել, որը տվյալների հավաքածու է գեներացնում ստոխաստիկ, հավանականային մոդելի սկզբունքով: Նշված մոդելի կիրառումը հնարավորություն է տալիս գեներացնելու նոր տվյալներ:

«Առանց ուսուցչի» գեներատիվ-մրցակցային ցանցը մեքենայական ուսուցման այնպիսի ալգորիթմ է, որը բաղկացած է երկու նեյրոնային ցանցերից. դրանցից մեկը գեներացնում է տվյալների նմուշներ (*G*-ցանց), իսկ մյուսը տարբերակում է «ձիշտ» և «սխալ» տվյալների նմուշները:

Ռեսուրսներնք բաշխման մակարդակում գտնվող ենթակառուցվածքի վրա հիմնական մակարդակից կատարվող գրոհը: Տվյալ ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տարբեր պետական կառույցներ ու գերատեսչություններ լայնորեն կիրառում են ինչպես սեփական, այնպես էլ վարձակալված կապուղիները, այսինքն՝ ցանցային ենթակառուցվածքը հիբրիդային է: Դա ստիպում է բոլոր համակցման կետերում տեղադրել տարբեր դասավորությամբ *IDS* համակարգեր (ինչը պայմանավորված է ծառայություն տրամադրող օպերատորի նկատմամբ վստահության մակարդակով):

«Հարձակման տարածության» հզորությունը հաշվարկելու համար<sup>14</sup> մշակվել է մի լուծում, որի հիման վրա սպառնալիքների մոդելը հնարավորինս մանրամասնորեն կառուցելու համար հնարավոր է վերլուծել և հաշվարկել հավանական հարձակումները ինչպես տվյալների հաղորդման ցանցի, այնպես էլ տեղային բաղադրիչների վրա: Գեներատիվ մոդելի ընտրությունը պայմանավորված է այն բանով, որ ի տարբերություն դետերմինիստական մոդելից, տվյալ մոդելը պարունակում է ոչ միայն ֆիքսված հաշվարկներ, այլև ստոխաստիկ տարր, որը հնարավորություն է տալիս հայտնաբերելու վնասաբեր բաղադրիչը, որը «գրանցված» չէ *IDS* համակարգի գործելու կանոններում (սույն աշխատությունում կիրառվել է Էնթրոպիայի աճման մեթոդը)<sup>15</sup>:

<sup>13</sup> Stu David Foster. Generative Deep Learning. Teaching Machines to Paint, Write, Compose and Play. O'Reilly, 2019:

<sup>14</sup> Stu A. B. Черемушкин. Криптографические протоколы. Основные свойства и уязвимости. Институт криптографии, связи и информатики. М., 2009:

<sup>15</sup> Stu O. P. Շելլոյխին, Դ. Ժ. Սակալենա, Ա. Ս. Ֆիլինովա, Նշ. աշխ.:

Մշակված ամբողջ համակարգում արդյունք ստանալու և համապատասխան որոշում ընդունելու համար կիրառվում են գծային, ոչ գծային, բազմ-անդամ, ռիջ (*ridge*), նվազագույն մոդուլների (*LAD, Least Absolute Deviation*), ապահովումային (լոգիստիկական) և բայեսյան ռեգրեսիայի մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս վերլուծվող փոխանցուղին մշակելու մի քանի փուլով: Մի քանի տեսակի ռեգրեսիաների ընտրությունը անհրաժեշտ է գեներատիվ մոդելով հնարավորինս ճիշտ պատասխան ստանալու համար:

Սույն հետազոտությունում, որպես գեներատիվ մոդելի առաջին փուլի վերլուծության գործիք, կիրառվել են գծային ռեգրեսիայի վիճակագրական մոդելը<sup>16</sup> և Ֆիշերի թեստը (*F-test*)<sup>17</sup>:

Գծային ռեգրեսիայի մոդելի՝ որպես առաջին փուլի վերլուծության գործիքի ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. ապակենտրոնացված մշակման դեպքում ծրագրային ապահովումը պահանջում է փոքր հաշվողական ռեսուրս,
2. հնարավորություն է տալիս հաշվարկներ կատարելու փոքր տվյալների հավաքածուների հիման վրա,
3. հնարավորություն է տալիս առաջին փուլում հայտնաբերելու «հայտնի» վնասաբեր բաղադրիչները, իսկ մնացածները հայտնաբերվում են ռեգրեսիայի վերոնշված մեթոդներով,
4. գեներատիվ մոդելի ուսուցումը տևում է կարճ ժամանակ:

Ստորև ներկայացնենք ռեգրեսիայի մոդելի հաշվարկումը:

*Որպես ելակետային պայմաններ ընտրվել են.*

- գծային ռեգրեսիայի հավասարումը՝  $y = ax + b$ , որտեղ,  $y$ -ը գեներատիվ մոդելի մշակման ներկայացվող փոխանցուղին է,  $x$ -ը՝ փոխանցվող փաթեթի մեջ ինկապսուլացված հավանական վնասաբեր փոխանցուղու թիվը,  $a$ ,  $b$  գործակիցները՝ գծային ռեգրեսիայի մոդելի շեղումը (մոդելը կառուցվել է այն պայմանով, որ  $a \neq 0$  և  $b \neq 0$ ):
- դիտարկման ժամանակահատվածը՝ 24 ժամ,
- կիրառվող արտոնագրված հաղորդակարգերը՝ հայտնի,
- բոլոր հանգույցներում իսկության վավերացումը, լիազորությունը և կատարված գործողությունների հաշվառումը (*Authentication, Authorization, Accounting, AAA*)<sup>18</sup> կատարված են,
- օժանդակ մեծությունների հաշվարկումները կատարվել են *“IBM SPSS Statistics”* ծրագրային ապահովման միջավայրում<sup>19</sup>:

Աղ. 1-ում ներկայացված են 24 ժամվա ընթացքում դետերմինիստական մոդելի կիրառմամբ *IDS* համակարգի հայտնաբերած միջադեպերի թիվը և փոխանցուղու քանակը:

<sup>16</sup> Տես *Т. Г. Максимова, И. Н. Попова. Эконометрика. СПб., 2018, сс. 7–21:*

<sup>17</sup> Տես *М. А. Ковалева, С. Б. Волошин. Анализ данных. М., 2019:*


<sup>18</sup> Տես *Б. С. Гольдштейн, В. С. Елагин, Ю. Л. Сенченко. Протоколы AAA: RADIUS и Diameter. СПб., 2011:*

<sup>19</sup> Տես *“IBM SPSS software” (https://www.ibm.com/analytics/spss-statistics-software):*

<i>t</i>	00	01	02	03	04	05	06	07	08	09	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	
<i>V</i>	15	14	26	46	65	6	65	56	40	50	53	43	56	54	56	45	40	40	40	54	14	23	65	98	78
<i>N</i>	32	33	53	803	63	505	52	40	65	155	6	50	50	98	635	56	65	60	7	20	56	95	65	65	

Որտեղ՝ *t*-ն ժամանակն է, *V*-ն՝ տվյալների հոսքի արագությունը (մբիթ/վ), *N*-ը՝ 1 ժամում *IDS* համակարգի հայտնաբերած միջադեպերի թիվը:

Որպես *IDS* համակարգ կիրառվել է «Սնորտ» (*Snort*) բաց ելակետային կողով համակարգը<sup>20</sup>: Նկ. 1-ում ներկայացված է 24 ժամվա ընթացքում դետերմինիստական մոդելով *IDS* համակարգի հայտնաբերած միջադեպերի թիվը:



Նկ. 1. 24 ժամվա ընթացքում դետերմինիստական մոդելով *IDS* համակարգի հայտնաբերած միջադեպերի թիվը

1) Կատարենք գծային ռեգրեսիայի *a* և *b* գործակիցների հաշվարկումը.

$$a = \frac{\sum x_i \sum y_i - n \sum x_i y_i}{(\sum x_i)^2 - n \sum x_i^2} = \frac{1102 \times 3129 - 24 \times 135554}{1102^2 - 24 \times 61560} \approx -0,74,$$

$$b = \frac{\sum x_i \sum x_i y_i - \sum x_i^2 \sum y_i}{(\sum x_i)^2 - n \sum x_i^2} = \frac{1102 \times 135554 - 61560 \times 3129}{1102^2 - 24 \times 61560} \approx 164,39:$$

Ըստ այդմ ռեգրեսիայի հավասարումը կստանա հետևյալ տեսքը՝

$$y = -0,74x + 164,39:$$

2) Զույգ-գծային համահարաբերակցող գործակցի (*r<sub>xy</sub>*) համար ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{n \sum x_i y_i - \sum x_i \sum y_i}{\sqrt{(n \sum x_i^2 - (\sum x_i)^2)(n \sum y_i^2 - (\sum y_i)^2)}} = \frac{24 \times 135554 - 1102 \times 3129}{\sqrt{(24 \times 61560 - 1102^2)(24 \times 1391165 - 3129^2)}} \approx -0,08 :$$

<sup>20</sup> Stu “Snort IDS/IPS” (<https://www.snort.org/>):



3) Ֆիշերի չափանիշի (F-test) հաշվարկմամբ ստանում ենք՝

$$F = \frac{r_{xy}^2}{1-r_{xy}^2} (n-2) = \frac{0,01}{1-0,01} (24-2) \approx 0,14 :$$

Համահարաբերակցության զույգ-գծային գործակցի պատահական վիճակագրական սխալների ( $m_{r_{xy}}$ ) համար՝

$$m_{r_{xy}} = \sqrt{\frac{1-r_{xy}^2}{n-2}} = \sqrt{\frac{1-(-0,08)^2}{24-2}} \approx 0,21 :$$

Տվյալների հավաքածուների հետ համակցված այս բոլոր պարամետրներն անհրաժեշտ են ներխուժումների հայտնաբերման համակարգի ինքնուսուցման համար:


Այժմ ներկայացնենք ներխուժման համակարգի ինքնուսուցման սխեման.

1. *IDS* դետերմինիստական համակարգի կիրառմամբ *N* թվով տվյալների գրանցում (դրանց հաղորդակարգերը գտնվում են հայտնի տիրույթում),
2. հայտնաբերված ներխուժումների հաշվարկում ըստ տեսակների,
3. գծային ռեգրեսիայի մեթոդով Ֆիշերի գործակցի հաշվարկում ըստ կիրառված հաղորդակարգերի ու պարամետրների հիման վրա ստացվող ցանցային փոխանցումների,
4. ստացվող արժեքների մուտքագրում մշակված գեներատիվ մոդելի ծրագրային ապահովման մեջ,


5. արդյունքի վերլուծություն:

Նոր միջադեպերի գրանցումից հետո գեներատիվ մոդելը վերադասավորվելու է ինքնուրույնաբար:


Նկ. 2, 3, 4 - ում ներկայացված են նպատակային և կանխասված գծային ռեգրեսիայի արժեքները «վատ» (*poorly trained*) ուսուցանված (*նկ. 2*), «լավ» ուսուցանված (*good trained*) (*նկ. 3*) և «վերաուսուցանված» (*over trained*) (*նկ. 4*) գեներատիվ մրցակցային ցանցի համար:



Նկ. 2. Գծային ռեգրեսիայի արժեքները «վատ» ուսուցանված գեներատիվ մրցակցային ցանցի համար



Նկ. 3. Գծային ռեգրեսիայի արժեքները «լավ» ուսուցանված գեներատիվ մրցակցային ցանցի համար



Նկ. 4. Գծային ռեգրեսիայի արժեքները «վերաուսուցանված» գեներատիվ մրցակցային ցանցի համար

Գծային ռեգրեսիայի գեներատիվ մրցակցային ցանցի մոդելը ուսուցանելու համար կատարվել են 18 փուլերով և 24 բազմակրկնություններով թեստեր, որոնց մի մասի արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Որտեղ՝  $t$ -ն գեներատիվ մրցակցային ցանցի ուսուցման քայլն է,

$a_t$  փաստացի-ն՝ գեներատիվ մրցակցային ցանցի փաստացի ուսուցման արագությունը,

$a_t$  կանխասված-ը՝ գեներատիվ մրցակցային ցանցի փաստացի ուսուցման արագությունը,

$R_{mse}$  փաստացի-ն՝ փաստացի արժանատի միջին շեղումի քառակուսուց,

$R_{mse}$  կանխասված-ը՝ շեղման միջին քառակուսու կանխասված արժանատի,

Աղյուսակ 2


$t$	$R_{mse}$ փաստացի	$R_{mse}$ կանխասված	$a_t$ փաստացի	$a_t$ կանխասված
0	0,757	0,751	4	2* 3** 6***
1	0,795	0,783	9	7* 9** 10***
2	0,831	0,828	14	8* 10** 15***
3	0,883	0,881	16	11* 13** 15***
4	0,941	0,913	18	13* 16** 19***

\* «վատ» ուսուցանված գեներատիվ մրցակցային ցանց,

\*\* «լավ ուսուցանված» գեներատիվ մրցակցային ցանց,

\*\*\* «վերաուսուցանված» գեներատիվ մրցակցային ցանց.

Նկ. 5-ում ներկայացված է 24 ժամվա ընթացքում գեներատիվ մոդելի կիրառմամբ  $IDS$  համակարգով հայտնաբերված միջադեպերի թիվը նախկինում կալված նույն տվյալների հավաքածուի հիման վրա (դրանց վերլուծությունը պատկերված է նկ. 1-ում):



Նկ. 5. 24 ժամվա ընթացքում գեներատիվ մոդելի կիրառմամբ գործող համակարգով հայտնաբերված ներխուժումների թիվը

Նկարներ 1-ում և 5-ում ներկայացված գրաֆիկների վերլուծությամբ պարզ է դառնում, որ  $01^{00}-02^{00}$ ,  $07^{00}-08^{00}$ ,  $11^{00}-13^{00}$ ,  $19^{00}-20^{00}$  ժամանակահատվածներում ցանցում տեղի են ունեցել անկանոնություններ, որոնք

ներխուժումների հայտնաբերման դետերմինիստական համակարգը չի հայտնաբերել, իսկ գեներատիվ մոդելով աշխատողը հայտնաբերել է:

Նշված միջադեպերը նաև ստուգվել են այլ գործիքարանով, և գեներատիվ մոդելով աշխատող համակարգով հայտնաբերված անկանոնությունները հաստատվել են որպես ոչ արտոնագրված ներխուժումների փորձեր:

Գեներատիվ մոդելի ինքնուսուցումը կատարվել է *“Scikit-learn”* մեքենայական ուսուցման (*Machine learning*) գրադարանի միջոցով<sup>21</sup>: Ելակետային կոդի այն հատվածները, որոնք կիրառվում են մշակված գեներատիվ մոդելում, ներկայացվում են ստորև:

1. Գծային ռեգրեսիայի մեթոդի ընտրություն.

```
# Add required imports; import matplotlib.pyplot as plt; import numpy as np; from sklearn import datasets; from sklearn.linear_model import LinearRegression:
```

2. Հավաքագրված տվյալների ներբեռնում.

```
IDS=datasets.load_IDS (rule: 7,56,98,78,15,1,14; stochastic:np 0-Ftest); IDS_level 2=IDS [search posix time exchange TCP packet]:
```

3. Մոդելի կառուցում և ուսուցանում.

```
lr=LinearRegression(); lr.fit (Ftrain, rxy_train, mrxy_train); predictions = lr.predict (IDSdata, «standard IDS»data); print = print (compare IDSdata, «standard IDS»data):
```

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ներկայացված աշխատանքում դիտարկվել է ներխուժումների հայտնաբերման համակարգում գեներատիվ մոդելի կիրառումը: Մշակվել և իրագործվել է մի ալգորիթմ, որի հիման վրա կառուցվել է ներխուժումների հայտնաբերման ինքնուսուցվող համակարգ:

Լուծվել են հետևյալ խնդիրները.

- ❖ մշակվել է գեներատիվ-մրցակցային ցանցի սկզբունքով գործող՝ *IDS* համակարգի ուսուցման սխեման,
- ❖ «*Մոդուլ*» բաց ելակետային կոդով *IDS* համակարգի համար կառուցվել և գործարկվել է «առանց ուսուցչի» գեներատիվ-մրցակցային ցանց, որը օպտիմալացված է տարբեր տեսակի հաղորդակարգերի և փոխանցողու հավաքածուների նկատմամբ, կառուցվել է վիճակագրության վերլուծության մոդել,
- ❖ համակարգը ներդրված է իրական ցանցում:

<sup>21</sup> Տես *“Scikit-learn. Machine Learning in Python”* պաշտոնական կայքը (<https://scikit-learn.org/stable/#>); *Ronald T. Kneusel. Practical Deep Learning. A python - based introduction. San Francisco, 2021:*

**ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ**

**МОДЕРНИЗАЦИЯ СИСТЕМЫ ОБНАРУЖЕНИЯ ВТОРЖЕНИЙ  
С ПРИМЕНЕНИЕМ ГЕНЕРАТИВНОЙ МОДЕЛИ**

*Т. В. ДЖАМГАРЯН, подполковник, аспирант кафедры Информационной безопасности и программного обеспечения НПУА, старший офицер Управления связи и АСУ ВС РА*

**РЕЗЮМЕ**

Существующие решения обнаружения сетевых аномалий как с открытым исходным кодом (*Snort, Suricata*), так и проприетарные (*Cisco Firepower NGFW*) строятся на основе детерминированных моделей. Но с ростом числа атак, основанных на межмашинном взаимодействии, растет и число вероятностных моделей атак, параметры которых изменяются по стохастическому (вероятностному) закону, и их обнаружение «стандартными» системами становится проблематичным.

В статье рассмотрен вопрос разработки и практической реализации гибридной системы обнаружения вторжений с применением генеративной модели «без учителя». В качестве математического аппарата для оценки критериев функционирования генеративной модели применен статистический метод регрессионного анализа.

**INFORMATION SECURITY**

**MODERNIZATION OF INTRUSION DETECTION SYSTEM VIA  
THE GENERATIVE MODEL**

*T. V. JAMGHARYAN, Lieutenant Colonel, Postgraduate Student, Chair, Information Security and Software, NPUA, Signal and AMS Department, the RA Armed Forces*

**SUMMARY**

The existing solutions for detecting network anomalies, both by open source (*Snort, Suricata*) and proprietary (*Cisco Firepower NGFW*), are built on the basis of deterministic models. But with the growth of number of attacks, based on the machine-to-machine interaction, the number of probabilistic attack models, the parameters of which change according to a stochastic (probability) law, and it becomes problematic to detect them by "standard" intrusion detection systems.

The article considers the issue of creating a hybrid intrusion detection system via a generative model "without a teacher". The statistical method of regression analysis was used as a mathematical apparatus to evaluate the criteria for the functioning of the generative model.

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱԿՈՐՈՒՄ**

*Ա. Հ. ԱՐԱՔԵԼՅԱՆ, տեխնիկական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի  
Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ,  
Գ. Մ. ՂՈՒԿԱՍՅԱՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,  
Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Տնտեսագիտության մեջ  
մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ*



Գաղտնիք չէ, որ Հայաստանն անկախացումից հետո գտնվում է մի տարածաշրջանում, որը բնութագրվում է տարբեր ուժային կենտրոնների շահերի մրցակցությամբ, պայթյունավտանգ Մերձավոր Արևելքում տեղի ունեցող քաղաքական, ռազմաքաղաքական ու բուն ռազմական զարգացումների ազդեցությամբ և այլ բազմաթիվ վտանգներով, սպառնալիքներով ու մարտահրավերներով<sup>1</sup>։

Դրանց գումարվում են նաև Ղարաբաղյան հակամարտության չլուծվածությունը, Թուրքիայի և Ադրբեյջանի բացահայտ թշնամանքը։ Նման իրավիճակում Հայաստանի Հանրապետությունն ստիպված է հիմնական ուշադրությունը սևեռել պաշտպանական ոլորտի հզորացման վրա՝ հաճախ ի հաշիվ այլ ոլորտների։ Սակայն մարդկային, նյութական ու տնտեսական ռեսուրսների սահմանափակությունը նրան պարտադրում են եղած ռեսուրսները ծախսել խիստ խնայողաբար, այսինքն՝ այնպես, որ դրանք չսպառվեն, և հնարավոր լինի անհրաժեշտության դեպքում (պատերազմի և տնտեսական-տրանսպորտային կատարյալ շրջափակման պայմաններում) հիմնվել եղած սուղ ռեսուրսների վրա։

Այս իրադրությունում հույժ կարևորություն է ստանում արդյունավետ ռազմավարության մշակումը՝ դրա իրագործման ընթացքի պարբերական գնահատմամբ ու շտկմամբ։ Խնդրի լուծման օպտիմալ տարբերակներից է ռազմավարության մաթեմատիկական մոդելավորումը՝ համապատասխան չափանիշային ցուցանիշների համակարգի կիրառմամբ։

Նման համակարգերի շարքում տնտեսագիտության մեջ առավել կիրառելիներից է Ռ. Կապլանի և Դ. Նորտոնի մշակած **ցուցանիշների հաշվեկշռված համակարգը, կամ հաշվեկշռված ցուցանիշների համակարգը (Balanced Scorecard)**<sup>2</sup>։ Սկզբնապես այն մշակվել էր առևտրային կազմակեր-

<sup>1</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»։ «ԱՏ», 2007, հմ. 4, էջ 29։

<sup>2</sup> Տես R. Kaplan, D. Norton. Balanced Scorecard: Strategic Performance Measurement System for Enterprise. "Management Press", 4. ed. Prague, 2005։

պությունների համար, ապա տեղափոխվել մի շարք այլ ոլորտներ: Սույն հետազոտության նպատակն է հիմնավորել դրա կիրառելիությունը նաև պաշտպանական ոլորտի համար՝ իհարկե, որոշակի փոփոխություններով:

Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը (ՑՀՀ) կազմակերպության ռազմավարական կառավարման ժամանակակից արդյունավետ գործիքներից է, որը հիմնված է կազմակերպության արդյունավետության չափման և գնահատման վրա՝ ըստ առանձնացված մի շարք ցուցանիշների, որոնք արտահայտում են կազմակերպության գործունեության բոլոր առումները՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական: Խոսքը կառավարչական և ռազմավարական-չափողական մի համակարգի մասին է, որն արտացոլում է ռազմավարական նպատակների և նախանշված արդյունքներ ապահովող պարամետրների ու գործոնների պատճառահետևանքային կապերը: Ինչպես նշում են ամերիկացի գիտնականները, արդյունավետության ցուցանիշների հաշվեկշռված համակարգը «մի նոր սխեմա է, որը հաշվետվության մեջ ներմուծում է ընկերության ռազմավարական զարգացման ցուցանիշները... Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի իրական նշանակալիությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ տեղի է ունենում դրա կերպափոխում գնահատումների համակարգից կառավարման համակարգի»<sup>3</sup>: Ընդամին Կապլանը և Նորտոնը առաջարկում են այն բանի հստակ նկարագրությունը, թե ինչն է անհրաժեշտ չափել և գնահատել կազմակերպության գործունեությունը հաշվեկշռելու համար<sup>4</sup>: Ըստ Նորտոնի և Կապլանի՝ կազմակերպության ՑՀՀ-ն կազմված է հետևյալ բաղադրիչներից՝ ֆինանսական, հաճախորդների հետ առնչվող, ներքին բիզնես գործընթացների, ուսուցման և աճման<sup>5</sup>:

Ինչպես նշվեց, ՑՀՀ գործիքակազմը արդյունավետորեն կիրառվում է նաև այլ ոլորտներում, մասնավորապես՝ հանրային կառավարման ոլորտում, պետության պաշտպանության համակարգում և այլն<sup>6</sup>: ՀՀ-ում, օրինակ, մշակվել են ՀՀ ու ԳՂՀ էներգետիկայի ոլորտների ՑՀՀ-ների վրա հիմնված ռազմավարական կառավարման, ինչպես նաև առողջապահական կազմակերպության կառավարման ՑՀՀ համակարգեր<sup>7</sup>:

<sup>3</sup> Տես *Роберт Каплан, Дейвид Норто́н*. Сбалансированная система показателей: от стратегии к действию, с. 31 (<https://pqm-online.com/assets/files/lib/books/norton1.pdf>):

<sup>4</sup> Տես *R. Kaplan, D. Norton*. Balanced Scorecard: Strategic Performance Measurement System for Enterprise. "Management Press", 4. ed. Prague, 2005:

<sup>5</sup> Տես նույն տեղում:

<sup>6</sup> Տես *M. Wisniewski, S. Olafsson*. Developing balanced scorecard in local authorities: a comparison of experience. "International Journal of Productivity and Performance Management", 2004, Vol. 53, N 7; *D. Lee*. Towards a way to enhance organizational effectiveness in the defense sector. "The Korean Journal of Defense Analysis", 2006, Vol. 18, N 1:

<sup>7</sup> Մշակումների մասին առավել մանրամասն տես *A. Arakelyan*. Balanced Scorecard of Armenian and German Energy Production and Supply Industries. "Proceedings of Armenian Engineering Academy", 2016, Vol. 13, N 3, նաև՝ *A. Arakelyan, A. Hakobjanyan, S. Nakashian*. Balanced model of entrepreneurial and employability relations to organization and employees. «Ֆինանսներ և Էկոնոմիկա», 2018, հմ. 5–6 (213–214):

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Պաշտպանության ոլորտի ռազմավարական կառավարման գործում ՑՀՀ գործիքակազմի կիրառման փորձ ունեն ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Կանադան: ՑՀՀ կիրառմամբ մոդելավորումը ԱՄՆ-ի բանակը դարձրեց ավելի կազմակերպված, տարաշարժուն և տեխնիկապես զարգացած՝ «ծառայելու ամերիկյան ժողովրդին, պաշտպանելու ազգային շահերը և կատարելու իր ռազմական պարտականությունները»<sup>8</sup>: Ավտոմատացման և ուսուցման բաղադրիչների համադրմամբ այն ԱՄՆ-ի բանակին հնարավորություն տվեց հաջողությամբ կարգավորելու իր գործունեությունը և կառավարելու աշխարհի տարբեր տարածաշրջաններում տեղակայված իր զինվորական անձնակազմը:

Կանադայում ՑՀՀ համակարգի վրա հիմնված պաշտպանական կառավարման արդյունավետության գնահատականը տրվեց Գիլիսի աշխատության մեջ: Նա առաջարկում է ՑՀՀ կիրառմամբ մի մոդել, որը ներառում է հետևյալ չորս տարրերը.

- ցանկալի պաշտպանական անվտանգային արդյունքների սահմանում,
- այդ արդյունքներին հասնելու միջոցների ու եղանակների որոշում,
- պաշտպանական ծրագրերի կատարման համար հատկացված ռեսուրսների կառավարում,
- արհեստավարժ, արդյունավետ կերպով գործող և հուսալի պաշտպանական թիմի ձևավորում<sup>9</sup>:

Ընդամին «յուրաքանչյուր առանցքային տարրի համար որոշվում է համապատասխան առանցքային ցուցանիշ, ինչը Պաշտպանական գերատեսչությանը հնարավորություն է տալիս իր ռազմավարական նպատակները կապակցելու պաշտպանական խնդիրների և բարեփոխումային նախաձեռնությունների հետ»:

Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունում մշակված՝ ՑՀՀ կիրառմամբ մոդելի համաձայն պաշտպանության արդյունավետությունը նկարագրվում է գնահատվում է ըստ հետևյալ չորս տարրերի՝

- ✓ նպատակ,
- ✓ ռեսուրսներ,
- ✓ ապահովումային գործընթացներ,
- ✓ ապագայի պահանջների հաշվառում:

Տվյալ ցուցանիշների հաշվառմամբ կառավարվում է Մեծ Բրիտանիայի պաշտպանության ոլորտը, որի ռազմավարական նպատակն է «ապահովել Միացյալ Թագավորության և Անդրծովյան տարածքների ժողովրդի անվտանգությունը՝ պաշտպանելով նրանց, այդ թվում՝ ահաբեկչությունից, և գործել ի

<sup>8</sup> Տես «BSC in Defense». “The KPI Institute” (<http://www.balancedscorecardreview.com/pages/bsc-in-practice/by-industry/bsc-in-defense-105.html>):

<sup>9</sup> Տես *L. G. Gillis*. Performance Measurement, a critical element in transformation of the Canadian Forces. Canadian Forces College, 2004:



բարություն՝ ամրապնդելով միջազգային խաղաղությունն ու կայունությունը»<sup>10</sup>:

Նշված պետությունների պաշտպանական ոլորտի զարգացման ռազմավարական կառավարման համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում կիրառվում է Կապլանի և Նորտոնի առաջարկած մեթոդաբանությունը: Նպատակահարմար ենք գտել ՀՀ-ի համար ընդլայնել չորս տարրերից կազմված ՑՀՀ մոդելը և դրանում ներառել նաև սպառնալիքների և կայուն զարգացման բաղադրիչները, որոնց միջոցով հաշվի են առնվում ՀՀ արագ փոփոխվող աշխարհաքաղաքական և քաղաքական միջավայրը, ՀՀ անվտանգության դեմ ուղղված ռազմական սպառնալիքները և մարտահրավերները, քանի որ ըստ ՀՀ «Ռազմական դոկտրինի»՝ Հայաստանի Հանրապետության հուսալի պաշտպանական կարողությունը «անվտանգության միջավայրի իրատեսական գնահատմամբ առկա և հնարավոր սպառնալիքներին ու վտանգներին հակազդելու (ընդգծումը մերն է – Ա. Ա.), դրանց չեզոքացմանն ուղղված ռազմական գործողություններ վարելու Ջինված ուժերի կարողությունների ամբողջությունն է»<sup>11</sup>:

Ռազմական սպառնալիքների մասով հարկ ենք համարում նշել հետևյալ նկատառումները: ՀՀ «Ռազմական դոկտրինում» դրանք, ըստ էության, նշված են: Սակայն այդ ցանկը արդեն որոշակիորեն ժամանակավրեպ է: Այսպես. հայտնի է, որ պատերազմների վարման եղանակները մեծապես պայմանավորված են զինված պայքարի միջոցների հնարավորություններով<sup>12</sup>: Իսկ վերջիններիս զարգացումը կատարվում է շատ արագ տեմպերով, և 2020 թ. աշնանը Հայաստանի դեմ Ադրբեջանն ու Թուրքիան սանձազերծեցին ըստ էության նոր սերնդի պատերազմ, որը Հայաստանի ռազմավարական անվտանգային-պաշտպանական փաստաթղթերում արտացոլված չէր (և չէր էլ կարող լինել): Ռուստի սպառնալիքների բացահայտումն ու գնահատումը պետք է կատարվեն անընդհատորեն:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ բնական միջավայրի ռազմական խաթարումները կարող են ունենալ երկարատև բնույթ: Այսպես. Վիետնամական պատերազմում (1955–1975 թթ.) ամերիկյան բանակը լայնորեն կիրառել է դեֆոլիանտներ՝ ջունգլիները սաղարթագրվելու համար: Հասցված վնասը մինչ օրս չի վերացվել<sup>13</sup>: Հայաստանի համար այս խնդիրն առանձնա-

<sup>10</sup> Stu “Ministry of Defence annual report and accounts Volume One 2008-2009: including the annual performance report and consolidated departmental resource accounts”, March 2009 ([https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/229300/0467\\_i.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/229300/0467_i.pdf)):

<sup>11</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «ԱՏ», 2007, հմ. 4, էջ 38:


<sup>12</sup> Այս հարցի վերաբերյալ ավելի հանգամանորեն տես, օրինակ, *Գ. Տավարածյան*, Փոփոխվող անվտանգային միջավայրի պայմաններում ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի դերն ու խնդիրները: «ՀԲ», 2019, հմ. 1:

<sup>13</sup> Տես “The toxic legacy of the Vietnam War”. “BBC News”, 21.02.2019 (<https://www.bbc.com/news/av/stories-47292948>); «Последствия применения США дефолиантов все еще сильны во Вьетнаме». «РИА Новости», 02.12.2015 (<https://ria.ru/20151127/1330010956.html>):

կի կարևորություն ունի, քանի որ 44-օրյա պատերազմի ժամանակ ադրբեջանա-թուրքական ագրեսորները կիրառել են ֆոսֆորային ռումբեր<sup>14</sup>: Ընդամին բնահամակարգերի համար վտանգներ առաջանում են ոչ միայն ռազմական գործողությունների ժամանակ, այլև տարաբնույթ զենքերի ստեղծման և արտադրության հետևանքով: Սույն նկատառումներով մենք որպես վեցերորդ տարր ներառել ենք շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունը, որը կազմում է կայուն զարգացման կարևոր բաղադրիչը:

Սույն տարրի առնչությամբ նշենք, որ ՀՀ բնական ռեսուրսների սահմանափակության պայմաններում սպառազինությունների զարգացումը պահանջում է մեծ ֆինանսական ծախսեր: Ըստ ռազմականացվածության համաշխարհային ինդեքսի (*GMI*)՝ 2019 թ. Իսրայելը և Սինգապուրը աշխարհում զբաղեցնում էին առաջին և երկրորդ տեղերը, իսկ Հայաստանը երրորդն էր: Սակայն 2020 թ. Հայաստանը շրջանցեց Սինգապուրին: Հիշենք, որ մեր պետությունն իր տնտեսական ցուցանիշներով նշանակալիորեն զիջում է այդ պետություններին: Այս հանգամանքը ևս հուշում է, որ ՀՀ-ն պետք է խիստ խնայողաբար օգտագործի իր սուղ բնական ռեսուրսները, ինչը շեշտում է կայուն զարգացման սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ մենք առաջարկում ենք ՀՀ պաշտպանական ոլորտի զարգացման ռազմավարության մշակման համար կիրառել ՑՀՀ մոդելը՝ հիմնված վեց տարրերի վրա: Դրանք են՝ նպատակ, ռեսուրսներ, ոլորտի հզորացման գործընթացներ, ապագա, սպառնալիքներ և կայուն զարգացում (նկ. 1):



Նկ. 1. Պաշտպանության ոլորտի համար հաշվեկշռված ցուցանիշների համակարգ

<sup>14</sup> Տես «Армения заявила о применении Азербайджаном фосфорного оружия». «РБК», 31 октября 2020 (<https://www.rbc.ru/rbcfreenews/5f9c92e49a7947c44d66e165>); Gilles Bader. Haut-Karabakh: la vidéo qui prouve l'utilisation d'armes au phosphore. "Le Point", 09.11.2020 ([https://www.lepoint.fr/monde/exclusif-haut-karabakh-la-video-qui-prouve-l-utilisation-d-armes-au-phosphore-09-11-2020-2400171\\_24.php](https://www.lepoint.fr/monde/exclusif-haut-karabakh-la-video-qui-prouve-l-utilisation-d-armes-au-phosphore-09-11-2020-2400171_24.php)):

<sup>15</sup> Կայուն զարգացումը նախատեսում է ներկայիս սերնդի կարիքների այնպիսի բավարարում, որի դեպքում ապահովվում է նաև ապագա սերունդների կարիքների բավարարումը (տես "Report of the World Commission on Environment and Development: Our Common Future". United Nations, 1987 (<http://www.un-documents.net/wced-ocf.htm>)):

Ավելի հանգամանորեն ներկայացնենք յուրաքանչյուր բաղադրիչի բովանդակությունը: Ընդամին այս վերլուծական բաժնում մենք հաշվի ենք առել ՑՀՀ այն կարևոր հատկությունը, որ տվյալ համակարգը, ըստ էության, կամուրջ է տեսականի և գործնականի միջև, և ըստ այդմ փորձել ենք որոշ չափով մոդելավորել ՑՀՀ -ի հիման վրա մշակվելիք ռազմավարությունը:

### **Նպատակի բաղադրիչ**

Նպատակի բաղադրիչով գնահատվում է պետությունը արտաքին ոտնձգություններից պաշտպանելու պաշտպանության ոլորտի պատրաստությունն ըստ հետևյալ գործոնների.

- պաշտպանության ոլորտում կատարվող աշխատանքները, որոնց նպատակն է խաղաղության ապահովումը և պատրաստությունը հնարավոր պատերազմական իրադրություններում պետության ռազմական անվտանգության ապահովմանը,
- զգոնությունը և արագորեն արձագանքելու ունակությունը, ինչը ներառում է աշխարհում տեղի ունեցող արագ փոփոխությունների հետևանքով հարևան պետությունների քաղաքական ուղեգծերի փոփոխությունների հաշվառմամբ պաշտպանության համակարգի հիմքը կազմող Ձինված ուժերի մարտունակ վիճակի պահպանումը, արդի ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ ապահովումը,
- ներքին և արտաքին քաղաքականությունը, որոնք նպատակաուղղված են. պետության ներսում՝ նրա ներքին կայունության ապահովմանը, արտաքին ոլորտում՝ դաշնակիցների հետ համագործակցության ամրապնդմանը, միջազգային հաստատությունների հետ գործընկերությանը անվտանգության միջավայրի ապահովմանը և արտաքին անկայունության վերացմանը:

### **Ռեսուրսների բաղադրիչ**

Ռեսուրսների բաղադրիչը վերաբերում է պետության ունեցած ռեսուրսների օգտագործման արդունավետության գնահատմանը:

Այն հիմնվում է հետևյալ տարրերի հաշվառման վրա.

- բնակչության պատրաստում պետության պաշտպանությանը, ռազմականորեն կրթված զորահավաքային ռեսուրսների ծավալում՝ հնարավոր ռազմական գործողություններին պահեստազորի ու կամավորների արդյունավետ մասնակցության ապահովման նպատակով,
- ֆինանսների ասպարեզում ֆինանսական կարողությունների ընդլայնում այն բանի հաշվառմամբ, որ պաշտպանության ոլորտի ֆինանսավորումը պաշտպանության ապահովման կարևորագույն բաղադրիչներից է: Այն ներառում է ֆինանսական միջոցների բազմազանություն, այդ թվում՝ հարկաբյուջետային և դրամական նախաձեռնությունների արդյունավետության մակարդակի բարձրացում,
- անշարժ գույքի առումով՝ մեծացնել պաշտպանության ոլորտի գույքի կառավարման արդյունավետությունը: Այդ գործում հիմնվել ակտիվ-

ների ճշգրիտ և ամբողջական գույքագրման վրա և նախաձեռնել ֆինանսական միջոցների աուդիտ,

- մարդկային ռեսուրսների ապահովում, մասնավորապես՝ ոլորտի զարգացման արդյունավետ ռազմավարական կառավարման համար որոշումներ ընդունող կադրերի պատրաստում՝ նրանց մասնագիտական գիտելիքների խորացմամբ ու ընդարձակմամբ, և այդ գիտելիքները գործնականում կիրառելու հմտության ձևավորում, առկա մարդկային ռեսուրսի խելամիտ օգտագործում և կառավարում:

### **Պաշտպանության ոլորտի հզորացման բաղադրիչ**

Պաշտպանության ոլորտի հզորացման բաղադրիչը բնութագրվում է հետևյալ գործընթացների արդյունավետությամբ.

- ռազմական տեխնիկայի գնումների ասպարեզում՝ կանոնավոր կերպով և անընդհատ աշխատակարգով վերանայել Ջինված ուժերի սպառազինման չափանիշներն ու ստանդարտները, գնահատել եղած միջոցների արդիականությունը և մարտունակությունը, կատարել յուրային պաշտպանության ոլորտում առկա ռազմական տեխնիկայի և աշխարհում գոյություն ունեցող սպառազինության լավագույն նմուշների մարտավարատեխնիկական բնութագրիչների համեմատական վերլուծություն, դրա հիման վրա կայացնել Ջինված ուժերի վերազինման մասին որոշումներ,
- պաշտպանական ոլորտի ենթակառուցվածքների արդիականացում, որը ենթադրում է հետևյալ միջոցառումները. արդիականացնել ինժեներական ենթակառուցվածքները և գնահատել պատերազմի ժամանակ դրանց մարտավարական նշանակությունը, կատարել ներդրումներ ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների արդիականացման և հնարավոր ռազմական գործողություններում դրանց արդյունավետության մեծացման նպատակով,
- ռազմական արդյունաբերություն. պաշտպանության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում ներգրավել առաջատար մասնագետների և կազմակերպել հայրենական ռազմական արտադրություն, ինչի համար զարգացնել հուսալի, երկարաժամկետ և փոխշահավետ համագործակցություն գործընկեր պետությունների հետ,
- ժամանակակից դինամիկության պայմաններում նախապատվելի են սպառազինությունների, ռազմական և հատուկ տեխնիկայի այն համակարգերը, որոնց արդիականացումը և բացազատումը հնարավոր է կատարել կարճ ժամանակում,
- անվտանգության կանոնների պահպանում. նվազագույնի հասցնել ոչ մարտական պայմաններում կորուստներն ու վնասները,
- զինծառայության հեղինակություն. քարոզչական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային նախաձեռնություններով մեծացնել Ջինված ուժերի և զինվորական գործի հեղինակությունը,
- արդյունավետ կառավարման ոլորտում որոշումների կայացման և

վերահսկողության մեխանիզմները և ընթացակարգերը դարձնել ամբողջովին հաստատութենացված: Վերահսկողության մեխանիզմները պետք է պատասխանեն հետևյալ հարցերին.

1. արդյո՞ք տվյալ քաղաքականությունն լիովին ընկալելի է զինվորականության համար,

2. ի՞նչ եղանակով է այդ քաղաքականությունն իրականացվում,

3. որո՞նք են իրականացված այդ քաղաքականության արդյունքները<sup>15</sup>:

ՀՀ-ում պաշտպանության ոլորտի հզորացումը մեծապես պայմանավորված է.

- տնտեսության արտադրական ներուժի մեծացմամբ,
- բնակչության կենսամակարդակի բարձրացմամբ,
- բարենպաստ ներդրումային միջավայրի առկայությամբ,
- արտադրության հետ գիտակրթական և գիտահետազոտական ոլորտների փոխգործության աստիճանով:

**Տնտեսության արտադրական ներուժի մեծացումը** հնարավոր է ապահովել բնական, ֆինանսական, մարդկային և տեխնոլոգիական ռեսուրսների արդյունավետ օգտագործման դեպքում, ինչի շնորհիվ տեղի կունենա արդյունաբերական բազայի ընդլայնում, տարածքային համաչափ զարգացում և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում: Առկա ռեսուրսների օգտագործման արդյունավետության մեծացումը հնարավոր է արտադրողականության մեծացման, օտարերկրյա և ներքին մեծածավալ ներդրումների ներգրավման, մարդկային մտավոր, առաջին հերթին՝ մասնագիտական կարողությունների զարգացման և արտադրության տեխնիկական ու տեխնոլոգիական վերազինման միջոցով:

**Բնակչության կենսամակարդակի բարձրացումը** ենթադրում է նվազագույն ու միջին աշխատավարձերի և սոցիալական ապահովության մակարդակների բարձրացում: Կենսամակարդակի բարձրացումը հնարավորություն է տալիս խթանելու ծնելիության աճումը, նվազեցնելու արտագաղթը և «ուղեղների» արտահոսքը, կրճատելու տարածքային զարգացման անհամաչափությունները: Այսպիսով՝ բնակչության կենսամակարդակի բարձրացումը հանգեցնում է տնտեսության մոբիլիզացիոն հնարավորությունների մեծացման:

**Ներդրումային բարենպաստ միջավայրի առկայությունը** հնարավոր է գործարարության զարգացմանը միտված պետական քաղաքականության իրականացման, տնտեսական ոլորտի պետափրավական կարգավորման համակարգում անընդհատորեն իրագործվող բարեփոխումների պրակտիկայի դադարեցման, իրավական դաշտում բացթողումների վերացման, ՀՀ միջազգային ինտեգրման սերտացման, «ուղեղների» արտահոսքի կասեցման և մարդկային ռեսուրսների մտավոր ներուժի զարգացման դեպքում:

<sup>15</sup> Stu H. Bucur-Marcu, P. Fluri, T. Tagarev. Defence management: An introduction. Geneva, 2009 ([https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/Defence\\_Management\\_Intro.pdf](https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/Defence_Management_Intro.pdf)):

*Համապետական մակարդակում արտադրության հետ գիտակրթական ու գիտահետազոտական ոլորտների փոխգործության սերտացումը* հնարավորություն կտա խթանելու պաշտպանության ոլորտում նորամուծական գաղափարների ու գործընթացների ներդրումը, ամբողջ ծավալով իրացնելու նորարարական ներուժը, գիտատեխնիկական և տեխնոլոգիական ոլորտներում մեծացնելու մարդկային ռեսուրսների ներգրավման ծավալը, կանխելու «ուղեղների» արտահոսքը, զարգացնելու մարդկային ռեսուրսների մտավոր ներուժը և բարձրացնելու տեղական արտադրանքի մրցունակության և արտադրողականության մակարդակները:

#### **Կայուն զարգացում**

Կայուն զարգացման բաղադրիչը արտացոլում է պաշտպանության ոլորտին առնչվող սոցիալ-տնտեսական, ռազմատեխնիկական քաղաքականության և շրջակա միջավայրի պահպանման արդյունավետությունը:

Հետպատերազմական շրջանի կայուն զարգացման բաղադրիչի գնահատման համար առաջարկվում են ցուցանիշներ, որոնք բնութագրվում են հետևյալ կերպ.

- պետության ռազմական ներուժի հզորացման համար նախատեսված ֆինանսական միջոցների մի զգալի մասը պետք է ուղղվի դեպի նոր տեխնոլոգիաների ներդրում, ռազմական արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծում, ինչպես նաև գործող կազմակերպությունների ընդլայնում և զարգացում: Կարևոր նշանակություն ունի ռեսուրսների արդյունավետ բաշխումը: Այս առումով արժեքավոր է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի փորձը, երբ եկամտի բաշխման համահարթեցումը նպաստեց մեծ սպառողական ներուժ ունեցող միջին խավի ձևավորմանը և հիմք դարձավ հետպատերազմյան երկարատև ծաղկման համար: Այս մոտեցումը դրված էր ԱՄՆ-ի հետագա քաղաքական ու տնտեսական գերակայությունների հիմքում<sup>16</sup>,
- պատերազմի սոցիալ-տնտեսական (սոցիալ-ժողովրդագրական) հետևանքներն արտահայտվում են բնակչության թվի նվազմամբ, սեռատարիքային բաշխման խախտմամբ, գործազրկության աճմամբ: Անկում են ապրում հիմնական սոցիալական ոլորտների (առողջապահություն, կրթություն և այլն) ծառայությունների հասանելիության ցուցանիշները և այդ ծառայությունների աշխատանքից բնակչության գոհունակության գնահատականները,
- ռազմական գործողություններն առաջացնում են ծանր բնապահպանական հետևանքներ, ինչի պատճառով բնահամակարգերը խաթարվում են ինչպես ռազմական գործողությունների թատերաբեմում, այնպես էլ դրանից դուրս<sup>17</sup>: Շրջակա միջավայրի վրա պատերազմի ազդեցության

<sup>16</sup> Տես «Institute for Economics and Peace» կայքէջը (<https://www.economicsandpeace.org/>):

<sup>17</sup> Տես Արթուր Հ. Ռիեստինգ, Մալվերն Լամսդեն, Նշ. աշխ.:

հետևանքներն արտահայտվում են ֆիզիկական, կենսաբանական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի աղետալի իրավիճակների ձևով: Այդպիսիք են օդի, հողի ու ջրի ուղղակի աղտոտումը, հասարակական ենթակառուցվածքների խաթարումը և այլն<sup>18</sup>,

- բնապահպանական գործոնը ներառում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների օգտագործման, անտառային տնտեսության բնագավառում աշխատանքների կատարման, պետական արգելոցների և ազգային պարկի ստեղծման ու պահպանման, ջրառի և ջրօգտագործման ցուցանիշները, ինչպես նաև մթնոլորտային օդն աղտոտող անշարժ աղբյուրներից գոյացած վնասակար նյութերի, արտանետումների, թափոնների առաջացման և վնասագերծման ցուցանիշները,
- մարտական գործողությունների ընթացքում ժամանակակից զենքի և տեխնիկայի կիրառումը խիստ բացասաբար է ազդում ոչ միայն բնական միջավայրի, այլև քաղաքացիական բնակչության վրա: Չնայած, որ մի շարք սպառազինությունների ու զենքերի կիրառումն արգելող միջազգային իրավունքը և ազգային օրենսդրությունը պետք է պարտադիր կերպով կիրառվեն, այնուամենայնիվ, պատերազմի ժամանակ այդ պահանջները հաճախ անտեսվում են<sup>19</sup>:

Պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարության իրացման կարևոր գործիքներից պետք է լինի «պլանավորում–ծրագրում–բյուջեավորում» համակարգի լիարժեք կիրառումը: Այս համակարգը ոչ այնքան բյուջեական տեխնիկա է, որքան պլանավորման, ծրագրման, բյուջեավորման ինտեգրված տեխնիկաների համախումբ: Դրա էությունն է պլանավորման գործում պաշտպանության նպատակների, խնդիրների և առաջնահերթությունների սահմանումը, այնուհետև, ծախսերի գնահատումը և այն ռեսուրսների որոշումը, որոնք անհրաժեշտ են մեծ ծրագրերի միջոցով նպատակներին հասնելու համար: Բյուջեավորման փուլում գնահատվում են տվյալ ֆինանսական տարվա համար ծախսերը և ֆինանսական բաշխումները, մինչդեռ իրականացման փուլը վերաբերում է ծրագրի իրագործմանը և բյուջեի կատարմանը, ինչով ապահովվում է ամբողջ գործընթացի անհրաժեշտ հետադարձ կապը<sup>20</sup>: Այս իմաստով «պլանավորում–ծրագրում–բյու-

<sup>18</sup> Stu Victor W. Sidel, Barry S. Levy and Jonathan E. Slutzman. Prevention of War and Its Environmental Consequences. "Handbook of Environmental Chemistry", January 1970, Vol. 3: "Anthropogenic Compounds"; նաև՝ "How Syria's Decade-Long War Has Left a Toxic Environmental Legacy". "Time", 15 Marc 2021 (<https://time.com/5946800/syrian-war-environmental-impact/?fbclid=IwAR1ULYQrYgltweZvOee1zIWW8xDeDHuth7tor2sJwfSBXW715pQ8SAVByPA>):

<sup>19</sup> Stu "How does war damage the environment?". "Conflict and environment observatory", 4 June 2020 (<https://ceobs.org/how-does-war-damage-the-environment/>); նաև՝ «Армения заявила о применении Азербайджаном фосфорного оружия». «РБК», 31 октября 2020 (<https://www.rbc.ru/rbcfreenews/5f9c92e49a7947c44d66e165>):

<sup>20</sup> Stu "Planning, programming, budgeting, evaluation system – benefits and challenges". Workshop unfolded during the postgraduate course in Planning Programming Budgeting System, 01.03 - 02.04.2010, Brasov. National Defence University "Carol I", Bucharest 2010:

ջեավորում» համակարգը օգտագործվում է գործառնական պահանջները ֆինանսական պարտավորությունների հետ կապելու համար: Այդ համակարգի շրջանակներում գնահատվում է առկա ռեսուրսների համապատասխանությունը դրված նպատակներին: Ընդ որում, հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան բյուջեավորման միջոցների կատարողականի, որքան արդյունքների գնահատման վրա:

Պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարական ձեռնարկումներում պետք է անպայմանորեն հաշվի առնվի ժամանակի գործոնը: Վերջինիս դրսևորումը բազմակերպ է: Մասնավորապես՝

- ✓ միջոցառման իրականացման պլանի հիմնավորման դեպքում կարող է պարզվել, որ երկու կամ ավելի տարբերակներ հնարավորություն են տալիս նույն ծախսերի դեպքում ստանալու նույն արդյունքը, սակայն՝ տարբեր ժամանակներում: «Ծախսեր–արդյունք» չափանիշներով դասական գնահատման դեպքում այդ արդյունքները կլինեն հավասարազոր: Իրականում նախապատվությունը պետք է տալ այն տարբերակին, որը հնարավորություն է տալիս նպատակին հասնելու ավելի կարճ ժամանակում,
- ✓ ռազմական տեխնիկայի բարդ համալիրների ստեղծումը, զորքերի համար ուսումնանյութական բազայի ստեղծումը և ռազմական նախանշանակման օբյեկտների կառուցումը կարող է կատարվել սահմանված ժամկետներում, սակայն միջոցառումների իրականացման տարբեր միջոցների, նյութական, աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների սպառման տարբեր տեմպերով: Եթե, այդուհանդերձ դրված նպատակն իրագործվում է սահմանված ժամկետում, ապա գերադասելի պետք է համարել այն տարբերակը, որի դեպքում ռեսուրսներն սպառվում են համեմատաբար դանդաղ:


### Սպառնալիքների բաղադրիչ

«Հ պաշտպանական ոլորտի զարգացումը ենթադրում է այնպիսի համակարգի ստեղծում, որն ի վիճակի լինի արդյունավետ հակազդեցություն գործելու ինչպես ներկայումս առկա, այնպես էլ ապագայում հավանական (կանխատեսվող) սպառնալիքներին: Դա պահանջում է սպառնալիքների գնահատման ու կանխատեսման մեթոդաբանության կատարելագործում՝ նոր մոտեցումների կիրառմամբ: Մեր կարծիքով՝ որպես նման մոտեցում կարելի է կիրառել հետևյալ մոդելը, որը հնարավորություն է տալիս ձևավորելու «ելակետային տվյալների համախումբը՝ պետության ռազմական կազմակերպվածքի հեռանկարային կերպարանքի կերտման և ՋՈՒ-ի, մյուս զորքերի, զորային կազմավորումների ու մարմինների կիրառման գծով այն միջոցառումների հիմնավորման համար, որոնք նպատակաուղղված են պլանային ժամանակաշրջանում երկրի պաշտպանությանը և պետական ու հասարակական անվտանգության ապահովմանը»<sup>21</sup>:

<sup>21</sup> Ств «Методика оценки и прогнозирования военных опасностей и военных угроз». В кн.: «Стратегическое прогнозирование международных отношений». МГИМО, 2016 (<http://eurasian-defence.ru/?q=node/39456>):



Տվյալ մեթոդաբանության հիմքում դրված է հիմնական գործոնների փոխազդեցության մոդելը, որի էությունը, ռազմական սպառնալիքներ ու վտանգներ ձևավորող գործոնների ցանկն ու փոխազդեցությունը ՀՀ-ի և նրա հետ ռազմաքաղաքական հարաբերությունների (ՌՔՀ) սուբյեկտի համար պատկերված են նկ. 2-ում:



Նկ. 2. Ռազմական վտանգը, ռազմական սպառնալիքը և ռազմական անվտանգության ձեռք բերվող աստիճանը պայմանավորող գործոնների փոխազդեցության սկզբունքային սխեմա<sup>22</sup>

Տվյալ մոդելի կիրառման դեպքում, ինչպես նաև ռազմավարական կառավարման պլանավորման ժամանակ, կարծում ենք, հույժ կարևոր է պատճառահետևանքային շղթաների ճշգրիտ բացահայտումը և գնահատումը:

Կարևորում ենք նաև ՀԱՊԿ-ի շրջանակում Հայաստանի Հանրապետության ռազմական ռազմավարական կառավարման միասնական ընթացակարգերի մշակումը և դրանց գործնական իրականացումը:

Այս ընդհանուր դատողություններից բացի, հարկ ենք համարում ներկայացնել ՀՀ-ի համար, մեր կարծիքով, առավել ցայտունորեն արտահայտված հիմնական սպառնալիքները:

- ❖ Հայաստանը տարածաշրջանում միջուկային էներգիա օգտագործող միակ երկիրն է ու հետևաբար Հայկական ատոմակայանը սպառնալիքի աղբյուր է. դրանով է պայմանավորված տեխնոգեն աղետի հնարավորությունը:
- ❖ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության դեմ ուղղված ռազմական սպառնալիքները ոչ միայն շարունակում են գոյություն ունենալ, այլև ստանում են ավելի լայն ընդգրկում՝ ռազմաքա-

<sup>22</sup> Տես նույն տեղում:

ղաքական, աշխարհագրական, տնտեսական, տարածքային և այլ բնույթի:

- ❖ Հայաստանի սահմանների մոտ կարող են առաջանալ մեծամասշտաբ զինված հակամարտություններ, այդ թվում՝ մեծ պետությունների միջև:
- ❖ Ադրբեջանը և Թուրքիան ձգտում են միմյանց միջև ստեղծելու տրանսպորտային կապ ի հաշիվ Հայաստանի տարածքի: Ընդամին եթե տրանսպորտային կապը չստեղծվի և Հայաստանը փորձի խոչընդոտել դրան, նրանք սպառնում են այդ խնդիրը լուծել Հայաստանի դեմ նոր լայնամասշտաբ պատերազմի սանձազերծմամբ:
- ❖ 44-օրյա պատերազմը ցույց տվեց, որ Ադրբեջանը և Թուրքիան Հայաստանի ու Արցախի դեմ պատերազմում լայնորեն օգտագործում են արաբական երկրներում հավաքագրված վարձկանների: Բացի այդ, քանի որ չկան հավաստի տվյալներ, որ այդ ահաբեկիչները լքել են պատերազմական գոտին, կարելի է որոշակիորեն հնարավոր համարել, որ Ադրբեջանը և Թուրքիան փորձում են Արցախի բռնազավթված տարածքներում բնակեցնել այդ վարձկաններին՝ սպառնալով Արցախի և Հայաստանի դեմ պատերազմի վերսկսմամբ<sup>23</sup>:
- ❖ 44-օրյա պատերազմում Հայաստանի և Արցախի կորուստները ինչպես մեծաթիվ մարդկային էին, այնպես էլ տարածքային: Հաղթանակի շնորհիվ Ադրբեջանն սպառնում է իր տնօրինության տակ առնել ջրային ռեսուրսները, ինչին կարող է հետևել Հայաստան հոսող գետերի և լճերի թունավորումը:
- ❖ Ադրբեջանը հող է պատրաստում ապագային միտված սպառնալիքների շրջանակը ընդլայնելու համար. Բաքվի կենտրոնում ստեղծվել է «Պատերազմի ավարի թանգարան», որտեղ կազմակերպվում են դպրոցականների էքսկուրսիաներ և նրանց դաստիարակում են հայերի նկատմամբ թշնամանքի ոգով<sup>24</sup>:
- ❖ Ադրբեջանի բանակային կազմավորումների ապօրինի ներթափանցումը Հայաստանի տարածք և դրանց գործադրած բռնությունները նպատակաուղղված են ՀՀ սահմանամերձ շրջանների բնակիչների ահաբեկմամբ այդ տարածքների հայաթափմանը:

ՀՀ-ի համար կարևոր նշանակություն ունեն ժողովրդագրական սպառնալիքները, որոնք պայմանավորված են ծնելիության նվազմամբ, մահացության ցուցանիշի աճմամբ և 1991 թ. սկսված զանգվածային արտագաղթով, որը շարունակվում է մինչ այժմ:

### Ապագայի բաղադրիչ

Պաշտպանության ոլորտի գործունեությունը պետք է միտված լինի ապագային, ինչը պահանջում է.

<sup>23</sup> Տես, օրինակ, «Россия не потерпит шагов Турции по заселению территорий Нагорного Карабаха сирийцами: тюрколог». «Armenpress», 26.11.2020 (<https://armenpress.am/rus/news/1035922.html>):

<sup>24</sup> Տես «В Парке военных трофеев в Баку выставлено более 300 экспонатов». «Интерфакс-Азербайджан», 12.04.2021 (<http://interfax.az/view/831869>):

- *կանխատեսել* հավանական հակառակորդի ուսնծությունները, ըստ այդմ նախանշել մարտահրավերներին դիմակայելու և սպառնալիքները չեզոքացնելու ուղիներ,
- *մշակել* կառավարման ձկուն, արդյունավետ և արդիական համակարգ, որի շրջանակներում էլ կզնահատվի դրված պահանջներին առկա ռեսուրսների համապատասխանության աստիճանը:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվում է ՀՀ պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարական կառավարման մի համակարգ, որը հիմնված է ՑՀՀ մեթոդաբանության վրա:

Քանի որ այդ մեթոդաբանությունը մշակված է եղել առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ապա և պաշտպանական համակարգի գործունեության ընթացիկ գնահատման ու կառավարման համար, մենք այդտեղ որոշված չորս տարրերին (բաղադրիչներին), որոնք են՝ նպատակը, ռեսուրսները, հզորացման գործընթացները և ապագայի պահանջների հաշվառումը, ավելացրել ենք ևս երկուսը՝ կայուն զարգացման և սպառնալիքների տարրերը: Մենք այս ավելացումը կատարել ենք՝ ելնելով այն նկատառումից, որ պաշտպանական համակարգի հիմնական գործառույթն է ռազմական սպառնալիքների չեզոքացումը (հետմղումը) այն պարտադիր պայմանով, որ պաշտպանության իրագործումը պետք է լինի անընդհատ, այսինքն՝ ռեսուրսները չպետք է սպառվեն:

Կարծում ենք, որ մեր սույն առաջարկությունը կարժանանա մասնագետների ու փորձագետների ուշադրությանը և համապատասխան շտկումներով կկենսագործվի՝ ապահովելով ՀՀ ռազմական անվտանգության (պաշտպանության) համակարգի արդյունավետ ռազմավարական կառավարումը և կայուն զարգացումը:

#### ВОЕННАЯ ЭКОНОМИКА

### МОДЕЛИРОВАНИЕ СТРАТЕГИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ СФЕРЫ ОБОРОНЫ

*А. А. АРАКЕЛЯН, доктор технических наук, профессор, заведующий кафедрой математического моделирования в экономике факультета экономики и управления ЕГУ, Г. М. ГУКАСЯН, кандидат физико-математических наук, доцент кафедры математического моделирования в экономике факультета экономики и управления ЕГУ*

#### РЕЗЮМЕ

В последнее время для оценки деятельности организаций все чаще используется сбалансированная система показателей (ССП), предложенная Д. Капланом и Р. Нортонем. Разработанная вначале для коммерческих предприятий она в дальнейшем стала использо-

ваться в различных сферах, в частности, в США, Великобритании и Канаде ее применяют для оценки стратегии развития и эффективности управления в оборонной сфере.

Авторы предлагают использовать ССП как инструмент стратегического управления и планирования сферы обороны РА. Исходя из специфики системы военной безопасности РА, они предлагают дополнить традиционные элементы (составляющие) ССП, включающие цели, ресурсы, процессы укрепления мощи и учет требований будущего, еще двумя элементами устойчивого развития и военных угроз.

В статье также подробно рассматриваются компоненты каждой составляющей ССП в приложении к реалиям системы военной безопасности РА.

## MILITARY ECONOMICS

### MODELING OF THE STRATEGY OF THE DEFENSE SPHERE SUSTAINABLE DEVELOPMENT

*A. H. ARAKELYAN, Doctor of Technical Science, Professor, Head, Chair, Mathematical Modeling in Economics, Faculty of Economics and Management, YSU, G. M. GHUKASYAN, PhD in Physics and Mathematics, Associate Professor, Chair, Mathematical Modeling in Economics, Faculty of Economics and Management, YSU*

#### SUMMARY

Recently, in order to assess the organizational performance of organizations the balanced scorecard (BSC), introduced by D. Kaplan and R. Norton, has been increasingly used. Being primarily developed for commercial enterprises, BSC was later used in various spheres, in particular – in the USA, Great Britain and Canada it is used to measure the development strategy and management efficiency in the defense sphere.

The authors suggest the use of the BSC as an instrument for strategic management and planning in the RA defense sphere. With an eye on the specifics of the RA's military security system, they recommend that BSC conventional elements (components), encompassing purpose, resources, enabling process and the future, be replenished with two more elements – those of sustainable development and military threats.

The article also argues in detail the constituents of the each BSC component regarding the realities of the RA military security system.

**ՀՀ ՈԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈԱԶՄԱԿԱՆ  
ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

*Մ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պահեստագործի գեներալ-լեյտենանտ,  
«Ռազմատեխնիկական գիտահետազոտական ինստիտուտ»  
ՊՈԱԿ-ի տնօրեն, Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, պահեստագործի  
փոխգնդապետ, «Ռազմատեխնիկական գիտահետազոտական  
ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի օգնական*



Հայաստանը հարուստ պետություն է, չունի խոշոր արդյունաբերության վրա հիմնված տնտեսություն: Հայաստանի ամենաարժեքավոր ռեսուրսը հայ մարդն է՝ իր ինժեներական մտածողությամբ հանդերձ<sup>1</sup>: Հայաստանը չունի մրցունակ հիմնարար, գիտահետազոտական բա-

զա, սակայն կարող է ունենալ գիտակիրառական բազա ի հաշիվ նպատակայնորեն կառավարվող մարդկային ռեսուրսի: Վերը նշվածի և 44-օրյա պատերազմի հետևանքների հաշվառմամբ առաջարկում ենք պետության անվտանգության ապահովման համար որպես առաջնահերթ խնդիր դիտել ռազմաարդյունաբերության հետևյալ ուղղությունների ստեղծումը, վերականգնումը և զարգացումը.

1. հրթիռաշինություն,
2. մեքենաշինություն և սարքաշինություն,
3. օպտոէլեկտրոնիկա և լազերային տեխնիկա,
4. ռադիոտեղորոշում և ռադիոէլեկտրոնային պայքար,
5. ԱԹԱ-ներ,
6. կառավարման համակարգեր և արհեստական բանականություն,
7. ռոբոտաշինություն:

Բերված ուղղությունները շատ առումներով իրար հետ փոխկապված են: Դրանցից մի քանիսը, կարծում ենք, առաջնային ուշադրության կարիք ունեն: Իհարկե այս բոլոր ուղղությունների զարգացումը պահանջելու է բավական մեծ ֆինանսական միջոցներ, որոնց չափերը դեռ պետք է գնահատվեն:

<sup>1</sup> Տես *Թ. Ն. Մանասերյան*, ՀՀ տնտեսական զարգացման առանձնահատկությունները և հեռանկարները: «ՀԲ», 2016, հմ. 3, *Ա. Պ. Պետրոսյան*, Հայաստանի Հանրապետությունում ռազմական արդյունաբերության՝ որպես պաշտպանության ամրապնդման կարևոր միջոցի հեռանկարային զարգացման հարցի շուրջ: «ՀԲ», 2018, հմ. 1–2:

Անհերքելի փաստ է, որ զարգացած ռազմաարդյունաբերական համալիրը էական դրական ազդեցություն է գործում ոչ միայն պետության անվտանգության մակարդակի բարձրացման, այլև տնտեսության զարգացման վրա<sup>2</sup>: Այսպես. երբ պատերազմող պետությունն իր սահմանները պաշտպանելու ժամանակ մեծ արդյունավետությամբ կիրառում է յուրային արտադրության ռազմական տեխնիկա, սարքեր, զենք և զինամթերք, ապա դրանով իսկ գովազդում է դրանք՝ արտերկրյա գնորդների շրջանում առաջացնելով հետաքրքրություն: Այդպիսի պետության ակնառու օրինակ է Իսրայելը<sup>3</sup>:

Այժմ դիտարկենք ռազմաարդյունաբերության առաջարկվող ուղղությունները:

### 1. ՀՐԹԻՈՒՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից խոցող զենքերի կարևոր տեսակներից են հրթիռները: Կախված իրենց չափերից, քաշից, հեռահարությունից, կառավարման արդյունավետությունից և մարտական գլխիկի տեսակից՝ դրանք կարող են կատարել տարբեր ռազմական խնդիրներ: Օրինակ՝ օդային թիրախների, բոլոր տեսակի գրահապատ ու ոչ գրահապատ սպառազինության և ռազմական տեխնիկայի խոցում, հետևակի ոչնչացում: Դրանց խոցիչ ունակությունը ի հաշիվ հարվածի հզորության ու ճշգրտության էապես աճել է: Այսպես. եթե նախկինում որոշակի մարտական խնդիր կատարելու համար պետք էր օրինակ համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի կամ հրետանային կայանքների մեկ դիվիզիոն, ապա այժմ նույն խնդիրը հնարավոր է կատարել 4-րդ կամ 5-րդ սերնդի կառավարվող հրթիռներով՝ ծախսելով մի քանի անգամ պակաս զինամթերք: Նման հրթիռների դասին են պատկանում իսրայելական Սպայք (*SPIKE*) հրթիռային ընտանիքի բազմաֆունկցիոնալ կառավարվող հրթիռները, ֆրանսիական ՄՄՊ (*MMP*) հրթիռները և այլն: Ըստ որոշ փորձագետների՝ 2020 թ. պատերազմի ժամանակ խոցված հայկական գրահատեխնիկայի առյուծի բաժինը վնասվել է իսրայելական Սպայք հրթիռներով, մասնավորապես՝ Սպայք ՆԼՕՍ-ով (*SPIKE NLOS\**): Այնինչ զանգվածային լրատվության միջոցները տարածում էին, թե, իբր, թշնամու բանակը մեզ ամենամեծ կորուստները հասցրել է հարվածային ԱԹՍ-ներով: Այս

<sup>2</sup> Տես *С. В. Казанцев*. Значение оборонно-промышленного комплекса для подъема российской экономики. «Финансовый журнал», 2014, № 1; *Ա. Գ. Դավթյան, Ա. Պ. Պետրոսյան, Մ. Ա. Փարվանյան*, «Ազգ-բանակ» համակարգի ձևավորման գործում պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը որպես ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման խթանիչ գործոն. ՀՀ-ում ռազմավարական-պաշտպանական պատվերի նորամուծական հեռանկարը: «ՀԲ», 2016, հմ. 4:

<sup>3</sup> Տես, օրինակ, *А. Привалов*. Торговля оружием. Израиль. Взгляд из Стокгольма (по материалам статьи доктора Гая Бехора (SIPRI)). «Военное обозрение», 10.05.2018 (<https://topwar.ru/141085-torgovlya-oruzhiem-izrail-vzglyad-iz-stokgolma.html>):

\* ՆԼՕՍ (NLOS (անգլ.) - non-line of sight)՝ նշանակում է «հրաձգության նշանակետի ուղիղ տեսանելիություն չլինելու պայմաններում»:–*Խմբ.*:

տեսակի հրթիռների կիրառման մեծ արդյունավետությունը պատճառ դարձավ, որ պատերազմի ավարտից հետո Ադրբեջանը Իսրայելի հետ շատ կարճ ժամանակում կնքեց իր Մի-17 ուղղաթիռներն արդիականացնելու պայմանագիր, որով նախատեսվում է դրանց սպառազինումը «Սպայթ ՆԼՕՍ» տեսակի հրթիռներով:

Կախված հրթիռների նախանշանակումից՝ դրանց նախագծման ժամանակ կիրառվում են գիտության տարբեր ոլորտներում ձեռք բերված նվաճումներ: Եթե չկառավարվող հրթիռների դեպքում անհրաժեշտ ոլորտները սահմանափակվում են մի քանիսով (հիմնականում՝ մարտագլխիկի, իրանի և հրթիռային վառելիքի նախագծման համար), ապա կառավարվող հրթիռները կազմված են շատ ավելի մեծ թվով հանգույցներից, ինչպիսիք են՝ կառավարման համակարգը, օպտոէլեկտրոնային և լազերային սարքերը, արհեստական բանականությունը, ինտելեկտը և այլն: Այսինքն՝ այս ուղղությունում հաջողության հասնելու համար հարկավոր է ունենալ լուրջ բազմաձյուղ գիտական բազա:

## 2. ՄԵՔԵՆԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՐՔԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

Մեքենաշինության և սարքաշինության ուղղությունում անհրաժեշտ է առանձնացնել հաստոցաշինությունը՝ ժամանակակից տեխնոլոգիաների (մշակող կենտրոնների՝) կիրառմամբ: Դա տնտեսության համար կարևոր ուղղություն է, քանի որ պահանջված է նաև քաղաքացիական ոլորտում:

Ընդհանրապես, ցանկացած արտադրանքի ինքնարժեքը էապես կախված է նաև դրա արտադրության քանակից<sup>4</sup>: Հետևաբար հաստոցաշինության և սարքաշինության ոլորտի զարգացումը անհրաժեշտ պայման է սերիական արտադրության կազմակերպման և մեծ ծավալներով արտադրության ապահովման համար, ինչն էլ, իր հերթին, կնպաստի պատերազմի ժամանակ շարքից դուրս եկած սպառազինությունն և ռազմական տեխնիկան արագ համարելուն, ինչպես նաև խաղաղ ժամանակ դրանց արտահանման համար նախատեսված տարատեսակների անհրաժեշտ քանակությամբ արտադրությանը:

Իհարկե, ՀՀ-ում ծանր մետալուրգիական արտադրություն ստեղծելու մասին խոսք անգամ չի կարող լինել, սակայն մեքենաշինության և սարքաշինության տեխնիկապես իրագործելի ճյուղերի, օրինակ՝ հեռակառավարվող մոդուլների իրանների, մեխանիկական մասերի, որոշ տեսակների հրետանու փողերի, ականանետների և նմանատիպ այլ արտադրատեսակների արտադրության ստեղծումն անհրաժեշտություն է: Կարևոր է նաև ապահովել ռազմական տեխնիկայի նորոգման ծավալների մեծացման հնարա-

\* Մշակվող կենտրոնները հիմնականում պետք է գնվեն արտերկրից:

<sup>4</sup> Сту «Зависимость издержек и себестоимости от объема производства». В кн.: «Экономика». В 2 частях, часть I: «Микроэкономика. Экономика предприятия», 2016 ([https://bstudy.net/857896/ekonomika/zavisimost\\_izderzhek\\_sebestoimosti\\_obema\\_proizvodstva](https://bstudy.net/857896/ekonomika/zavisimost_izderzhek_sebestoimosti_obema_proizvodstva)):

վորությունը: ՀՀ-ն չի կարող ծանր զրահատեխնիկա արտադրել, բայց վնասված միավորները կարող է վերականգնել և շարք վերադարձնել, նաև արդիականացնել եղած զրահատեխնիկան: Եթե ուսումնասիրենք զրահատեխնիկա արտադրող պետությունների փորձը, կհամոզվենք, որ 1970-ականներից առ այսօր նոր ծանր զրահատեխնիկա գրեթե չի արտադրվել: Հզոր ՋՈՒ ունեցող պետություններում շահագործվում են եղած զրահատեխնիկայի արդիականացված տարբերակները: Ադրբեջանն ու Վրաստանն Իսրայելի օգնությամբ արդիականացրել են իրենց ՋՈՒ-ում եղած S72 տանկերի մի մասը, և դրանք ստացել են, համապատասխանաբար, S72 ՍԱյՍ2 «Ասլան» (T72 SIM2 “Aslan”) և S72 ՍԱյՍ1 (T72 SIM1) անվանումները<sup>5</sup>:

### 3. ՕՊՏՈՒԼԵԿՏՐՈՆԻԿԱ ԵՎ ԼԱԶԵՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ

Ժամանակակից սպառազինության մեջ և ռազմական տեխնիկայում (կառավարվող հրթիռներ, հեռակառավարվող մոդուլներ, դիտարկման սարքեր, զենքի և հրազենի նշանոցներ, հետախուզական սարքեր և այլն) լայնորեն կիրառվում են օպտոէլեկտրոնային սարքեր և սարքավորանք համակցված լազերային միջոցների հետ: Այս ոլորտի շատ միջոցների զանգվածային արտադրությունը կարելի է կազմակերպել՝ ստեղծելով համապատասխան տեխնոլոգիական բազա: Ռազմական նախանշանակման հետախուզական մոդուլներում, որոնք ունեն օպտոէլեկտրոնային և լազերային բաղադրիչներ ու մասեր, այժմ կիրառվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, օրինակ՝ հետախուզական սարքերի օպտոէլեկտրոնային համակարգերը օժտվում են արհեստական բանականությամբ ու պատկերների ձևաչափի հնարավորություններով և կարող են լուծել բավական բարդ հետախուզական խնդիրներ<sup>6</sup>: Առանց դրանց կիրառման այդ խնդիրների լուծումը կլինի ուղղակիորեն անհնար:

Այսպիսի օպտոէլեկտրոնային և լազերային միջոցների մոդուլներով համալրված ԱԹԱ-ների կիրառումը մեծացնում է տարածքի և հակառակորդի զորքի տեղաբաշխման հետախուզման արդյունավետությունը, տվյալների հավաստիությունը և ստացման օպերատիվությունը: Դիտման սարքերն այդպիսի օպտոէլեկտրոնային մոդուլներով «զինելը» հնարավորություն է տալիս հետախուզությունը վարելու մեծ հեռավորությունների վրա և արագորեն հայտնաբերելու թշնամու տեղաշարժերը, անգամ նշանացուցելու թիրախները և համապատասխան տվյալները հաղորդելու խոցման միջոցին:

Օպտոէլեկտրոնիկան բավական արագ զարգացող ուղղություններից է, քանի որ ունի որոշակի առավելություններ: Օրինակ՝ ներկայումս աշխա-

<sup>5</sup> Stu «Израиль модернизирует азербайджанские танки Т-72». «Lenta.Ru», 18.10.2010 (<https://lenta.ru/news/2010/10/18/t72/>); К. Богданов. Уральский танк Т-72. Призывник, вернувшийся с Третьей мировой. «РИА Новости», 26.05.2021 (<https://ria.ru/20130807/954859436.html>):

<sup>6</sup> Stu *Р. Л. Михайлов*. Радиоэлектронная борьба в Вооруженных силах США. СПб., 2018, сс. 114, 119:



տանքներ են կատարվում մարտավարական օդակի համար հայտնաբերման այնպիսի համակարգի ստեղծման ուղղությամբ, որը գործի միայն օպտիկական տիրույթում՝ առանց ռադիոտեղորոշումային կայանի կիրառման: Դա հնարավորություն կտա օդային նշանակետերը հայտնաբերելու առանց յուրային տեխնիկայի տեղաբաշխման վայրը բացահայտելու (օրինակ՝ «Սոսնա» զենիթահրթիռային համակարգը<sup>7</sup>):

ԽՍՀՄ գոյության տարիներին Հայաստանը օպտոէլեկտրոնիկայի ոլորտում միութենական մասշտաբով գրավել է առաջատար դիրք: Հանրապետությունում գործել են «Օրբիտա», «Աստրո», «Գալակտիկա» և այլ ձեռնարկություններ, որոնց արտադրանքը մեծ պահանջարկ է ունեցել ամբողջ ԽՍՀՄ տարածքում: Սակայն այժմ այդ ներուժը կորչում է: Օպտոէլեկտրոնիկայի և լազերային տեխնոլոգիաների զարգացումն առաջին հերթին կկանխի այդ բացասական երևույթի հետագա զարգացումը:

#### 4. ՈԱԴԻՈՏԵՂՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՈԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ

Ռադիոէլեկտրոնային պայքարի (ՌԷՊ) միջոցների պահանջարկը միշտ մնում է արդիական, քանի որ բանակի գրեթե բոլոր օդակներում կապի և էլեկտրոնիկայի կիրառությունն անընդհատ ընդլայնվում է: Իսկ ռադիոտեղորոշումային միջոցները մեծ հեռավորությունների վրա նշանակետերի հայտնաբերման գործում դեռ մնում են անփոխարինելի: Մարտավարական օդակում լայնորեն կիրառվում են Դոպլերի էֆեկտի հիման վրա գործող ռադիոտեղորոշիչները<sup>8</sup>:

#### 5. ԱԹԱ-ՆԵՐ

Ինչպես վերը նշվել է, 44-օրյա պատերազմում մեր ռազմական տեխնիկային հասցված վնասի մեծ մասը բաժին է ընկնում «Սպայք» տեսակի հրթիռներին, իսկ հարվածային ԱԹԱ-ների դերն ուռճացված է: Սակայն որոշ առումներով ԱԹԱ-ները առավելություններ ունեն 5-րդ սերնդի կառավարվող հրթիռների նկատմամբ: Մարտական գործողությունների վարման եղանակները զարգանում են դեպի անմիջական շփման բացառում, ինչը հույժ կարևոր է սուղ մարդկային ռեսուրս ունեցող ժողովուրդների համար: Նման պատերազմներում անհրաժեշտություն է, մասնավորապես, գործողությունների վարումը ԱԹԱ-ների և 5-րդ սերնդի հրթիռների համակցությամբ:

Հարվածային ԱԹԱ-ները, ի տարբերություն կառավարվող հակատանկային հրթիռներից, ունեն փոքր արագություն, և շարժման ժամանակ դրանց շարժիչները բարձր ձայն են արձակում (աշխարհում հայտնի բոլոր հարվածային ԱԹԱ-ների շարժիչները բենզինային են), ինչը ապաքողարկում է

<sup>7</sup> Stu A. *Заквасин*. Рекордная дальность поражения: на что способен новый российский зенитно-ракетный комплекс «Сосна», 30.03.2019 (<https://russian.rt.com/russia/article/616619-zrk-sosna-ispytaniya-harakteristiki>):

<sup>8</sup> Stu *Ying Luo, Yi-Jun Chen, Yong-Zhong Zhu, Wang-Yang Li, Qun Zhang*. Doppler effect and micro-Doppler effect of vortex-electromagnetic-wave-based radar, 01.01.2020 (<https://doi.org/10.1049/iet-rsn.2019.0124>):

դրանց մոտենալու փաստը և համեմատաբար հեշտացնում դրանց դեմ պայքարը<sup>9</sup>: Մյուս կողմից՝ դրանք ունեն թռիչքի անհամեմատ ավելի մեծ շառավիղ և կարող են ժամերով մնալ օդում և թիրախ հայտնաբերելու դեպքում ուղղորդվել դեպի այն ու խոցել: Այս առումով ԱԹԱ-ները առավելություն ունեն հակատանկային հրթիռների նկատմամբ, որոնց հեռահարությունը խիստ սահմանափակ է, իսկ արձակումից հետո պետք է ուղղորդվի դեպի նշանակետ:

Շատ կարևոր են նաև հետախուզական և հետախուզահարվածային ԱԹԱ-ների մշակումն ու արդյունաբերական արտադրության կազմակերպումը: Դրանք կարող են 24 ժամ անընդմեջ գտնվել օդում, ինչը դրանց հնարավորություն է տալիս անդադար հետևելու թիկունքում թշնամու զորքերի կատարած տեղաշարժերը: Այսպիսի ԱԹԱ-ների կարևորության մասին արդեն խոսվել է օպտոէլեկտրոնային սարքերի մասում:

44-օրյա պատերազմի ժամանակ շատ է խոսվել թուրքական արտադրության «Բայրաքթար ՏԲ2» (*Bayraktar TB2*) տեսակի հարվածային ԱԹԱ-ների մասին: Դրանք սովորականից ավելի թանկ և տեխնոլոգիապես բարդ են: Այդպիսի ԱԹԱ-ները, բացի հետախուզական գործառնություն կատարելու կարողությունից, օժտված են նաև հրթիռների որոշ հատկություններով. թռչում են մեծ հեռավորությունների վրա, նշանակետի հայտնաբերման դեպքում այն խոցում են հրթիռով կամ կառավարվող ռումբով:

ԱԹԱ-ների մշակումն ու արտադրության կազմակերպումը շատ կարևոր են, նախ, ռազմական կարիքների բավարարման համար, և, երկրորդ, տարբեր բնագավառներում (գյուղատնտեսություն, արտակարգ իրավիճակներ, երկրաբաշխություն, բնապահպանություն և այլն) կիրառելու տեսանկյունից:

Ռազմական կարիքների բավարարման համար առաջին հերթին անհրաժեշտ են հետախուզական և «կամիկաձե» տեսակի ԱԹԱ-ներ: «Կամիկաձե-ների» արտադրությունը փոքր թվաքանակներով անհմաստ է, դրանք պետք է արտադրվեն մեծ քանակներով և ուղղված լինեն ոչ միայն ներքին պահանջարկի բավարարմանը, այլև արտահանմանը:

## 6. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԱՐՇԵՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կառավարման համակարգը բավական ընդգրկուն հասկացություն է, որը վերաբերում է ինչպես զորքերին ու զենքին, այնպես էլ զանազան գործընթացների: Ռազմական ոլորտում դրա կազմակերպական և կառուցվածքային արդյունավետությունից է կախված զորքերի և զենքի կիրառման արդյունավետությունը<sup>10</sup>:

<sup>9</sup> Տես, օրինակ, «Противодействие БПЛА. Защита от дронов и квадрокоптеров». «Концерн Автоматика», 27 сентября 2020 (<https://www.ao-avtomatika.ru/media/blog/protivodeystvie-bpla-zashchita-ot-dronov-i-kvadrokoptero/>):

<sup>10</sup> Տես *Н. М. Паршин, О. А. Степанов, Н. И. Куренков, С. Н. Аноньев*. Концептуальный подход к оценке эффективности применения системы высокоточного оружия в операциях. «Военная мысль», 2019, № 3:

Կառավարման համակարգն իր մեջ ինտեգրում է վերը բերված բաժիններում նշված սպառազինությունն ու ռազմական տեխնիկական որպես մի ամբողջություն՝ էապես մեծացնելով կառավարման և ղեկավարման արագությունն ու ճշտությունը: Վերջին պրոբլեմի լուծման կարևոր ուղղություններից է արհեստական բանականությունը:

Արհեստական բանականության<sup>11</sup> կարևոր մասերից է մեքենայական ուսուցումը: Դա որոշակի ալգորիթմով ծրագրային միջոց է, որը համակարգչին հնարավորություն է տալիս նախօրոք մշակված համապատասխան հիմքի վրա կատարելու կոնկրետ խնդիր: Այս մեթոդը կարելի է կիրառել ռազմական ոլորտի տարբեր խնդիրների լուծման համար՝ սկսած ռազմական տեխնիկայից ու սարքավորանքից և վերջացրած մարտական գործողությունների մոդելավորմամբ<sup>12</sup>: Որպես օրինակ կարելի է բերել պատկերի ճանաչման խնդիրը: Այսպիսի ծրագրային մոդուլը՝ օժտված դիտման և հետախուզման սարքերով էապես մեծացնում է տեսապատկերում հակառակորդի հայտնաբերման հնարավորությունները, ինչը հնարավոր չէ առանց նման մոդուլի տեսադիտումային սարքերի:

Ներկայիս պայմաններում (զինատեսակների բազմազանություն, մարտի վարման ժամանակակից ձևեր, մեծ ծավալներով տեղեկույթի շրջանառություն և այլն) գնալով աճում են զորքերի կառավարման (որոշումների ընդունման և տեղ հասցման) որակին և արագությանը ներկայացվող պահանջները<sup>13</sup>: Այդ պահանջների բավարարումն անհնար է առանց ԶՈՒ-ի կառավարման ավտոմատացման՝ ինչպես ամբողջ ԶՈՒ-ի, այնպես էլ նրա առանձին վերցրած ստորաբաժանման (վաշտ, դասակ, ընդհուպ մինչև զինվոր) մակարդակով, ինչն էլ իր հերթին անհնար է առանց անընդհատ զարգացող կապի միջոցների ու համակարգի<sup>14</sup>:

Հիմնվելով մինչև օրս մշակված ՀՀ ԶՈՒ-ի կառավարման ավտոմատացված համակարգի (ԿԱՀ) շահագործման փորձի վրա՝ վստահաբար կարող ենք պնդել, որ զորքերի կառավարման համակարգի ավտոմատացումը պետք է կատարվի հստակ սկզբունքներով ու մեխանիզմներով գործող կա-

<sup>11</sup> Տես *Գ. Է. Հարությունյան*, Ապագա պատերազմների բնույթը որպես ռազմարդյունաբերության զարգացման ուղեցույց: «ՀԲ», 2020, հմ. 4:

<sup>12</sup> Տես *В. Козюлин*. Искусственный интеллект в военной сфере: угрозы и новая гонка вооружений (<https://pircenter.org/articles/2201-1007507>):

<sup>13</sup> Տես *О. В. Петрова*. Методология принятия управленческих решений. Учебное пособие. М., 2020, сс. 15–16; *Ю. С. Шкурко*. Скорость и точность принятия решений руководителями и подчиненными. «Сибирский психологический журнал», 2016, № 59:

<sup>14</sup> Տես *В. А. Короленко, В. К. Синявский, С. И. Верецагин*. Автоматизация системы управления войсками: на пути от идеи к решению ([https://agat.by/upload/statii\\_files/files/Avtomatizatsia%20ypravleniu%20voiskami%202013.pdf](https://agat.by/upload/statii_files/files/Avtomatizatsia%20ypravleniu%20voiskami%202013.pdf)); “Tactical Automation On The Battlefield; Who Is In Control?”. A Monography by Major Robert N. Townsend. Fort Leavenworth, Kansas (<https://apps.dtic.mil/sti/pdfs/ADA248474.pdf>):

ռավարման համակարգի հիման վրա, հակառակ դեպքում տարբեր պատճառաբանություններով այն չի շահագործվի:

Ընդհանրապես ՋՈՒ-ի կառավարման համակարգը պետք է մշակվի ըստ հստակ և մանրամասն կերպով մտածված ռազմական դոկտրինի, որտեղ պետք է ձևակերպված լինեն պետության ռազմական և ռազմաքաղաքական նպատակներն ու խնդիրները: Ջորքերի կառավարման նման համակարգի վրա կառուցված ԿՀՀ ունենալու դեպքում հնարավոր կլինի զորքերի կառավարումը կազմակերպել մի քանի անգամ ավելի արագ և արդյունավետ կերպով՝ մարտադաշտին անմիջականորեն հետևելու, ժամանակի իրական մասշտաբում մարտի ընթացքի վերաբերյալ բոլոր տեղեկություններն ստանալու հնարավորությամբ:

## 7. ՈՌԲՈՏԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Թվային տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տվել ստեղծելու նոր զինատեսակներ, լուծելու այնպիսի խնդիրներ, որոնք չէին կարող լուծել անցյալի միջոցները:

Հեռակառավարվող միջոցներից առավել հայտնի են ԱԹԱ-ները, սակայն պետք է նշել, որ ժամանակակից ռոբոտոտեխնիկան<sup>15</sup> ունի ոչ պակաս հաջողություններ: Ռազմական ոլորտում ռոբոտոտեխնիկայի կիրառումից կարելի է առանձնացնել հետևյալ երկու դեպքը: Առաջինը հեռակառավարվող կրակային միջոցն է, որը գտնվում է օպերատորի նկատմամբ անշարժ կրիչի վրա, և երկրորդը՝ երբ այն գտնվում է օպերատորի նկատմամբ շարժական կրիչի վրա: Առաջին դեպքն անվանում են «մեկ-մեկ հեռակառավարվող մոդուլ»: Այն կարող է գտնվել ինչպես անշարժ կրիչի վրա կամ շինության ներսում, այնպես էլ ծանր կամ թեթև զրահապատ մեքենայի վրա:

Հեռակառավարվող մոդուլները սովորաբար կազմված են լինում առնվազն կրակային միջոցից և դիտման ու նշանառման սարքերից: Կրակային միջոց կարող է լինել ինչպես տարբեր տրամաչափի հրաձգային զենքը, այնպես էլ հակատանկային կամ հակաօդային միջոցը: Նման հեռակառավարվող մոդուլները հիմնականում հնարավորություն են ունենում հեշտությամբ փոխարինվելու ըստ այն առաջադրանքի, որը պետք է կատարեն: Օպերատորը գտնվում է ապահով վայրում՝ այդ մոդուլից հեռու, եթե այն անշարժ կրիչի վրա է, կամ զրահապատ մեքենայում, երբ մոդուլը գտնվում է զրահապատ մեքենայի վրա: Այս միջոցներն արդեն օգտագործվում են ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Չինաստանում, Իսրայելում և այլ երկրներում: Երկրորդ դեպքը, երբ կրակային միջոցը գտնվում է օպերատորի նկատմամբ շարժական

<sup>15</sup> Ռոբոտատեխնիկայի մասին հանգամանորեն տես *А. А. Химиченко. Перспективы робототехники. «Эко» («Экономика и организация промышленного производства»), 2008, № 9; Jim Torresen. A Review of Future and Ethical Perspectives of Robotics and AI. "Frontiers in Robotics and AI", 15 January 2018 (<https://www.frontiersin.org/articles/10.3389/frobt.2017.00075/full>); "Handbook of Digital Human Modeling: Research for Applied Ergonomics and Human Factors Engineering". Edited by Vincent G. Duffy. Boca Raton, London, New York, 2008 (<https://books.google.am/books?id=NgLLBQAQBAJ&pg=SA3-PA1&hl=ru#v=onepage&q&f=false>):*

կրիչի վրա, վերաբերում է այն տեխնիկային, որն օպերատորը հեռակառավարում է՝ միևնույն ժամանակ կառավարելով նաև դրա կրակային միջոցը:

Տվյալ տեխնիկան կարող է լինել անվավոր կամ թրթուրավոր, սակայն ավելի մեծ անցանելիություն ապահովելու համար սովորաբար նախապատվություն է տրվում երկրորդ տարբերակին, որը չի կարող զարգացնել մեծ արագություն և շարժվում է հետևակի հետ համընթաց: Այն կարող է ունենալ բավական մեծ բեռնափոխադրելիություն: Օրինակ՝ եթե այս տեխնիկան կցված է ջոկին, ապա կարող է տեղափոխել վիրավորների, ջոկի անձնակազմի ուսապարկերը, լրացուցիչ զինամթերք: Բացի այդ, իր դիտասարքերի շնորհիվ այն կարող է նաև կատարել հետախուզական առաջադրանքներ: Օրինակ՝ գերմանական «Ռայնմետալ» ընկերության արտադրած ռոբոտացված համակարգը կարող է իր օպտիկական մոդուլը կայմով բարձրացնել գետնից մի քանի մետր ու դիտել շրջապատը մեծ հեռավորությունների վրա<sup>16</sup>: Բացի այդ, ռոբոտացված համակարգը կարող է գործել այնպիսի վայրերում, որտեղ մարդու համար կան լուրջ վտանգներ, իսկ մեծ տրամաչափի կրակային միջոցների շնորհիվ կարող է շատ ավելի արդյունավետ կրակ վարել, քան զինվորը: Դրա հետ մեկտեղ այն հանգամանքը, որ ռոբոտացված միջոցը մեխանիկական է, հուշում է, որ բեկորային և հրազենային խոցումների նկատմամբ այն ավելի դիմացկուն և մարտի դաշտում ավելի կենսունակ է, քան մարդը: Իսկ եթե այս միջոցը զրահապատվում է, ապա դրա կենսունակությունը է՛լ ավելի է մեծանում:

Կրիչի ու կրակային միջոցի կառավարմամբ ռոբոտացված տեխնիկան ավելի հազվադեպ է հանդիպում, քան առաջին տարբերակը, սակայն վերջին տարիներին հետաքրքրությունը դեպի այս ուղղությունը մեծացել է: Որոշ երկրներ արդեն ձեռնարկում են այսպիսի կրակային միջոցների օգտագործմամբ զորավարություններ<sup>17</sup>:

\* \* \*

Այսպիսով՝ կարծում ենք, որ մեր ինստիտուտում մշակված սույն ուղղությունները հնարավորություն կտան ՀՀ-ին արագ տեմպերով զարգացնելու ռազմաարդյունաբերական համալիրը, քանի դեռ այդ ավանդույթները հանրապետությունում իսպառ չեն վերացել: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում շեշտել, որ որպես գերակայություն մեր նշած ուղղությունները դոզմա չեն և կարիք ունեն լրացուցիչ մասնագիտական քննարկումների:

<sup>16</sup> Տես «Робототехнический комплекс Rheinmetall Mission Master. Транспорт, разведчик и боец на одной платформе». «Военное обозрение», 1 июля 2019 (<https://topwar.ru/159507-robototekhnicheskij-kompleks-rheinmetall-mission-master-transport-razvedchik-i-boec-na-odnoj-platforme.html>):

<sup>17</sup> Տես, օրինակ, «В режиме максимальной открытости». «Красная Звезда», 13 сентября 2021 (<http://redstar.ru/v-rezhime-maksimalnoj-otkrytosti/>):

## ОБОРОННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ

### СТРАТЕГИЧЕСКИЕ НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ ВОЕННОЙ БЕЗОПАСНОСТИ

*М. Н. КАРАПЕТЯН, генерал-лейтенант запаса, Директор ГНКО «Военно-технический научно-исследовательский институт»,  
А. П. ПЕТРОСЯН, подполковник запаса, помощник Директора ГНКО «Военно-технический научно-исследовательский институт»*

#### РЕЗЮМЕ

Армения имеет ограниченные материальные ресурсы, но сохранившуюся развитую инженерную мысль. Это дает возможность развивать нематериалоемкие высокие технологии в сфере оборонной промышленности, тем самым обеспечивая как свою военную безопасность, так и необходимые условия для подъема экономики.

С учетом вышеизложенного предлагается рассматривать в качестве приоритета развитие следующих направлений оборонной промышленности: ракетостроение, машиностроение и приборостроение, оптоэлектроника, и лазерная техника, радиолокация и РЭБ, БПЛА, системы управления и искусственный интеллект, роботостроение.

## DEFENSE INDUSTRY

### STRATEGIC DIRECTIONS OF THE RA WAR INDUSTRY DEVELOPMENT IN THE CONTEXT OF ENSURING MILITARY SECURITY

*M. N. KARAPETYAN, Lieutenant General (Ret.), Head, Military-Technical Scientific-Research Institute State Nonprofit Organization,  
A. P. PETROSYAN, Lieutenant Colonel (Ret.), Assistant Manager, Military-Technical Scientific-Research Institute State Nonprofit Organization*

#### SUMMARY

Armenia has limited material resources, but well-preserved engineering thinking. This makes it possible to develop non-material intensive high technologies in the war industry sphere, thus ensuring both Armenia's own military security, and necessary facilities for the economic takeoff.

With a view on the above, the development of the following defense industry directions is proposed to be considered as a priority: rocket engineering, mechanical engineering and instrumentation, optoelectronics and laser technology, radiolocation and electronic warfare, UAVs, control systems and artificial intellect, robotics.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒԲ  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ  
ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

*Ս. Ա. ՍՈՒՋՅԱՆ, պահեստագործի գնդապետ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ*



Ժամանակին Կոնֆուցիոսը, Պլատոնը, Արիստոտելը փորձել են որոշել մշակվող հողատարածության մակերեսի, բնակչության թվաքանակի և իդեալական պետության համամասնությունը<sup>1</sup>: Հին Հռոմում Օկտավիանոս Օգոստոսն իր իշխանության տարիներին ընդունել է մի քանի օրենք ընտանիքի ամրապնդման և ծնելիության խթանման վերաբերյալ<sup>2</sup>: Պետական կարգի և իշխանության ձևի հետ ծնելիության, մահացության, բնակչության թվաքանակի հարաբերակցության աստիճանի վերլուծությամբ են զբաղվել միջնադարի մի շարք հայտնի մտածողներ, ինչպիսիք են Նիկոլո Մաքիավելին և Թոմաս Մորը<sup>3</sup>:

Արդյունաբերական հեղափոխությունը խթանել է բնակչության թվաքանակի աճումը: Պատահական չէ, որ Ժան-ժակ Ռուսոն, Շառլ Լուի Մոնտեսքյոն<sup>4</sup> պնդել են, որ պետության զարգացման առավել կարևոր հատկանիշն է մեծաքանակ և աճող բնակչությունը, իսկ բնակչության կրճատումը համարել են ծայրահեղ բացասական երևույթ: Ռուսոն նշել է, որ պետության՝ որպես քաղաքական օրգանիզմի մեծությունը փոփոխվում է ըստ տարածքի ընդարձակության և բնակչության թվաքանակի<sup>5</sup>: Ավելի քան 200 տարի առաջ շոտլանդացի տնտեսագետ և փիլիսոփա Ադամ Սմիթը գրել է, որ ցանկացած պետության ծաղկման անվիճելի վկայությունը նրա բնակչության թվաքանակի աճն է:

Ժամանակակից աշխարհում շատ բան է փոխվել, սակայն բնակչության

<sup>1</sup> Տես *А. В. Воронцов, М. Б. Глотов. Демография: учебник и практикум для прикладного бакалавриата. М., 2016, сс. 15–16:*

<sup>2</sup> Տես *А. А. Инков. Брачные законы как инструмент укрепления Римского государства в правление Октавиана Августа. «Научные труды Московского гуманитарного университета», 2019, № 2:*

<sup>3</sup> Տես *Ս. Վ. Կորոնցով, Ս. Բ. Գլոտով, Նշ. աշխ.:*

<sup>4</sup> Տես նույն տեղում:

<sup>5</sup> Տես *Ս. Ա. Սուջան, Քաղաքական աշխարհագրություն և աշխարհաքաղաքականություն, ուսումնական ձեռնարկ: Ե., 2019, էջ 73:*

քանակական ցուցանիշների և կառուցվածքի համամասնության (հատկապես՝ դրանց դինամիկայի) դերն ու նշանակությունը շարունակում են մնալ արդիական<sup>6</sup>:

Ժողովրդագրական փոփոխությունների ընթացքում բնակչության վերարտադրության ռեժիմը կարող է հակասել պետության սոցիալ-տնտեսական զարգացմանը, ուստի այն ենթակա է որոշակի պետական կարգավորման, այսինքն՝ ժողովրդագրական գործընթացների կառավարման: Դա արվում է ժողովրդագրական քաղաքականության միջոցով: **Ժողովրդագրական քաղաքականությունը** բնակչության վերարտադրության կարգավորման ոլորտում պետական մարմինների և այլ սոցիալական հաստատությունների նպատակաուղղված գործունեությունն է, որի նպատակը բնակչության թվաքանակի և կառուցվածքի դինամիկայի պահպանումը կամ փոխումն է<sup>7</sup>: Նման քաղաքականություն չլինելը կամ չկիրառելը կարող է իրական սպառնալիք լինել ցանկացած պետության ազգային անվտանգության համար: Ժողովրդագրական քաղաքականությունը չի կարող անմիջապես բարելավել ժողովրդագրական ցուցանիշները, սակայն համապատասխան ռազմավարությունը որոշակի տարիների ընթացքում կկարգավորի ոլորտում արդեն եղած կամ ոչինչ չծեռնարկելու դեպքում տեսականորեն հնարավոր խնդիրները: Անհրաժեշտ է հաշվի առնել մեկ այլ հանգամանք ևս, այն որ ներկայումս դժվարացել են առանձին երկրում ժողովրդագրական վիճակի պատշաճ վերլուծությունը և կանխատեսումը, որովհետև դրանք պայմանավորված են նաև համաշխարհային գործոններով: Համաձայն մակրոսոցիոլոգիական աշխարհահամակարգային վերլուծության տեսության՝ համաշխարհային գործոնը, որն ազդում է ժողովրդագրական գործընթացների վրա, և որից բխում են տարածաշրջանային և առանձին երկրների տեղային գործընթացները, արդի աշխարհահամակարգի անկայունությունն է, ինչի հետևանքով ավելացել են պատերազմները, քաղաքացիական բախումներն ու տնտեսական ցնցումները<sup>8</sup>:

Մինևույն ժամանակ, բարձր մակարդակի սոցիալ-տնտեսական զարգացման շնորհիվ համընդհանուր աշխարհաքաղաքական դասակարգումներում Հայաստանի Հանրապետությունն իբրև զարգացող երկիր ներառված է երրորդ երկրների<sup>9</sup> շարքում և նրա նկատմամբ կիրառվում է նման

<sup>6</sup> Տես *А. Бокв.* Демографические вызовы национальной безопасности современной России. «Статистика и математические методы в экономике», 2014, № 6(2):

<sup>7</sup> Տես «Демография и статистика населения: учебник для академического бакалавриата». Под ред. И. И. Елисеевой, Н. А. Клупта. М., 2016, с. 380:

<sup>8</sup> Տես *И. Валлерстайн.* После либерализма. Пер. с англ. Под ред. Б. Ю. Кагарлицкого. М., 2003:

<sup>9</sup> Տես *И. Валлерстайн.* Анализ мировых систем и ситуация в современном мире. Пер. с англ. П. М. Кудюкина. Под общей ред. Б. Ю. Кагарлицкого. СПб., 2001: Հրեական ծագմամբ ամերիկացի սոցիոլոգ, քաղաքագետ, նորմարքսիստ Իմանուիլ Վալերստայնի հայեցակարգի համաձայն՝ աշխարհը մի ամբողջական համակարգ է, որի կենտրոնն Արևմուտքն է, կան նաև կիսաձայրամասեր ու ձայրամասեր:



երկրների համար մշակված ռազմավարություն: Սակայն Հայաստանի բնակչության ծնելիության մակարդակը և բնական վերարտադրության ցուցանիշները գրեթե չեն համապատասխանում երրորդ երկրների ցուցանիշներին, որոնք գտնվում են ժողովրդագրական անցման\* հիմնականում երկրորդ, մասամբ՝ երրորդ փուլերում: Ըստ էության, վերարտադրության ցուցանիշներով մենք ավելի մոտ ենք զարգացած երկրներին, որոնք գտնվում են ժողովրդագրական անցման վերջին՝ չորրորդ փուլում: Այդ են վկայում ՀՀ-ում ինչպես բնակչության ընդհանուր նվազման, այնպես էլ ծնելիության և բնական վերարտադրության ցուցանիշները (*տես Աղ. 1, Գծ. 4, 5*): Իրականում, Հայաստանի Հանրապետությունը անցնում է երրորդից չորրորդ փուլ:

Աղյուսակ 1

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ՓՈԼԵՐՈՒՄ<sup>10</sup>

Ժողովրդագրական անցման փուլեր	Ծնելիություն, %	Մահացություն, %	Բնական աճ, %	Պտղաբերության գործակից	Կյանքի միջին տևողություն, տարի
1-ին փուլ	45-50	40-45	5	6-8	30-35
2-րդ փուլ	30-40	15-20	15-20	4-5	50-55
3-րդ փուլ	12-15	8-10	4-5	2-3	65-70
4-րդ փուլ	8-10	7-9	1-2	1-2	75-80

Ժողովրդագրական գործընթացները պակաս դեր չունեն ներքին և արտաքին քաղաքականության մեջ, պետության զարգացման սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում: Այս առումով ներկայումս Հայաստանի ժողովրդագրական վիճակը գնահատվում է որպես աղետային: Թեև ՀՀ Կառավարության 2009 թ. հուլիսի 2-ի հմ. 27 արձանագրային որոշմամբ հաստատվել է ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը<sup>11</sup>, որում նշված են Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունները, յուրաքանչյուր տարի սահմանվել է Հայաստանի Հանրապետության ժողովրդա-


\* **Ժողովրդագրական անցումը** մի գործընթաց է, երբ հասարակությունը բարձր մակարդակների ծնելիությամբ և մահացությամբ բնութագրվող ժողովրդագրական վիճակից անցնում է ցածր մակարդակների ծնելիության և մահացության վիճակի:

<sup>10</sup> *Տես T. Г. Рунова. Демография. Учебное пособие. 3-е изд. М., 2007. с 72: Таблица 10. «Уровни воспроизводства населения по фазам демографического перехода»:*

<sup>11</sup> *Տես «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին»:* Քաղվածք ՀՀ Կառավարության նիստի արձանագրությունից, 2 հուլիսի 2009 թ., հմ. 27 (<https://mlsa.am/wp-content/uploads/2013/10/Ardzanagrutyun-demography-razmavarutyun-1.pdf>):

գրական իրավիճակի բարելավման հաջորդ տարվա պետական ծրագիրը, հաստատվել է ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը, սակայն, ակնհայտ է, որ ոչ մի հիմնախնդիր լուծում չի ստացել, գրեթե ոչ մի ցուցանիշ չի բարելավվել: Ավելին. տարիներ շարունակ վարվել է ճիշտ հակառակ քաղաքականությունը և պետականորեն նույնիսկ խրախուսվել է զանգվածային արտագաղթը, ինչը նպաստել է ծնելիության անկմանը, մահացության աճմանն ու բնակչության ծերացմանը և այլն: Ներկայումս, Հայաստանի Հանրապետության կառավարությունը մի շարք միջոցառումներ է իրականացնում ուրուտում առկա խնդիրները կարգավորելու ուղղությամբ, սակայն դրանք դեռևս բավարար չեն: Որպեսզի հասկանանք, թե ինչ ժողովրդագրական իրավիճակ է ստեղծվել Հայաստանում, վերլուծենք ընդամենը մի քանի ժողովրդագրական ցուցանիշ:

Հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի տարեկան հրապարակումները (ասել է թե՛ պաշտոնական ցուցանիշները)՝ կարող ենք անդել, որ անկախացումից հետո Հայաստանի բնակչությունը մշտապես նվազել է, բացառությամբ 2012 թվականի (Գծ. 1 և 2): Նվազումը բացատրվում է մեր պետության սոցիալ-տնտեսական պայմաններով, հարևան պետության վարած չհայտարարված պատերազմով, շրջափակումներով, շատ դեպքերում՝ անհիմն և անժամանակ մասնավորեցումներով, տնտեսական և էներգետիկ




Գծ. 1. ՀՀ բնակչության թվաքանակի դինամիկան 1970 – 2020 թթ. (հազ. մարդ)<sup>12\*</sup>

<sup>12</sup> Տես «Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թվականին»: Ե., 1991, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2010»: Ե., 2010, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015»: Ե., 2015, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2019»: Ե., 2019, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին»: Ե., 2020, «Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ, վիճակագրական տեղեկագիր»: Ե., 2020:

\* 1970, 1979, 1989, 2001, 2011 թթ. բնակչության թվաքանակն ըստ մարդահամարների:

ձգնաժամներով, երկրում իրենց երեխաների համար հեռանկար չտեսնելու համոզվածությամբ, սոցիալական բևեռացմամբ, հոգևոր արժեքների անկմամբ, մարդկանց իրավունքների ոտնահարմամբ, նախկինում՝ քաղաքական վարչակարգի անձնապաշտական դրսևորումներով, և այս բոլորի հետևանքով՝ բարոյահոգեբանական մթնոլորտի խիստ վատթարացմամբ, հույսի ու հավատի կորստով: Հայաստանում մինչև 20-րդ դարի վերջը սրընթաց և 21-րդ դարի սկզբում համեմատաբար չափավոր արտագաղթը հանգեցրել է բնակչության ընդհանուր թվաքանակի նվազմանը: Թեև վերջին տարիներին նվազման տեմպը մի փոքր թուլացել է, այդուհանդերձ բնակչության թվաքանակը շարունակում է նվազել (*տես Գծ. 1*):



Գծ. 2. ՀՀ բնակչության միգրացիայի սալոն 1992–2019 թթ. (հազ. մարդ)<sup>13\*</sup>

<sup>13</sup> Տես «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2010»: Ե., 2010, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015», «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2019», «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար–դեկտեմբերին», «Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ, վիճակագրական տեղեկագիր»:

\* Հարկ են համարում նշել, որ յուրաքանչյուր տարվա համար ՀՀ վիճակագրական կոմիտեի (նախկինում՝ Ազգային վիճակագրական ծառայություն) հրապարակած տեղեկագրերում կան բազմաթիվ խնդրահարույց և իրարամերձ ցուցանիշներ: Այսպես. 2004, 2005 և 2006 թվականների ցուցանիշների համար աղբյուրների մի մասում նշված է, որ այդ տարիներին միգրացիոն հաշվեկշիռը եղել է դրական (համապատասխանաբար՝ 2,1, 12,5 և 21,7 հազար մարդ), սակայն այլ հրապարակումներում բերված ցուցանիշների թվաքանակն գումարը (տվյալ տարվա ընթացքում բնական հավելածի և միգրացիայի մնացորդի գումարի արդյունքը՝ գումարած բնակչության նախորդ տարվա թվաքանակին) խոսում է բացասական մնացորդի մասին:


Բնակչության թվաքանակի նվազման գործոնների շարքում իրենց ուրույն տեղն ունեն արտագաղթն ու անօրինական միգրացիայի ծավալների աճման միտումները: 2020 թ. Հայաստանի բնակչությունը 1992 թվականի համեմատությամբ նվազել է 674,1 հազարով, այսինքն՝ բնակչության հավելաձր միշտ ունեցել է տարեկան նվազման միտում (*տես Պժ. 2 և 3*), մինչդեռ երկրի բնակչության բնական հավելաձր նույն ժամանակահատվածում կազմել է 445,5 հազար մարդ: Փաստորեն, նշված ժամանակահատվածում երկրի բնակչությունը նվազել է 1119,6 հազար մարդով (ըստ ՀՀ պաշտոնական տվյալների, տես Պժ. 3): Եթե բնակչության բնական հավելաձի միջին ցուցանիշն ընդունենք 6–6,5 ‰ (1992–2019 թթ. ընթացքում Հայաստանում միջին ցուցանիշը կազմել է 6,26 ‰), ապա արտագաղթած 1119,6 հազար մարդու հաշվով մեր պետությունը «կորցրել է» նվազագույնը 185–200 հազար մարդ: Իրականում այդ թիվը կարող է լինել ավելի մեծ, որովհետև արտագաղթել են գերազանցապես երիտասարդ ընտանիքները և չամուսնացած երիտասարդները, որոնք հետագայում ընտանիք են կազմել մեծ մասամբ այլազգիների հետ: Ստացվում է, որ ըստ բացառապես պաշտոնական ցուցանիշների՝ 1992–2020 թթ. ամենահամեստ հաշվարկներով Հայաստանի Հանրապետությունը լքել է ավելի քան 1,3 մլն մարդ (*տես Պժ. 2*):

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանն ուղղված իրական ժողովրդագրական սպառնալիքների թվին է դասվում ծնելիության ցածր մակարդակը, որը չի ապահովում բնակչության պարզ վերարտադրությունը (*Պժ. 4*): Հայաստանի բնակչության բնական աճի և, մասնավորապես, ժողովրդագրական անցման առանձնահատկությունների առավել ճշգրիտ ուսումնասիրության համար կարևոր է պտղաբերության գործակիցը, որը ցույց է տալիս երեխաների միջին թիվը, որը ծնում է մեկ կինն իր ծնունակ տարիքում (15–49 տարեկան հասակում)<sup>14</sup>: 1992–2018 թթ. Հայաստանի Հանրապետությունում պտղաբերության գործակիցն աչքի է ընկնել անկայունությամբ. մինչև 2002 թվականն այն անընդհատ նվազել է, իսկ 2003 թվականից սկսած՝ փոքր չափով, բայց աճել է: Այդուհանդերձ, տվյալ գործակիցը ցածր է այն սահմանային շեմից, որը հնարավորություն է տալիս ապահովելու բնակչության վերարտադրությունը: Այդ շեմը հավասար է 2,14-ի, մինչդեռ 2018 թ. այն կազմել է 1,572 (*Պժ. 6*): Ի դեպ, ծնելիության մակարդակի նվազումը նշված մակարդակից ցածր գնահատվում է որպես կրիտիկական և հետագա տարիներին հանգեցնելու է բնակչության «մահացման»: Հետաքրքրական է, որ քաղաքաբնակ կանանց պտղաբերության գործակիցն ավելի բարձր է (1,647), քան գյուղաբնակ կանանց դեպքում (1,423)<sup>15</sup>: Հայաստանի գոյության վերջին 100 տարիների ընթացքում այսպիսի փաստ չի արձանագրվել, և սա օրինաչափ չէ: Այդ օրինաչափությունը խախտվել է 2011 թվականին ու շարունակվում է մինչ օրս: Սա վկա-


<sup>14</sup> Տես Մ. Գ. Մանասյան, Բնակչության աշխարհագրություն: Ե., 2011, էջ 46:

<sup>15</sup> Տես «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2019», էջ 21:

յուն է, որ հիմնականում երիտասարդներն են լքում գյուղական բնակավայրերը և տեղափոխվում քաղաք, հատկապես՝ Երևան, իսկ գյուղերը ծերանում են:




Գժ. 3. Հայաստանի բնակչության թվաքանակի տարեկան փոփոխությունները 1991–2019 թթ. (հազ. մարդ)<sup>16</sup>




Գժ. 4. Բնական հավելաձի ցուցանիշները 1992–2019 թթ. (հազ. մարդ)<sup>17</sup>

<sup>16</sup> Տես «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015», «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2019», «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին»:

<sup>17</sup> Տես «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2010», «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015», «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու



Նկ. 5. Բնական աճի ցուցանիշները ՀՀ-ում՝ 1990–2019 թթ. (հազ. մարդ)<sup>18</sup>



Գծ. 6. ՀՀ բնակչության պտղաբերության ընդհանուր գործակիցը 1991–2018 թթ. (հազ. մարդ)<sup>19</sup>

Մեր երկրում ընդհանուր ծնելիության թվի նվազումը դեռ կպահպանվի երկար ժամանակ, միայն երբեմն կդիտվի ծնելիության մասնակի աճ: Դիտ է, մեր երկիրը դեռ չի թևակոխել այնպիսի փուլ, երբ մահացության գործակիցն ավելի բարձր է, քան ծնելիության գործակիցը, սակայն միգրացիայի բացասական սաղորդի պատճառով բնակչության թվաքանակը առաջիկա տարիներին դեռ նվազելու է: Որպեսզի ցույց տանք, թե ինչպես է բնակչու-

2019», «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին»:

<sup>18</sup> Տես նույն աղբյուրները:

<sup>19</sup> Տես նույն աղբյուրները:

յան ծնելիության մակարդակի վրա ազդում միգրացիան, բերենք ընդամենը մեկ փաստ: Զանգվածային արտագաղթի հետևանքով 1993–1994 թթ. հանրապետությունում գրանցվել է ծնելիության մակարդակի աննախադեպ անկում՝ 28 %-ով, բնական աճը նվազել է 41 %-ով<sup>20</sup>: Այսօր հենց 90-ականներին ծնվածներն են հիմնականում «պատասխանատու» սերունդ տալու համար, ինչի հետևանքով էլ ծնելիության մակարդակը ցածր է:

Ծնելիության և միգրացիայի ներկայիս դինամիկան անմիջականորեն ազդում է նաև բնակչության սեռատարիքային կառուցվածքի վրա: Ծնունդների թվի նվազումը, ինչը հանգեցնում է ժողովրդագրական ձգնաժամի և աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակի նվազման, լուրջ մարտահրավեր է ապագայում ընդհանրապես աշխատուժի պահպանման և աճման համար: Այս, ինչպես նաև բնակչության մահացության, առաջին երեխայի ծննդյան պարագայում մոր միջին տարիքի և ամուսնության միջին տարիքի բարձրացման, ընտանիքի կազմի ու կառուցվածքի փոփոխությունների, ընտանիքի անդամների պլանավորման հետ կապված խնդիրների և հնարավոր ռիսկերի մասին կխոսենք առանձին հոդվածում:

Ելնելով վերը նշվածից՝ **Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրության հիմնախնդիրները լուծելու նպատակով** նախևառաջ անհրաժեշտ ենք համարում հետևյալ խնդիրների կարգավորումը.

**1) մարդկային ռեսուրսներով ՀՀ-ն ապահովվածության գնահատում և կանխատեսում (հատկապես՝ ԶՈՒ-ն համալրելու համար նախատեսվող ռեսուրսի թվաքանակի հավաստի կանխատեսում),**

**2) պետության տնտեսական ներուժի (անհրաժեշտ մարդկային ռեսուրսների տեսանկյունից) գնահատում և կանխատեսում:**

Որպեսզի հնարավոր լինի իրականացնել այս միջոցառումները, ինչպես նաև մշակել ձկուն ժողովրդագրական քաղաքականություն և նոր այնպիսի ռազմավարություն, որը բխի նաև 2050 թ. հինգ միլիոն բնակչություն ունենալու՝ ՀՀ Վարչապետի առաջադրած տեսլականից, **մեր կարծիքով պետք է ձեռնարկել.**

- *բնակչության ծնելիության մակարդակի, կենսամակարդակի, կյանքի միջին տևողության բարձրացմանը և առողջության պահպանմանն ուղղված պետական քաղաքականության մշակում և վարում,*
- *ընտանեկան արժեքների վերագնահատման, կյանքի որակի և մակարդակի բարձրացման քաղաքականության մշակում և վարում,*
- *միգրացիոն քաղաքականության մշակում ու վարում, զանգվածային հայրենադարձության ապահովում,*
- *Հայաստանում տիրող քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային և բարոյահոգեբանական իրավիճակի արմատական բարելավում,*
- *բնակչության ապակենտրոնացում և գիտականորեն հիմնավորված տարաբնակեցում,*

<sup>20</sup> Տես «Статистический ежегодник Армении 1993-1994 гг.». Е., 1995, с. 16:

- առկա ժողովրդագրական իրավիճակն ստեղծող առաջնային պայմանների վերացում (օրենքի կիրառման հավասարություն, պետական վերահսկողության և կարգավորման հաստատում, աշխատատեղերի ստեղծումը խթանող քաղաքականության վարում, գյուղատնտեսության ոլորտում հեղափոխության նախաձեռնում, կոռուպցիայի և կաշառակերության դեմ իրական պայքարի վարում, հրաժարում բնությանը վնասելու քաղաքականությունից, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության ապահովում և այլն),
- առողջ և առաջընթաց ապրող պետության ծնավորման համար նախադրյալների ապահովում (պետության կայունությանն ու զարգացմանը նպաստող պետաիրավական համակարգի ստեղծում, սոցիալական արդարության հաստատում, նոր աշխատատեղերի հիմնում, նյութական բարեկեցության, կրթական, առողջապահական պատշաճ մակարդակի ապահովում և այլն):

Այդ խնդիրներն իրագործելու համար առաջարկում ենք հետևյալ միջոցառումները (հարկ ենք համարում նշել, որ խնդիրներն ու միջոցառումները մի քանի տասնյակ են, իսկ ստորև ներկայացվում են մեր տեսակետից ամենաառանցքայինները)։

**1) Ծնելիության և բնակչության բնական վերարտադրության խթանմանն ուղղված միջոցառումներ.**

- ❖ բնակչության բնական վերարտադրության կտրուկ (մեկ կնոջ հաշվով նվազագույնը 3,1 երեխա) աճը՝ որպես ազգային գերակայության սահմանում և ռազմավարական փաստաթղթերի մեջ ամրագրում, իսկ դրանից ցածր մակարդակի գնահատում որպես ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքի,
- ❖ կանանց տրամադրվող նախաձեռնության և հետծննդյան արձակուրդների ժամկետների և վճարների չափերի վերանայում ու կարգավորում. երեխայի ծննդից հետո կանանց երեք տարով հատկացվող արձակուրդի ժամանակաշրջանում նրանց ամսական աշխատավարձի որոշակի մեծությամբ վճարում և այդ տարիների համարում աշխատանքային ստաժ,
- ❖ անչափահաս երեխա ունեցող միայնակ կանանց և 3 ու ավելի երեխա ունեցող ընտանիքներին հարկային, աշխատանքային, բնակարանային և այլ սոցիալական արտոնությունների տրամադրում,
- ❖ տնտեսության բոլոր բնագավառներում աշխատող չամուսնացած կամ մինչև 3 երեխա ունեցող կանանց տղամարդկանց համեմատությամբ օրենսդրորեն մեկ ժամով կարճ աշխատանքային օրվա հնարավորության ընձեռում,
- ❖ ամուսնացած ու 3 և ավելի երեխա ունեցող կանանց համար ըստ տնտեսության ոլորտների օրենսդրորեն աշխատանքային օրվա սահմանափակում օրական 5 ժամով և շաբաթական 25 ժամով՝ լրիվ աշխատաժամանակի համար սահմանված աշխատավարձի 80 տոկոսի վճարմամբ,



- ❖ երեխաներին պահելու, խնամելու, դաստիարակելու նպատակով տնային տնտեսուհիների համար աշխատանքային թոշակի սահմանում՝ նրանց աշխատանքը համարելով զբաղվածություն,
- ❖ բնակարանային շինարարության ծրագրով ապառիկ վճարմամբ բնակարանների տրամադրում երիտասարդ ընտանիքներին՝ յուրաքանչյուր երեխայի ծննդյան դեպքում որոշակի չափաբաժնով վճարվող գումարի չափի նվազեցմամբ,
- ❖ 5 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին պետության հաշվին բնակարանի հատկացում և ամբողջությամբ պարտքի մարում, եթե 5-րդ երեխան ծնվել է բնակարան ձեռք բերելուց հետո,
- ❖ նորածնի համար նվազագույն վճարի նորմի սահմանում հետևյալ սկզբունքով. ընտանիքում ծնվող առաջին երեխայի համար 4-5 անգամ, իսկ յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ նախորդից 2 անգամ ավելի,
- ❖ բազմազավակության կարգավիճակի խրախուսում. ծնողների և երեխաների համար պետական ֆինանսավորմամբ և աջակցմամբ առողջարաններում բուժվելու, հանգստյան տներից և ամառային ճամբարներից օգտվելու համակարգի ստեղծում,
- ❖ ծնելիության խթանման և ներգաղթի շնորհիվ բնակչության թվաքանակի կտրուկ աճի պլանավորում և դրա ապահովմանն ուղղված քաղաքական, տնտեսական, իրավական, սոցիալական, գաղափարաքարոզչական, գիտական, կրթական, առողջապահական և մշակութային միջոցառումների մշակում և իրականացում,

**2) ընտանիքի հաստատության ձգնաժամի հաղթահարմանն ուղղված միջոցառումներ.**

- ❖ ընտանիքի հաստատության վերագնահատում, ընտանեկան կապերի ամրապնդում, ընտանիքի հասարակական դերի ու մշանակության մեծացմանն ուղղված քաղաքականության մշակում ու իրականացում,
- ❖ պետական մակարդակով ընտանեկան արժեքների քարոզում (հեռուստաթերի ազատում, ընտանեկան ու բարոյական արժեքներն ապականող, պետության նկատմամբ արհամարհանք և ատելություն սերմանող, բանակի և հոգևոր արժեքների նկատմամբ բացասական վերաբերմունք առաջացնող հեռուստաադրից՝ տարբեր սերիալներից, գրեհկություն պարունակող ժամանցային-հունորային ծրագրերից, հեռուստանախագծերից և այլն),
- ❖ տղամարդկանց պակասի և վերարտադրողական տարիքում գտնվող զգալի թվաքանակով չամուսնացած կանանց առկայության պայմաններում ընտանիք կազմող անձանց պետականորեն խրախուսում,
- ❖ երեխաների դաստիարակությունը որպես պետական գերակայության սահմանում և ինչպես ծննդաբերելու, այնպես էլ երեխային պահելու և մեծացնելու համար նպաստների վճարում,
- ❖ հայ երեխաների որդեգրման պետականորեն խրախուսում և ֆինանսավորում,

- ❖ երեխաներին ապօրինի աշխատանքի և մուրացկանության մեջ ներգրավման և հակասոցիալական վարքով ընտանիքների դեմ կոշտ քաղաքականության վարում, ծնողական իրավունքներից զրկման պայմանների օրենսդրական հստակեցում,
- ❖ ավանդական ազգային արժեքների վերաարժեքավորում և ամուսնության, բազմանդամ ընտանիքի, մոր, երեխայի՝ որպես բարձր սոցիալական արժեքների գնահատում,

**3) արտագաղթի կանխմանն ու ներգաղթի խթանմանն ուղղված միջոցառումներ.**

- ❖ հայրենադարձության խթանում և կազմակերպում (ռազմավարական փաստաթղթերում հայրենադարձության սահմանում որպես ազգային գերակայության՝ տարեկան առնվազն երեսուն-քառասուն հազար հայի վերադարձի նախատեսմամբ),
- ❖ աշխատանքի ազգային շուկայի պաշտպանում օտարերկրյա աշխատուժի չվերահսկվող ներհուսքից,
- ❖ գիտատեխնիկական, մտավոր, ստեղծագործ կադրերի և ներուժի արտահոսքի կրճատման համար անհրաժեշտ շարժառիթների ստեղծում (առանձին մասնագիտությունների գծով աշխատավարձերի սահմանում այլ պետությունում տրվող համապատասխան աշխատավարձի չափով),
- ❖ օտարերկրյա պետություններից Հայաստան ներգաղթելու ցանկություն ունեցող այլազգիների նկատմամբ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխանող քաղաքականության մշակում և իրականացում, ազգային անվտանգությանը, Հայաստանում հայերի տեսակարար կշռի նվազեցմանը միտված սպառնալիքների չեզոքացման իրավական և գործառնության մեխանիզմների ձևավորում,

**4) բնակչության համաչափ տեղաբաշխմանն ուղղված միջոցառումներ.**

- ❖ բնակչության ապակենտրոնացում և գիտականորեն հիմնավորված տարաբնակեցման քաղաքականության վարում, Երևանի և մարզերի միջև կենսամակարդակային տարբերությունների հարթում,

**5) այլ միջոցառումներ.**

- ❖ այլ պետություններում ժողովրդագրական քաղաքականության վարման առաջավոր փորձի ուսումնասիրություն և տեղայնացում:

**ДЕМОГРАФИЯ**

**ДЕМОГРАФИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ  
И НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ДЕМОГРАФИЧЕСКОЙ ПОЛИТИКИ**

*С. А. СУДЖЯН, полковник запаса, кандидат географических наук, доцент,  
начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА*

**РЕЗЮМЕ**

Анализ демографических данных официальной статистики РА позволяет определить динамику изменения численности населения, показатели годового изменения численности населения и миграции, естественного прироста и другие демографические показатели.

По этим показателям предлагается осуществить в РА мероприятия по стимулированию рождаемости и естественного воспроизводства населения, преодолению кризиса института семьи, предотвращению эмиграции и стимулированию иммиграции, пропорциональному распределению населения. Причем они должны быть осуществлены посредством изучения и локализации передового опыта ведения демографической политики.

**DEMOGRAPHY**

**DEMOGRAPHIC SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA  
AND SOME PROBLEMS OF DEMOGRAPHIC POLITICS**

*S. A. SUJYAN, Colonel (Ret.), PhD in Geography, Associate Professor, Head,  
Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA*

**SUMMARY**

The analysis of the demographic data of the RA official statistics makes it possible to determine the population dynamics, indicators of annual changes in population and migration, natural increase and other demographic indicators.

According to these indicators, it is proposed to implement in the RA the measures on stimulating the birth rate and natural reproduction of the population, overcoming the crisis of the institution of the family, preventing emigration, and stimulating immigration, proportionally distributing the population. Moreover, they should be carried out through the study and localization of the best practices in the conduct of demographic policy.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՕՐԱԿԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՆԱԿՄԱՆ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

*Ս. Գ. ԳԱԼՍՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
«Հայկական բանակ» ՌԳՀ գիտախորհրդատվական խորհրդի անդամ,  
Ս. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, Երևանի  
Ս. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի  
ռազմաբժշկական փորձաքննության դասավանդման խմբի պետ,  
Տ. Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Երևանի Ս. Հերացու անվան պետական  
բժշկական համալսարանի ռազմաբժշկական փորձաքննության  
դասավանդման խմբի դասախոս*

Զինված ուժերի բժշկական ապահովման հիմնական նպատակն է անձնակազմի առողջության պահպանումը, ամրապնդումն ու վերականգնումը<sup>1</sup>: Այդ նպատակի իրագործման կարևոր միջոցներից է ռազմաբժշկական փորձաքննությունը, որը ռազմական բժշկության տեսության և պրակտիկայի ինքնուրույն բաժին է, զինված ուժերի և մյուս զինվորական կազմավորումների համալրման ու բժշկական ապահովման, զորակոչիկների ու զինծառայողներին ցուցաբերվող բժշկասոցիալական օգնության համակարգի<sup>2</sup> կատարելագործման նպատակով իրականացվող գիտամեթոդական, կազմակերպական և գործնական միջոցառումների համալիր: Ռազմաբժշկական փորձաքննության էության նման ընկալումը հնարավորություն է տալիս ճիշտ գնահատելու դրա դերն ու տեղը զինված ուժերի բժշկական ապահովման համակարգում<sup>3</sup>:

Պետական վիճակագրությունը, ինչպես նաև բազմաթիվ գիտական հե-

<sup>1</sup> Տես, օրինակ, «Руководство по медицинскому обеспечению ВС РФ на мирное время». Раздел I, гл. I, п. 2. М., 2002; “About the Military Health System”. “Health.mil” (<https://www.health.mil/About-MHS>):

<sup>2</sup> Տես ՀՀ 1996 թ. մարտի 4-ի «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», հմ. ՀՕ-42 օրենքը, հոդ. 22 (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=104958>):

<sup>3</sup> Տես ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» հմ. ՀՕ-195-Ն օրենքը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633>), Ս. Ս. Սահակյան, Զորակոչիկների հենաշարժիչ համակարգի հիվանդությունների հիմնախնդիրները և նրանց ռազմաբժշկական փորձաքննությունը ՀՀ-ում: Ատենախոսություն: Ե., 2018, Ս. Գ. Գալստյան, Ա. Գ. Չարչյան, Ս. Ս. Սահակյան, Տ. Ռ. Մարտիրոսյան, Ս. Գ. Մաթոսյան, Ռազմաբժշկական փորձաքննության մի շարք հայեցակետեր: «Ղատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», 2020, հմ. 4, Է. Ա. Тишук, Н. А. Дворянчиков, А. В. Ядчук, С. А. Степович. «Саморазрушающее» поведение подростков – угроза здоровью нации и обороноспособности страны, «Проблемы социальной гигиены, здравоохранения и истории медицины», 2005, № 6:

տազոտություններ վկայում են, որ ՀՀ-ում հիվանդների և սոցիալապես չհարմարված դեռահասների թիվը աճում է, զինվորական ծառայությանը պատանհանների պիտանիության ցուցանիշը նվազում է, առողջական վիճակի կապակցությամբ սահմանափակումներ ունեցող անձանց թիվը մեծանում է: Ուստի և պետության համար ռազմաբժշկական փորձաքննության պետական նշանակությունը վերջին տարիներին շարունակաբար աճում է:

Հայաստանի Հանրապետության բնակչության, մասնավորապես զինծառայողների առողջության պահպանությունը սերտորեն կապված է սույն խնդիրը կոնկրետ տարածքային մակարդակով լուծելու հետ: Մինչդեռ պրակտիկական ցույց է տալիս, որ քաղաքացիների նախնական զինվորական հաշվառման և զորակոչի, ինչպես նաև պատերազմական ժամանակ ռազմաբժշկական փորձաքննության գործում կան բազմաթիվ էական բացթողումներ: Դրա ապացույցն է այն, որ դեռևս արձանագրվում են ՀՀ ԶՈՒ-ից վաղաժամկետ զորացրման դեպքեր, թեև առողջական վիճակի պատճառով զորակոչիկը չպետք է զորակոչվեր:

Հարկ է նշել նաև այն դեպքերը, որոնց ականատես են եղել սույն հոդվածի հեղինակները, երբ պատերազմական ժամանակ ոչ պատշաճ փորձաքննության կամ ընդհանրապես դրա բացակայության պայմաններում անցկացվող զորահավաքային զորակոչի ընթացքում պահեստազորում հաշվառված զինապարտը, որն իր առողջական վիճակի պատճառով ենթակա չէ զորակոչի, հայտնվում է ռազմի դաշտում և ոչ միայն չի կարողանում կատարել իր պարտականությունները, այլև խանգարում է զինակիցներին, քանի որ կարիք է ունենում խնամքի, օգնության, հոգածության՝ դառնալով զինակիցների և բժշկական ծառայության համար «բեռ»:

Ցածր է նաև ռազմաբժշկական փորձաքննության գործում ներգրավված մասնագետ բժիշկներին ցուցաբերվող մեթոդական և գործնական աջակցության մակարդակը: Ցավոք, Հայաստանում հրապարակվող ուսումնասիրություններում տվյալ խնդիրն քիչ է ուշադրություն հատկացվում: Հարկ է նշել, որ, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում զորակոչի ժամանակ զորակոչիկների ավելի քան 30 %-ն ուղարկվում է ստացիոնար կամ ամբուլատոր հետազոտության, եթե բժշկական փաստաթղթերում վերջին 1-2 տարվա ընթացքում նրանց առողջության վերաբերյալ տվյալներ գրանցված չեն: Դրա հիմնական պատճառներն են մանկական բուժկանխարգելիչ հիմնարկներում իրականացվող բուժկանխարգելիչ միջոցառումների ոչ բավարար արդյունավետությունը, հիվանդությունների պատեհաժամ կանխարգելման ու վաղ ախտորոշման համակարգերի թերությունները, ինչպես նաև բժիշկների անբավարար գիտելիքները, քանի որ նրանց 51,4 %-ը ճիշտ չի գնահատում քրոնիկական ախտաբանության ձևավորման համար գործառությամբ խանգարումների դերն ու նշանակությունը<sup>4</sup>:

Մասնագիտական գրականության մեջ ներկայացվող տվյալների ուսում-

<sup>4</sup> Stu A. Г. Ильин, И. В. Звезда, М. М. Эльянов, И. К. Рапопорт и др. Современные тенденции динамики состояния здоровья подростков. «Гигиена и санитария», 2000, № 1:

նասիրությունը ցույց է տալիս, որ հետխորհրդային հանրապետություններում գործող առողջապահական համակարգերի գործառնության առանձնահատկությունների, մայրության և մանկության պահպանման, կադրերի ներուժի ու հնարավորությունների հաշվառմամբ բուժկանխարգելիչ հիմնարկների գործունեության մասնագիտական տեխնոլոգիաները ոչ լիարժեք կերպով են համապատասխանում առողջապահության բարեփոխումների էությանը<sup>5</sup>:

Ընդհանուր առմամբ տվյալ ժամանակաշրջանում խիստ արդիական է դարձել երեխաների և դեռահասների առողջական վիճակի պահպանմանն ուղղված աշխատանքները գիտականորեն հիմնավորված ու մշակված նոր մոտեցումներով կազմակերպելու և կատարելու, նրանց բուժապահովման համակարգը նոր կազմակերպական տեխնոլոգիաների կիրառմամբ կատարելագործելու պահանջը: Ընդ որում, դա պետք է արվի նրանց առողջական վիճակի, դրա ձևավորման վրա ազդող գործոնների և միջավայրի բժշկասոցիալական առանձնահատկությունների հաշվառմամբ<sup>6</sup>:

Քաղաքացիների բժշկական փորձաքննություն անցկացնող մարմիններն են ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (ԶԶՀԾ) տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովները (ՏԱԲՀ-ներ)<sup>7</sup>:

Դրանք տարածքային ստորաբաժանման ղեկավարի (նախկինում՝ զինվորական կոմիսար, առաջարկությամբ և մարզպետների կամ (Երևանի քաղաքապետի) ներկայացմամբ կազմավորվում են առողջապահության նախա-

<sup>5</sup> Այս հարցի վերաբերյալ ավելի հանգամանորեն տես *Ս. Ս. Սահակյան*, Նշ. աշխ., *Ք. Ա. Յանգիրով*. Профилактика и методы коррекции хирургических заболеваний у мужчин-призывников в Республике Башкортостан. Дисс. на соиск. уч. степ. док. мед. наук. Уфа, 2004:

<sup>6</sup> Տես *Н. Б. Мирская, А. Н. Коломенская, А. В. Ляхович, А. Д. Синякина, И. Ю. Самусенко*. Профилактика и коррекция нарушений и заболеваний костно-мышечной системы у детей и подростков. Пособие для системы послевузовского профессионального образования врачей. М., 2009; *Н. Б. Мирская, А. Н. Коломенская*. Диагностика нарушений и заболеваний костно-мышечной системы современных школьников: подходы, терминология, классификация. «Вопросы современной педиатрии», 2009, т. 8, № 3:

<sup>7</sup> Տես ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» հմ. ՀՕ-195-Ն օրենքը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633>), ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» հմ. 405-Ն որոշումը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=121636>), ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի հմ. 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին որոշման նախագիծ, հանրային քննարկում 29.09.2020–15.10.2020 (<https://www.e-draft.am/projects/2775/about>):

րարի հրամանով: Տվյալ հանձնաժողովների կազմում են նախագահը՝ տարածքային ստորաբաժանման բժիշկը, անդամները՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, օտոլարինգոլոգ (քիթ-կոկորդ-ականջի մասնագետ), մաշկաբան<sup>8</sup>:

ՀՀ ՊՆ ԶԶՀԾ ՏԱԲՀ-ները կատարում են զինապարտների զինվորական հաշվառման, զորակոչի, վարժական հավաքների, ինչպես նաև Ձինված ուժերի համար մասնագետների պատրաստման և ՌՈՒՀ-եր դիմորդների ընտրության, պահեստազորում հաշվառված զինապարտների փորձաքննություններ, տալիս են զինապարտների պիտանիության վերաբերյալ նախնական եզրակացություններ<sup>9</sup>:

Նախագորակոչիկների ու զորակոչիկների բուժսպասարկման համար առանձնացված առաջնային օդակի մասնագետը (տեղամասային թերապևտ, ընտանեկան բժիշկ, մանկաբույժ) հաշվառման վերցրած քաղաքացիների պարբերական բժշկական հետազոտությունը կատարում է այն ծավալներով, որոնք պետությունը երաշխավորում է անվճար բժշկական օգնության, ինչպես նաև սպասարկման առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրերով<sup>10</sup>:

Նախագորակոչային ու զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների բժշկական հաշվառման, առողջական վիճակի գնահատման, բժշկական հետազոտության, բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման իրավական նորմերի պահանջների ապահովման պատասխանատվությունը դրվում է ՀՀ ՊՆ ԶԶՀԾ համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի, բժշկի, հիվանդանոցային բուժօգնություն և փորձաքննություն կատարող բուժկազմակերպությունների հանձնաժողովների նախագահների ու տնօրենների և ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների տնօրենների վրա<sup>11</sup>:

Ձինվորական ծառայության համար պիտանի չճանաչված անձանց առողջական խնդիրների կամ այստորոշված հիվանդությունների մասին գրառումներ կատարվում են նաև նրանց բժշկական գրքույկում: Այն դեպքերում, երբ բժիշկները դժվարանում են կայացնել զորակոչիկի առողջական վիճակի մասին վերջնական որոշում, համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարը բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա տվյալ զորակոչիկին ուղեգրում է հետազոտման բուժաստատություն: Եթե զորակոչիկի առողջական վիճակը թույլ չի տալիս նրան զորա-

<sup>8</sup> Տես *Ս. Գ. Գալստյան, Ա. Գ. Չարչյան, Ս. Ս. Սահակյան, Տ. Ռ. Մարտիրոսյան, Ա. Գ. Մաթոսյան*, Նշ. աշխ.:

<sup>9</sup> Տես նույն տեղում:


<sup>10</sup> Տես ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի հմ. 405-Ն որոշումը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=121636>), ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի հմ. 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին որոշման նախագիծ, հանրային քննարկում 29.09.2020–15.10.2020 (<https://www.e-draft.am/projects/2775/about>):

<sup>11</sup> Տես նույն աղբյուրները:

կոչել, ապա նա ներկայացվում է կենտրոնական բժշկական հանձնաժողով՝ պիտանիության վերաբերյալ եզրակացություն տալու համար: Իսկ զինվորական ծառայության համար պիտանի ճանաչվածներին զորակոչի օրը ՀՀ ՊՆ ՋԶՀԾ տարածքային ստորաբաժանում ներկայանալիս զննում են ՏԱԲՀ-ները, կատարում են ջերմաչափում, ինչն արձանագրվում է տարածքային ստորաբաժանման բժշկի լրացրած օբյեկտիվ զննության թերթիկում<sup>12</sup>:

Ներկայացված սխեմայից (գծապատկեր 1) երևում է, որ զորակոչի և զորահավաքային համալրման ծառայության տեղամասային ստորաբաժանումը պիտանի ճանաչող հանձնաժողով է: Ջորակոչից տարկետում տրամադրելու կամ ոչ պիտանի ճանաչելու եզրակացություն տալիս է միայն կենտրոնական բժշկական հանձնաժողովը:

Գծապատկեր 1



<sup>12</sup> Տես նույն աղբյուրները:



Այլ է իրավիճակը պատերազմական շրջանում, երբ եզրակացություն կայացնելու իրավասությունը և պատասխանատվությունը վերապահվում է ԶԶՀԾ տեղամասային ստորաբաժանմանը: Քանի որ պատերազմական ժամանակ կենտրոնական բժշկական հանձնաժողով չկա, ապա «պիտանի է զինվորական ծառայության համար», «սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար», «կարիք ունի բուժման», «ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար», «ոչ պիտանի է զինվորական ծառայության համար» եզրակացությունները տալիս են ՀՀ ՊՆ ԶԶՀԾ ՏԱԲՀ-ները:

Խաղաղ ժամանակ ՀՀ Կառավարությունը զորակոչ է հայտարարում զորակոչից առնվազն 2-3 ամիս առաջ, և այդ պայմաններում հնարավոր է լինում առանց շտապելու, պատշաճ մակարդակով անցկացնել զորակոչիկների բժշկական հետազոտություն և փորձաքննություն<sup>13</sup>:

2020 թ. սեպտեմբերի 27-ի Արցախյան պատերազմի՝ մեր կատարած նախնական վերլուծությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու պահեստազորում հաշվառված և զորակոչի ենթակա զինապարտների առողջական վիճակի գնահատման, բժշկական հետազոտության անցկացման, ռազմաբժշկական փորձաքննության եզրակացություն տալու գործընթացներում եղած մի շարք բացթողումներ:

Պատերազմական ժամանակ ռազմաբժշկական փորձաքննության, զորակոչվող անձանց առողջական վիճակի ճիշտ գնահատման և զորակոչին առնչվող մյուս գործընթացների պատշաճ կատարմանը խանգարող հանգամանքներ են սահմանափակ ժամանակահատվածում մեծ թվով անձանց հետազոտելու անհրաժեշտությունը և հետազոտման համար անհրաժեշտ պայմաններ չլինելը: Այս իրավիճակում անհրաժեշտ է շատ արագ կատարել բժշկական հետազոտումն ու տալ ռազմաբժշկական փորձաքննության եզրակացությունը: Մինչդեռ ՀՀ ՊՆ ԶԶՀԾ ՏԱԲՀ-ների համար կարևոր և հույժ բարդ խնդիր է իրենց սպասարկած ամբողջ տարածքում արագ և պատշաճ մակարդակով գործունեության ծավալումը:

Զինապարտների զինվորական հաշվառման, զորակոչի, վարժական հավաքների, ինչպես նաև Զինված ուժերի համար մասնագետների պատրաստման, ՌՈՒՀ-եր ընդունվողների ընտրության, պահեստազորում հաշվառված զինապարտների փորձաքննության, զինապարտների պիտանիության վերաբերյալ եզրակացության կայացման գործը բարելավելու նպատակով 2018 թվականին փորձնական ծրագրով ստեղծվել էին ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների զորակոչային բժշկական հանձնաժողովներ<sup>14</sup>:

<sup>13</sup> Տես ՀՀ Կառավարության 2020 թ. դեկտեմբերի 24-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ձմեռային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» հմ. 2136-Ն որոշումը (<https://www.e-gov.am/gov-decrees/item/35400/>):

<sup>14</sup> Տես ՀՀ Կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի հմ. 405-Ն որոշումը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=121636>):

Սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով այդ ծրագիրը չի շարունակվել:

Հեղինակների կարծիքով՝ այս ամենը վկայում է, որ հասունացել է ռազմաբժշկական փորձաքննություն կատարող առաջնային օղակի բժշկական հանձնաժողովների գործունեության բարելավման անհրաժեշտությունը:

Պատերազմական ժամանակ ռազմաբժշկական փորձաքննություն անցկացնելու համար հեղինակներն առաջարկում են.

- բացի ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովներից, դեռ խաղաղ ժամանակ յուրաքանչյուր շրջանում ստեղծել ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների զորակոչային բժշկական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկել թերապևտի, սրտաբանի, վիրաբույժի, վնասվածքաբանի, նյարդաբանի, հոգեբույժի, ակնաբույժի, օտոլարինգոլոգի, մաշկաբանի: Թվարկված բոլոր մասնագետ բժիշկներին անհրաժեշտ է ծանոթացնել ռազմաբժշկական փորձաքննությունը կանոնակարգող իրավական փաստաթղթերին, ռազմաբժշկական փորձաքննությունը կարգավորող օրենքներին, սկզբունքներին, զարգացնել ռազմաբժշկական փորձաքննության տեսական և գործնական գիտելիքներն ու հմտությունները, ինչը նշանակում է ռազմաբժշկական փորձաքննության առաջնային օղակի կատարելագործում,
- պարբերաբար և հետևողականորեն զբաղվել ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովների և ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների զորակոչային բժշկական հանձնաժողովների մասնագետ-բժիշկների տեսական ու գործնական գիտելիքների, իրավական կարգավորումների իմացության մակարդակի բարձրացմանը (առաջնային և հերթական կատարելագործում):

Առաջարկված պայմանների ապահովման դեպքում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների բժշկական հանձնաժողովները պատերազմական ժամանակ ի վիճակի կլինեն տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովների հետ համագործակցությամբ արագ և պատշաճ մակարդակով ու անհրաժեշտ ծավալով կատարելու պահեստազորում հաշվառված զինապարտների բժշկական հետազոտություն և ռազմաբժշկական փորձաքննություն՝ դրանով իսկ մեծապես նպաստելով ԶՈՒ-ի համալրմանն առողջ ու ֆիզիկապես ամուր թվակազմով:

**ВОЕННАЯ МЕДИЦИНА**

**О НЕОБХОДИМОСТИ УЛУЧШЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ  
ПЕРВИЧНОГО ЗВЕНА ВОЕННО-МЕДИЦИНСКОЙ ЭКСПЕРТИЗЫ  
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

*С. Г. ГАЛСТЯН, доктор медицинских наук, профессор,  
член Научно-консультационного совета ВНЖ «Айкакан банак»,  
С. С. СААКЯН, кандидат медицинских наук, начальник группы  
преподавания военно-врачебной экспертизы ЕГМУ,  
Т. Р. МАРТИРОСЯН, лектор группы преподавания военно-врачебной  
экспертизы ЕГМУ*

**РЕЗЮМЕ**

Анализ функций первичного звена военно-медицинской экспертизы – территориальных подразделений службы призыва и мобилизационного пополнения МО РА (в прошлом – медицинские комиссии военкоматов) в мирное и военное время показывает, что есть необходимость их дальнейшей проработки. В этом аспекте представлено авторское видение путей улучшения деятельности этого звена.

**MILITARY MEDICINE**

**ON THE NECESSITY OF IMPROVING THE ACTIVITIES  
OF THE PRIMARY PANEL OF MILITARY MEDICAL EXPERTISE  
IN THE REPUBLIC OF ARMENIA**

*S. G. GALSTYAN, Doctor of Medical Sciences, Professor, Member, Academic-  
Advisory Council, "Haikakan Banak" DAJ;  
S. S. SAHAKYAN, PhD in Medicine, Head, Group for Teaching  
Military Medical Expertise, YSMU;  
T. R. MARTIROSYAN, Lecturer, Group for Teaching Military  
Medical Expertise, YSMU*

**SUMMARY**

The analysis of the functions of the primary panel of military medical expertise – the territorial sub-units of the conscription and mobilization replenishment service of the MOD RA (previously – the medical commissions in military commissariats), both in peacetime and wartime, shows that there is a need to further develop those functions. In these terms, the authors' vision on the ways of improving the activity of this unit is considered.

**ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ**

*Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ,  
Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ավագ լեյտենանտ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,  
Թ. Դ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, ավագ լեյտենանտ, Բ. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

**ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ**

անձնապաշտության դրսևորում – проявление авторитарности – display of authoritarianism  
աշխարհահամակարգային վերլուծություն – геосистемный анализ – geo-systemic analysis  
ապակայունացում – дестабилизация – destabilization  
արհեստական բանականություն – искусственный интеллект – artificial intelligence, AI  
արձանագրություն – протокол – protocol  
արտագաղթ – эмиграция – emigration  
արտահոսք – утечка – 1. leakage, 2. drain  
– կադրերի արտահոսք – տես *արտահոսք՝ ուղեղների արտահոսք*  
– ուղեղների արտահոսք – утечка мозгов – brain drain  
բաց համակարգերի փոխկապվածության մոդել – модель взаимосвязанности открытых систем – open systems interconnection model  
բնակչություն – население – population  
– բնակչության հավելած – прирост населения – increase of population, rate of population increase  
– բնակչության տարաբնակեցում – переселение населения – reinhabitation of population, resettlement of population  
ընթացակարգ – процедура – procedure

ընտանիքի հաստատություն – институт семьи – family institution  
թիրախի նշանացուցում – целеуказание мишени – target designation, target indication, targeting  
թվայնացում – дигитализация, цифровизация – digitalization  
իշխանապետություն – 1. княжество, 2. տես *պետություն* – 1. principedom, princely state, 2. տես *պետություն*  
իրավադրույթ – правовое положение – legal provision  
ծնելիության խթանում – стимулирование рождаемости – birth rate boosting  
կապուղի – канал связи – liaison channel  
հաղորդակարգ – протокол – protocol  
հաղորդակցուղի – коммуникационный путь, путь сообщения – communications  
համանպատակ – всеобщая цель, главная цель – general aim, main aim  
հայկական ինքնագիտակցություն – армянское самосознание – Armenian self-consciousness  
հանրային կառավարում – публичное управление – public management  
հանքահումքային պաշար – рудно-сырьевой запас – ore resource  
հաշվեկշռված ցուցանիշների համակարգ – система сбалансированных

показателей – balanced scorecard	threat isolation
հաստատությունների փոխակերպում – институциональная трансформация – institutional transformation	վերջնազիր – ультиматум – ultimatum
հիվանդությունների պատեհաժամ կանխարգելում – своевременная профилактика заболеваний – timely prevention of diseases	վտարանդիություն – эмиграция – emigrants
նախաձեռնության նվաճում – захват инициативы – seizing the initiative	տեսակ – 1. вид, 2. տես <i>տես</i> – 1. type, 2. տես <i>տես</i>
նենգադուլ – саботаж – sabotage	– զինված ուժերի տեսակ – вид вооруженных сил – armed service
պետության աշխարհում – государственное строительство – state building	– զորատեսակ – род войск – service arm, branch, combat arms
պետություն – государство – state	տնտեսական ինքնաբավություն – экономическая самодостаточность – economic self-sufficiency
– բախարգելային պետություն – буферное государство – buffer state	տնտեսության ռազմականացում – милитаризация экономики – economy militarization
– պետության տնտեսական հյուժում – экономическое истощение государства – economic depletion of the state	տվյալ – данные – datum
– պետության տնտեսության պատրաստում պատերազմի – подготовка экономики государства к войне – preparation of the state economy for war	– տվյալների երթուղավորում – маршрутизация данных – data routing
ռազմաարդյունաբերության հագեցվածություն – насыщенность военной промышленности – military industry saturation	– տվյալների հավաստիություն – достоверность данных – data adequacy, data validity
ռազմատնտեսական ներուժ – военно-экономический потенциал – military-economic potential	փոխազդեցություն – взаимодействие – interaction
ռեսուրս – ресурс – resource	փոխանցողիների միակցում – агрегирование каналов – link aggregation
– ռազմահավաքային ռեսուրս – ресурс для военно-учебных сборов – battle assembly resources	փոխզդրծություն – взаимодействие – interaction, coordination
– վարժահավաքային ռեսուրս – տես <i>ռեսուրս` ռազմահավաքային ռեսուրս</i>	քաղաքական վարչակարգ – политический режим – political regime
<i>տես</i> – род – gender	քաղաքականություն – политика – 1. policy, 2. politics
սպառնալիքի տեղափակում – локализация угрозы – threat localization,	– ժողովրդագրական քաղաքականություն – демографическая политика – demographic politics
	– ծավալապաշտական քաղաքականություն – экспансионистская политика – expansionist policy
	քրոնիկական ախտաբանություն – хроническая патология – chronic pathology

ՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՈՒՐԱՆ

агрегирование каналов – փոխանցու-  
ղիների միակցում  
армянское самосознание – հայկա-  
կան ինքնագիտակցություն  
взаимодействие – 1. փոխգործություն,  
2. փոխազդեցություն  
вид – տեսակ  
– вид вооруженных сил – զինված  
ուժերի տեսակ  
военно-экономический потенциал –  
ռազմատնտեսական ներուժ  
всеобщая цель – համանպատակ  
геосистемный анализ – աշխարհա-  
համակարգային վերլուծություն  
главная цель – *см. всеобщая цель*  
государственное строительство –  
պետութենաշինություն  
государство – 1. պետություն, 2. իշ-  
խանապետություն  
– буферное государство – բախար-  
զելային պետություն  
– подготовка экономики государства  
к войне – պետության տնտեսության  
պատրաստում պատերազմի  
– экономическое истощение государ-  
ства – պետության տնտեսական  
հյուծում  
данные – տվյալ  
– достоверность данных – տվյալների  
հավաստիություն  
– маршрутизация данных – տվյալ-  
ների երթուղավորում  
дестабилизация – անկայունացում  
дигитализация – թվայնացում  
захват инициативы – նախաձեռնու-  
թյան նվաճում  
институт семьи – ընտանիքի հաստա-  
տություն  
институциональная трансформация –  
հաստատութենական փոխակեր-  
պում

искусственный интеллект – արհես-  
տական բանականություն  
канал связи – կապուղի  
княжество – իշխանապետություն  
коммуникационный путь – հաղորդակ-  
ցուղի  
локализация угрозы – սպառնալիքի  
տեղափակում  
милитаризация экономики – տնտե-  
սության ռազմականացում  
модель взаимосвязанности открытых  
систем – բաց համակարգերի փոխ-  
կապվածության մոդել  
население – բնակչություն  
– переселение населения – բնակ-  
չության տարաբնակեցում  
– прирост населения – բնակչության  
հավելած  
насыщенность военной промышлен-  
ности – ռազմարդյունաբերության  
հագեցվածություն  
политика – քաղաքականություն  
– демографическая политика – ժողո-  
վրդագրական քաղաքականություն  
– экспансионистская политика – ծա-  
վալապաշտական քաղաքականու-  
թյուն  
политический режим – քաղաքական  
վարչակարգ  
правоположение – իրավադրույթ  
протокол – 1. արձանագրություն,  
2. հաղորդակարգ  
процедура – ընթացակարգ  
проявление авторитарности – անձ-  
նապաշտության դրսևորում  
публичное управление – հանրային  
կառավարում  
путь сообщения – *см. коммуника-  
ционный путь*  
ресурс – ռեսուրս  
– ресурс для военно-учебных сборов

– ռազմահավաքային ռեսուրս, վարժահավաքային ռեսուրս  
 род – 1. սեր, 2. տեսակ  
 – род войск – զորատեսակ  
 рудно-сырьевой запас – հանքահումքային պաշար  
 саботаж – նենգադուլ  
 своевременная профилактика заболеваний – հիվանդությունների պատեհաժամ կանխարգելում  
 система сбалансированных показателей – հաշվեկշռված ցուցանիշների համակարգ  
 стимулирование рождаемости – ծնե-

լիության խթանում  
 ультиматум – վերջնագիր  
 утечка – արտահոսք  
 – утечка мозгов – ուղեղների արտահոսք, կադրերի արտահոսք  
 хроническая патология – քրոնիկական ախտաբանություն  
 целеуказание мишени – թիրախի նշանացուցում  
 цифровизация – ՏՄ. *ДИГИТАЛИЗАЦИЯ*  
 экономическая самодостаточность – տնտեսական ինքնաբավություն  
 эмиграция – 1. արտագաղթ, 2. վտարանդիություն

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

AI – see *artificial intelligence*  
 armed service – զինված ուժերի տեսակ  
 Armenian self-consciousness – հայկական ինքնագիտակցություն  
 artificial intelligence – արհեստական բանականություն  
 balanced scorecard – հաշվեկշռված ցուցանիշների համակարգ  
 birth rate boosting – ծնելիության խթանում  
 branch – see *service arm*  
 chronic pathology – քրոնիկական ախտաբանություն  
 combat arms – see *service arm*  
 communications – հաղորդակցողի  
 coordination – see *interaction*  
 datum – տվյալ  
 – data adequacy – տվյալների հավաստիություն  
 – data routing – տվյալների երթուղավորում  
 – data validity – see *data – data adequacy*  
 destabilization – ապակայունացում  
 digitalization – թվայնացում

display of authoritarianism – անձնապաշտության դրսևորում  
 drain – արտահոսք  
 – brain drain – ուղեղների արտահոսք, կադրերի արտահոսք  
 economic self-sufficiency – տնտեսական ինքնաբավություն  
 economy militarization – տնտեսության ռազմականացում  
 emigrants – վտարանդիություն  
 emigration – արտագաղթ  
 family institution – ընտանիքի հաստատություն  
 gender – 1. սեր, 2. տեսակ  
 general aim – համանպատակ  
 geosystemic analysis – աշխարհահամակարգային վերլուծություն  
 institutional transformation – հաստատութենական փոխակերպում  
 interaction – 1. փոխազդեցություն, 2. փոխգործություն  
 leakage – արտահոսք  
 legal provision – իրավադրույթ  
 liaison channel – կապուղի  
 link aggregation – փոխանցողիների միակցում

- main aim – see *general aim*  
 military-economic potential – ռազմատնտեսական ներուժ  
 military industry saturation – ռազմարդյունաբերության հագեցվածություն  
 open systems interconnection model – բաց համակարգերի փոխկապվածության մոդել  
 policy – քաղաքականություն  
 – expansionist policy – ծավալապատական քաղաքականություն  
 political regime – քաղաքական վարչակարգ  
 politics – քաղաքականություն  
 – demographic politics – ժողովրդագրական քաղաքականություն  
 population – բնակչություն  
 – increase of population – բնակչության հավելում  
 – rate of population increase – see *population – increase of population*  
 – reinhabitation of population – բնակչության տարաբնակեցում  
 – resettlement of population – see *population – reinhabitation of population*  
 principedom – իշխանապետություն  
 princely state – see *principedom*  
 procedure – ընթացակարգ  
 protocol – 1. արձանագրություն, 2. հաղորդակարգ  
 public management – հանրային կառավարում  
 resource – ռեսուրս  
 – battle assembly resources – ռազմահավաքային ռեսուրս, վարժափակաքային ռեսուրս  
 – ore resource – հանքահումքային պաշար  
 sabotage – նենգադուլ  
 seizing the initiative – նախաձեռնության նվաճում  
 service arm – զորատեսակ  
 state – 1. պետություն, 2. իշխանապետություն  
 – buffer state – բախարգելային պետություն  
 – economic depletion of the state – պետության տնտեսական հյուծում  
 – preparation of the state economy for war – պետության տնտեսության պատրաստում պատերազմի  
 – state building – պետութենաշինություն  
 target – թիրախ  
 – target designation – թիրախի նշանացում  
 – target indication – see *target – target designation*  
 – targeting – see *target – target designation*  
 threat – սպառնալիք  
 – threat isolation – see *threat – threat localization*  
 – threat localization – սպառնալիքի տեղափակում  
 timely prevention of diseases – հիվանդությունների պատեհաժամ կանխարգելում  
 type – տեսակ  
 ultimatum – վերջնագիր



## **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more than 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆՆԱԿ

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ – գլխավոր խմբագրի տեղակալ՝

*Ջ. Դ. Ասատրյան*

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*

Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Զ. Վ. Փիրոյան*

Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Ա. Ջ. Պերրոյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի*

Տեքստերի քարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի,*

*Թ. Դ. Չիլինգարյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի,*

*Տ. Ս. Տիրացույանի*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Սրբագրումը՝ *Ն. Հ. Բաղդասարյան, Գ. Շ. Հարությունյանի*

Լուսանկարչական ապահովումը՝ համացանցային

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆԵՅՈՒ ՖՈՂՈՑ, 56/6, հեռ. 28-54-25

Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Պաշտոնական բլոգ-կայքը՝ <http://razmavaraget.wordpress.com>

Էլ. հասցեն՝ [haykakanbanakmod@gmail.com](mailto:haykakanbanakmod@gmail.com)

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2021 թ.

Թուղքը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:

Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:

Պայմանական տպագրական 10,5 մամուլ:

Տպարանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,

«Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:

Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԼԻՄՈՒՇ» տպարանում

## ՄԱՐՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ ՊՆ ղեկավար կազմին  
և ՀՀ ԶՈՒ-ի բարձրագույն սպայակազմին ներկայացնում է  
Պաշտպանության նորանշանակ նախարար Արշակ Կարապետյանին

Երևան, 2021 թ. օգոստոսի 3



ՀՀ Պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանի  
և ՌԴ Պաշտպանության նախարար, բանակի գեներալ  
Սերգեյ Շոյգուի հանդիպումը

Մոսկվա, 2021 թ. օգոստոսի 11



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ